ԷՋՄԻԱԾԻՆ

1976

Ժ-ԺԱ.

ԺՄ 146



ԼԳ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

հոկտեմբեր - նոյեմբեր

1976

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՈՐԵԼՅԱՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ

ՓԱՌՔ ՄԵԾԱԾ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ՝ ԻՐ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ

(27 սեպտեմբերի 1976 թ.)

ԶԱստված փնտրելու ճանապարհի վրա Մենք գտանք սուրբ Էջմիածինը և Տիրոջ ողորմությամբ 1955 թ. սեպտեմբերի 30-ին Մայր տաճարի մեջ հայոց սուրբ եկեղեցին Մեր համեստ անձը կոչեց հայրապետության պաշտոնին: Այդ օրը Փրկչի Իջման սեղանի առաջ Մենք կատարեցինք հետևյալ ուխտը.

«Տէր Աստուած հարցն մերոց. լեր ինձ օգնական առնել զկամս Քո և ուղղեա զգնացս իմ ի ճանապարհս Քո արդարութեան. լեր ինձ օգնական և մարտակից վասն շինութեան և անսասանութեան սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, վասն լուսաւորութեան և հոգւոյ մխիթարութեան հաւատացեալ ժողովրդեան հայոց և վասն բարօրութեան հայրենեաց մերոց: Եւ Քեզ փառք յաւիտեանս, ամէն»:

Այդ օրից անցան ահա քսան և մեկ տարիներ: Տարիներ աղոթքի, տարիներ լարված աշխատանքի, տարիներ տարակուսանքների, երբեմն ծանր մտահոգությունների, տարիներ հաջողությունների:

Անցնող տարիների ընթացքում Մայր Աթոռիս իրագործումների համար նախ գոհություն երկնային նախախնամության, որի օգնականությունը զգացինք տևապես: Նաև սրտագին շնորհակալություն Մեզ գործակից Մեր հոգևոր եղբայրներին ու աշխարհական անձանց, հատկապես Մայր Աթոռիս առընթեր Գերագույն հոգևոր խորհրդին և ճարտարապետների ու արվես-

տագետների հանձնաժողովին, մեր առատաձեռն բարերարներին և համայն մեր հավատացյալ հարազատ ժողովրդին, որ ի Հայաստան և ի սիլուռս աշխարհի: Երախտագիտություն նաև մեր հայրենի բարեխնամ կառավարության, որի հարգալիր ու հոգատար վերաբերմունքը միշտ վայելել ենք և շարունակում ենք վայելել Մայր Աթոռս և անձամբ Մենք:

Մեզ համար այս անկրկնելի պահին, բարի սրտերից բխած ջերմ խոսքերը ձեր, ուղղյալ Մեր անձին, կմղեն զՄեզ խոնարհ հոգիով ընդունիլ զանոնք, վկայաբերելով մեծ առաքյալի խոսքը՝ «Ինքն Աստուած և Հայր մեր և Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ: Եւ զձեզ ինքն Տէր բազմապատիկն և առաւելս արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամենեսին՝ որպէս և մեք ի ձեզ» (Ա Թես. Գ 11—12):

Վեհափառ Հայրապետը կարդում է Իր շնորհակալության խոսքը հանդիսավոր նիստի ժամանակ

Պարտինք Մեր անկեղծ գոհունակությունը հայտնել մեր հայրենի պետության բարձր պաշտոնատար հարգարժան տիար Սարգիս Գասպարյանին, որի խոսքերը մխիթարական եղան Մեզ և Մայր Աթոռիս համար: Մեր խորագոյն շնորհակալությունն ենք հայտնում նաև խոսք առնող՝ մեր մայր եկեղեցու հոգևոր եղբայրներին և մեր քույր եկեղեցիների բարձրապատիվ ներկայացուցիչներին՝ ի գլուխ Տ. Պիմեն, Տ. Դավիթ և Տ. Բասիլիոս Մար Թոմա Սրբազան Պատրիարքներին, որոնց ներկայությունը այստեղ և նրանց արտահայտած մտքերն ու զգացումները մի անգամ ևս փայլուն վկայությունը հանդիսացան Քրիստոսի եկեղեցու միասնության և քրիստոնեական տիեզերական եղբայրության;

Քսան և մեկ տարիների հովվապետական Մեր գործունեության հանգրվանին, Մենք տակավին զգում ենք զՄեզ աշխատելու Մեր ուժերի լիության մեջ և այսօր, 1976-ի սեպտեմբերի 27-ին, ձեր բոլորի և մեր համայն հավատացյալ ժողովրդի առաջ վերանորոգում ենք Մեր ծառայության ուխտը՝ շարունակելու Մեզ վստահված առաքելությունը՝ նվիրված հայ ժողովրդի կյանքի հոգևոր շինության և մեր սուրբ եկեղեցու պայծառության, թե՛ մեր մայր երկրում՝ Սովետական Հայաստանում, թե՛ հայ սփյուռքի ամբողջ տարածքի վրա: Վերանորոգում ենք Մեր ուխտը շարունակելու Մեր առաքելությունը՝ նվիրված մեր հայրենի պատմական վանքերի և սրբատեղիների վերաշինության, Մեր առաքելությունը՝ նվիրված մեր եկեղեցու ներքին միության ամրապնդման, Մեր առաքելությունը՝ նվիրված հոգևոր կրթության գործին, նպատակ ունենալով մեր եկեղեցին օժտելու հավատավոր, լուսամիտ ու նվիրյալ երիտասարդ սպասավորներով:

Նաև վերանորոգում ենք Մեր ուխտը, նույն հետևողականությամբ շարունակելու Մեր առաքելությունը՝ նվիրված հայրենիք-սփյուռք հարաբերությունների առավել ամրապնդման՝ եկեղեցական գետնի վրա, Մեր առաքելությունը՝ նվիրված արտասահմանի մեր հավատացյալ ժողովրդի կրոնական, կրթական ու մշակութային կյանքի է՛լ ավելի կազմակերպման ու զարգացման: Եվ վերջապես ի Քրիստոս սիրով Մեր նվիրական պարտքը պիտի նկատենք մեր եկեղեցու և Մայր Աթոռիս հետզհետե առավել ծավալուն մասնակցությունը միջեկեղեցական էկումենիկ գործունեության և խաղաղության միջեկեղեցական ու միջազգային շարժման:

Մենք, այսօրվա սպասավորներս մեր մայր եկեղեցու, ժամանակավոր անցորդներ մեր ժողովրդի բազմադարյան պատմության ճանապարհի վրա, կոչված ենք կենդանի ու գործարար կապը հանդիսանալու անցյալի ու ապագայի միջև: Հայաստանյայց եկեղեցին հայ ժողովրդի եկեղեցին է, նրա մայրը ու դաստիարակը և պահապան հրեշտակը բոլոր ժամանակներում: Հայ եկեղեցին նաև հետ այսու միշտ սրբությամբ պիտի պահպանի իր հավատացյալների հոտը մեկ ու անբաժան ու անաղարտ, իր ուղղափառ դավանությամբ, իր ազգային պատմականորեն նվիրագործված ավանդություններով, իր նվիրապետական կազմակերպությամբ ու ինքնագլուխ ղեկավարությամբ: Հայ ազգը, չորրորդ դարի սկզբից քրիստոնեությունը պետական կրոնք ընդունելուց ի վեր, ունի մեկ անբաժան մայր եկեղեցի՝ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, ունի մեկ գերագույն Աթոռ՝ Ամենայն Հայոց Հայրապետությունը ի ս. Էջմիածին: Քրիստոնեական հավատքի վավերականությունը, պատմականությունը և կենդանությունը մեր ժողովրդի գիտակցության մեջ երաշխավորված են ու խորհրդանշված միմիայն մեր ազգային մայր եկեղեցով և աստվածակառույց սուրբ Էջմիածնով, Մայր Աթոռիս՝ մեր եկեղեցու մյուս երեք նվիրապետական-տեղական Աթոռների հետ միության, հաղորդակցության և եղբայրական գործակցության պայմաններում:

Ե դարի պատմագիր Եղիշե վկայում է, թե՝ քրիստոնեական հավատքը հայոց մեջ երբեք չի նմանվել դրսից վերցրած մի զգեստի: Այդ վկայությունը ճշմարիտ է նաև հետագա դարերի համար մինչև մեր օրերը:

Մեր եկեղեցու և ազգի պատմության վերջին մոտ երկու հազար տարիների ընթացքում, սուրբ Ավետարանի լույսի ճառագայթումը ու արտահայտությանց բոլոր ձևերը եղել են ու մնացել ստեղծագործորեն ինքնուրույն: Հայ գիրն ու լեզուն, հայ հոգևոր գրականությունն ու բանաստեղծությունը, հայ դասական ճարտարապետությունն ու քանդակագործությունը, միջնա-

դարյան նկարչությունն ու երաժշտությունը, շաղախված են Քրիստոսի Ավետարանի լույսով ու հանդիսանում են նույնքան վավերականորեն ազգային արժեքներ, ինչքան քրիստոնեական: Հայաստանյայց առաքելական եկեղեցին՝ սուրբ Ավետարանի ոգին ու քրիստոնեական մտածողությունն ու զգայնությունը վավերականորեն արտահայտող ինքնատիպ ոճերից մեկն է հանդիսանում համաքրիստոնեական պատմության հորիզոնին վրա: Այդ ժառանգությունը մենք պետք է պահպանենք և պիտի պահպանենք, որովհետև առանց նրան՝ քրիստոնեությունը պիտի դառնար նվազ հարազատ հայոց հոգիներին:

Այսպես է, որ էկումենիկ հարաբերությանց ճանապարհին, մնալով մեկուտեղ համախոհ եկեղեցիների միության իդեալին և «Աստուծո ժողովուրդ» համաքրիստոնեական մեծ գաղափարին, Հայաստանյայց եկեղեցին ինչպես հազար և հինգ հարյուր տարիներ շարունակ, մնալու է աներեր իր ավանդական կեցվածքին ու մտածելակերպին վրա, իբրև հոգևոր դաստիարակ ու առաջնորդ իր հոտին, հայ ժողովրդի բոլոր զավակներին անխտիր, որոնք բնակվում են Սովետական Հայաստանում և նույնքան թվով և ավելին՝ երկրագնդի տասնյակ այլ երկրներում և, որոնք տարբեր պայմաններում ապրելով հանդերձ, կոչված են պահպանելու իրենց գոյությունը և հոգևոր առաքելությունները իբրև եկեղեցական համայնքներ՝ կրոնական, կրթական և մշակութային գործունեությամբ:

Մենք հավատում ենք էկումենիկ ոգու խորացմանը, Մենք հավատում ենք էկումենիկ շարժման զարգացմանը, Մենք հավատում ենք սուրբ Ավետարանով աշխարհի ոգեկան ու բարոյական կյանքը բարեշրջելու հրամայականին, եկեղեցիների առավել մերձեցումով ու ընդատակալաց գործակցությամբ:

Հակառակ իրար հակասող ու շփոթեցուցիչ բազում երևույթների, կիսորհինք թե մարդկային աշխարհը անհրաժեշտորեն պիտի ընթանա դեպի բարոյական նոր հավասարակշռություն, դեպի ընկերային առավել արդար հաստատակարգ, դեպի ազգությունների միջև առավել փոխըմբռնում, դեպի վերացումը ազգայնական հիվանդագին դրսևորումների և ազգամիջյան թշնամությունների, դեպի ստեղծումը տևական խաղաղ հարաբերությունների և շինարար գործակցությանց պետությունների միջև:

Մեր մտածումն է, որ մենք՝ եկեղեցիների պատասխանատու ղեկավարներս, էկումենիկ մեր գործունեության ճանապարհին, առաջնորդված Քրիստոսի Ավետարանի լույսով, մեր աղոթքներով ու մեր կենդանի գործով պետք է ձգտենք բոլորս ձեռք-ձեռքի տված, մեր նպաստը բերելու մարդկային աշխարհի ոգեկան, բարոյական հեղաշրջման փրկարար գործին, առանց հակադրվելու ընկերային-քաղաքական զարգացումների ընթացքին, այլ միշտ ու ամեն տեղ հանդիսանալով միության օղակ, փոխըմբռնման հաշտարար գետին և անպայմանավոր սիրո առաքյալներ արդի և գալիք ժամանակների մեջ:

«Զի սէր ոչ երբէք անկանի»:

«Զի Աստուած սէր է» և «Խաղաղութեան Աստուած»:

Հայաստանյայց եկեղեցին ի գլուխ ունենալով սուրբ Էջմիածինը, հանուն Քրիստոսի սիրո և խաղաղության Ավետարանի, գիտակից աշխարհի ժողովուրդների լայն զանգվածների դարավոր երազանքներին և հավատարիմ իր սեփական ազգին, անցյալում քանի-քանի անգամներ նահատակված ու հերոսացած հայ ժողովրդի նվիրական զգացումներին ու գերագույն շահե-

րին, պիտի շարունակի նաև հետ այսու տիվ և գիշեր իր աղոթքը բարձրացնելու առ Աստված վասն խաղաղության ամենայն աշխարհի, քույր եկեղեցիների հետ միատեղ իր գործոն մասնակցությունը բերելու ի խնդիր արդարության, ազատության և խաղաղության աստվածառաք պատվիրանների կենսագործման մեր օրերում:

Ավետարանական առաքելության խոր գիտակցությամբ տոգորված, մեր սուրբ եկեղեցին ջերմ եռանդով, հառաջիկա գարնան իր մասնակցությունը պիտի բերի խաղաղության համաշխարհային կրոնական համագումարին, որը տեղի պիտի ունենա Մոսկվայում, նախաձեռնությամբը ռուսաց պրավոսլավ եկեղեցու հովվապետ՝ Նորին Սրբություն Պիմեն Սրբազան Պատրիարքի:

Աշխարհի ժողովուրդների բոլոր ազնիվ իղձերի իրականացման գերագույն գրավականը՝ նրանց խաղաղ գոյակցության և համերաշխ գործակցության իրավիճակի պահպանումն է ու ամրապնդումը, այնպես որ այլևս հնարավոր չդառնան պատերազմները աշխարհավեր ու մահասփյուռ:

«Տուր մեզ Տէր զխաղաղութիւն Քո. զի եկեալ պահեսցէ զմեզ անխռովս և աներկիւղս ի տուէ և ի գիշերի»:

Այո, նաև հայ ժողովուրդը, մեռելներեն հարություն առած մեր ազգը, իր նորաստեղծ արդի ազգային պետականությամբ, կենարար օդի ու ջուրի չափ կարիքն ունի խաղաղ, ապահով ու շինարար կյանքի, ի կենսագործումն իր բոլոր արդար երազանքների, ի կենսագործումն իր Է՛լ ավելի պայծառ ու երջանիկ ապագայի, սովետական եղբայրացած ազգությունների մեծ ու անբաժան միության մեջ:

Իբրև ժողովուրդ ու եկեղեցի, ամեն անգամ որ խոսում ենք խաղաղ, ապահով ու շինարար կյանքի մասին, չենք կարող մեր երախտապարտ զգացումները չարտահայտել ռուս մարդասեր ժողովրդի նկատմամբ, որ նախանամական դեր կատարեց 1828-ին և 1920-ին, վերջնական բնաջնջումից փրկելով դարեր շարունակ ավերված ու մարտիրոսացած Հայաստանը: Այս պատմական ճշմարտությունը Մենք հիշատակում ենք այսօր, մանավանդ, որ 1828-ին, Արևելյան Հայաստանը փրկելու և Ռուսաստանին միացնելու գործում բախտորոշ եղավ հերոսական գործունեությունը Մեր երջանկահիշատակ նախորդներից Ներսես Ե կաթողիկոսի, որի անմոռաց անունը մի անգամ ևս պիտի փառավորենք 1978 թվին, երբ համազգային ոգեկոչումով պիտի նշվի հարյուրհիսունամյակը վերոհիշյալ պատմական ակտի:

Մեր գահակալության քսան և մեկերորդ տարեդարձի այս հանդեսը, Մենք կնկատենք ոչ թե նվիրված Մեր անձին, այլ Հայոց Հայրապետական Աթոռ սուրբ Էջմիածնին և նրա գործունեությանը: Եթե Մայր Աթոռիս իրագործումների այդ շրջանը զուգադիպեց Մեր գահակալության տարիներին, ապա Մենք է, որ գոհություն պետք է տանք բարին Աստուծուն, որ լուսավորեց ու զորացրեց Մեր տկար անձը կատարելու համար Իր կամքը: Մենք պարտինք նաև շնորհակալ լինել բոլոր նրանց, հոգևորականն և աշխարհական անձանց, ովքեր Մայր Աթոռում՝ ազնիվ, անձնվեր ու հավատարիմ Մեր գործակիցները եղան այս քսան և մեկ տարիների ընթացքում: Մեր օրհնությունը բոլորին:

Այս հանդիսավոր պահին չենք կարող Մեր խոսքը ավարտել առանց Մեր հոգու հայացքը սևեռելու դեպի երբեմնի երջանիկ երկիրը՝ Լիբանան, որ ահա մոտ երկու տարիներից ի վեր մատնված է ողբերգական կացության, իբրև հետևանք քաղաքացիական արյունալի հակամարտությունների՝ մահմեդական ու քրիստոնյա արաբ եղբայրական համայնքների միջև:

Խղճի պարտք ենք համարում մի անգամ ևս Մեր ջերմագին աղոթքը դեպի երկինք առաքել, որ Աստուծո ողորմությամբ շուտով վերջ գտնի աղետալի այդ վիճակը և փրկարար խաղաղությունը իջնի Լիբանանի ու նրա աստվածասեր ժողովրդի վրա, որի ծոցում ապրում են նաև բազմահազար հավատացյալները Հայաստանյայց եկեղեցու, այս օրերին նրանք էլ տագնապյալ ու կարոտյալ դրության մեջ, որոնց պարտինք մեր եղբայրական նյութական և բարոյական օգնությունը շարունակել, որի համար Մենք կամենում ենք վերստին մեր հայրապետական կոչը ուղղել ամբողջ մեր բոլոր հայ եկեղեցական համայնքներին:

Արդ, այս հանդեսը երջանիկ առիթ է Մեզ համար ծունկի եկած աղոթելու, հավատքով ու եռանդով աղոթելու, որ Տերը հալեցնի անսասան ու ծաղկյալ պահի առաքելական մեր մայր եկեղեցին, ու հալեցնի պահապան և մարտակից մնա, մեր Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին, բոլոր ժամանակների հավատքի պտուղը և լույսի աղբյուրը մեր հավատավոր ժողովրդի:

Հայ ժողովուրդ, ժողովուրդ մեր սիրեցյալ, ցնծա և ուրախ եղիր, «զի Աստուած ընդ մեզ է». ամեն:



ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ. ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Թույլ տվեք Հայաստանի կառավարության, հայ եկեղեցու գործերի խորհրդի և անձամբ իմ կողմից ջերմորեն շնորհավորել Ձեզ Ձեր գահակալության 20-րդ տարեդարձի առթիվ:

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Սարգիս Գասպարյանը ողջույնի խոսք արտասանելիս

Այս հեղինակավոր ժողովում այսօր լսեցինք Գերագույն հոգևոր խորհրդի ամփոփ զեկուցումը Ձեր քսանամյա ազգային-եկեղեցական գործունեության մասին: Այն ամենը, ինչ մենք լսեցինք և ինչ մենք գիտենք մոտիկից, գալիս է մի անգամ ևս հավաստելու, որ անցած երկու տասնամյակների Ձեր արգասավոր գործունեության ընթացքում Դուք ղեկավարվեցիք

հայ ժողովրդի ու մեր վերածնված հայրենիքի գերագույն շահերով: Քաջ տեղյակ լինելով մեր ժողովրդի ողբերգական ու միաժամանակ հերոսական պատմությանը, Դուք գործեցիք այն գիտակցությամբ, որ երեք հազար տարվա պատմություն ունեցող մեր հնամենի ու քաղաքակիրթ ժողովուրդը, պատմական անօրինակ փորձություններից, մաքառումներից ու հերոսապատումներից հետո, մեր պատմության նորագույն շրջանում, երբ կանգնած էր ժողովուրդների ցանկից իսպառ ջնջվելու սահավոր վտանգի առջև, վերստին վերագտավ իրեն, ոտքի կանգնեց, մեջքը շտկեց, առասպելական Մհերի պես դուրս եկավ իր միայնության քարանձավից և, ունկնդրելով ազգային ու սոցիալական արդարության ձայնին, հաստատորեն ու անվերադարձ հավատով մտավ Սովետական Միության ազատագրված ժողովուրդների մեծ, ամրակուռ ընտանիքի մեջ:

Այժմ հասակ է առել ու ծաղկել մեր հինավուրց Հայաստանը: Ուժեղ է նա իր լեռներով, իր դաշտերով, իր այգեստաններով, իր ժամանակակից արդյունաբերությամբ, մշակույթով, իր գիտությամբ, բայց մանավանդ իր ժողովրդով, քանզի մենակ չէ նա այժմ, այլ իրավահավասար անդամը Սովետական մեծ Միության, որն այժմ աշխարհի ամենաառաջադեմ ու ամենահեղինակավոր պետությունն է:

Եվ Դուք, Ձերդ Սրբություն, գործեցիք այս գիտակցությամբ ու բերեցիք Ձեր նպաստն այս գիտակցությամբ:

Ու գիտենք, որ առաջիկայում էլ պիտի գործեք այն գիտակցությամբ, որ ուր էլ լինենք, ինչ էլ անենք, պիտի աչքի լույսի պես պահենք և ամրապընդենք մեր հինավուրց ու նոր երկիրը, մեր ժողովրդի լավագույն զավակների երազանքը, նրանց երազանքը, ովքեր մաքառեցին ու ընկան ազատության ճանապարհին, որպեսզի հավերժ ապրի ու հարատևի մեր հայրենիքը, մեր ժողովուրդը:

Այսօր, շրջապատված հարյուրավոր երևելի մարդկանցով, որոնք եկել են մեծարելու Ձեզ, կարող եք երջանիկ զգալ Ձեզ այն գիտակցությամբ, որ անցած տարիների ընթացքում անդադրում գործեցիք՝ հանուն ազգության հայության ու վերածնված և բարգավաճող հայրենիքի միասնության, գործեցիք առանց խտրության ու խտրականության, առանց հատվածականության, իբրև Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս **Ամենայն** Հայոց:

Որպես ժամանակակից քրիստոնյա աշխարհի ամենաճանաչված դեմքերից մեկը, Դուք գործեցիք ժամանակակից մարդկությանն առավել հուզող հարցերի գիտակցությամբ և այդ գիտակցությամբ անդադրում քաջալերեցիք խաղաղության, ժողովուրդների բարեկամության ու խաղաղ համագործակցության ջանքերը: Մոսկվայում, Բեռլինում, Պրագայում կամ այլուր, բոլոր համաշխարհային համաժողովներում ու կոնգրեսներում Դուք լսելի դարձրիք հայ ժողովրդի, Սովետական Միության բոլոր ժողովուրդների խաղաղ ապրելու, խաղաղ կառուցելու, խաղաղ ստեղծագործելու ձայնը:

Ավարտելուց առաջ իմ խոսքը, թույլ տվեք կրկին հավաստիացնելու, որ Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատում Ձեր գործունեությունը, և չափազանց ուրախ եմ, որ այժմ Դուք առաջվա պես առողջ եք ու ամուր, լի եռանդով ու կորովով: Սրտանց կամենում եմ Ձեզ, Ձերդ Սրբություն, երկար տարիների քաջառողջ կյանք, երջանկություն ու բարօրություն: Կամենում եմ Ձեր բոլոր գործերի ու նպատակների իրականացում:

Կրկին ընդունեցեք մեր անկեղծ ողջույնը և լավագույն մաղթանքները:



ՍՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ. ՎԼԱԴԻՄԻՐ ԿՈՒՐՈՅԵԴՈՎԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Սովետական Միության Մինիստրների սովետին առընթեր կրոնների գործերի խորհրդի և անձամբ իմ կողմից սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ հայ եկեղեցու Ղեկավարիդ, Ձեր քսանամյա գործունեության առթիվ:

Որպես հայ եկեղեցու հեղինակավոր պետ, Դուք, Ձերդ Սրբություն, ընկալական հեղինակություն եք նվաճել ամբողջ աշխարհի հավատացյալ հայերի կողմից և հանդիսացել մայր երկրի մեծ հայրենասեր, հայտնի Ձեր հասարակական ակտիվ գործունեությամբ՝ հանուն խաղաղության և ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման:

Ձեր ազնիվ հայրենասիրական և խաղաղասիրական գործունեությունն արժանանում է սովետական հասարակայնության և սովետական կառավարության բարձր գնահատանքին:

Կամենում եմ Ձեզ քաջառողջություն և նոր հաջողություններ՝ ի բարօրություն մեր հայրենիքի:

Հարգանք՝

ՎԼԱԴԻՄԻՐ ԿՈՒՐՈՅԵԴՈՎ
ՆԱԽԱԳԱՀ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Մոսկվա,
27 սեպտեմբեր 1976 թ.

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔՍԱՆԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Կարդացված տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի կողմից, 27 սեպտեմբերի 1976 թ.)

1975 թվականի հոկտեմբերին լրացավ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակը:

Այսօր, հոբելյանական այս հանդիսավոր նիստի առիթով, հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի, ինձ վրա նվիրական պարտականություն է դրված՝ համառոտակի, բայց ամբողջական ձևով ներկայացնել Նորին Սրբության գահակալության անցնող քսան տարիների ընթացքում Նրա ծավալած եկեղեցական, միջեկեղեցական, մշակութային, շինարարական, հայրենասիրական ու խաղաղասիրական գործունեության պատկերը:

Հոբելյար Հայոց Հայրապետը ծնվել է 1908 թվականի սեպտեմբերի 20-ին Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում, արհեստավորի բարեպաշտ ընտանիքում: Իր միջնակարգ կրթությունն ստացել է Բուխարեստում: 1931—1936 թվականներին սովորել և ավարտել է Բուխարեստի համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի մանկավարժության բաժինն ու այնուհետև նվիրվել կրթական ու հրապարակագրական աշխատանքների:

1943 թվականի սեպտեմբերի 30-ին ընդունել է հոգևոր կոչում և ընտրվել Ռումինիայի հայոց հոգևոր առաջնորդ: 1943 և 1944 տարիներին հետևել է Բուխարեստի աստվածաբանության ֆակուլտետի դասընթացներին:

1951 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվել Մայր Աթոռ ս. Էջմիածնում և մինչև 1955 թվականը վարել Ռումինիայի թեմի առաջնորդական պաշտոնը:

1955 թվականի սեպտեմբերի 30-ին սուրբ Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանին ընտրում է Ամենայն Հայոց կաթողիկոս:

Նույն թվականի հոկտեմբերի 2-ին Էջմիածնի Մայր տաճարում հայ եկեղեցու 12 արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների ձեռքով կատարվում է Նրա կաթողիկոսական ձեռնադրության, օծման և ապա գահակալության հանդիսավոր արարողությունը:

Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորչի պատմական Աթոռի վրա բազմեց խոր հավատով, հոգևոր-ազգային առաքելության պայծառ գիտակցությամբ:

Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը զեկուցագիրն ընթերցելիս

Հանձին Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցին ունեցավ իր աստվածառաք Հովվապետը, Որն Իր սուրբ Աչը տարածեց բովանդակ հայության վրա ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի ու Իր հոգևոր, ազգային-հայրենասիրական առաքելությունը կատարեց անմնացորդ նվիրումով և բոլորանվեր սիրով դեպի իր Աթոռը, դեպի հայ եկեղեցին և դեպի իր ժողովուրդն ու հայրենիքը:

Անցնող քսան տարիների ընթացքում Հայոց Հայրապետն Իր բարձր անձնավորությունը գրոց հիշատակության արժանի իրագործումներով նույնացրեց Մայր Աթոռի և հայոց վերածնված աշխարհի երազանքների հետ: Նրա ոգեշնչող անձնավորությունից ճառագայթող լույսը ջերմացրել է բովանդակ հայության սիրտը և անքակտելի կերպով կապել Մայր Աթոռ ս. Էջմիածնի ու հայոց մայր երկրի հետ:

Հոբելյար Հայոց Հայրապետը, Իր ոտքերն ամրորեն դրած հայրենի հողի վրա, պայծառացրեց, ծաղկեցրեց Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Նա Իր մեծ ու բարի սրտով հասավ նաև սփյուռքին՝ հովվապետական Իր այցելությունների ժամանակ ամեն տեղ Իր հետ տանելով ս. Էջմիածնի պատգամն ու

օրհնությունը և հայրենիքի կենարար շունչն ու Արարատյան աշխարհի հայրենական քաղցրությունները: Այդ պատգամն ու օրհնությունն անցնող քսան տարիների ընթացքում սփյուռքի հայության գիտակցության մեջ դարձան բյուրեղացած հավատ, ջերմացնող ապրում և առաջնորդող ոգի:

«Մայր Աթոռ ս. Էջմիածին, այսօր է՛ և հավետ պիտի ըլլա, ինչ որ եղած է ի սկզբանե, այսինքն՝ վե՛մ հավատքի, լո՛ւյս հոգիներու և պաշտպա՛ն հայրենեաց», գրում է Հայոց Հայրապետը:

Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյա բեղուն շրջանն ընդգրկեց գործունեության բազում բնագավառներ: Այժմ համառոտակի ուզում ենք կանգ առնել Նորին Սրբության այդ բազմակողմանի գործունեության հիմնական երեսների վրա:

Վեհափառ Հայրապետն Իր գահակալության առաջին իսկ օրերից Իրեն հատուկ գործիմացությամբ և եռանդով ձեռնամուխ եղավ ստեղծելու խաղաղ և առողջ հիմքերի վրա դրված վանական հոգևոր կյանք ու մթնոլորտ: Այդ նպատակով Մայր Աթոռում կազմվեց երեսուն հոդվածներից բաղկացած վանական-միաբանական մի կանոնադրություն, որպեսզի ս. Էջմիածինն իրապես դառնա «կրոնական հաստատություն մը, ուր ի Քրիստոս սիրով միաբանած հոգևորականներ ապրին համայնական կյանքով, ուխտած ըլլալով անձնվիրաբար ծառայելու Հայաստանյայց առաքելական եկեղեցիին և Մայր Աթոռ ս. Էջմիածնին, ժուժկալության, աղքատության ու անպայման հնազանդության հայրապետահաստատ կանոններուն համաձայն», գրում է Վեհափառ Հայրապետը:

Այսօր, այս երջանիկ հոբելյանի հանգրվանին, ուրախ ենք արձանագրելու, որ Հայոց Հայրապետը կարողացավ Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին ներշնչել հոգևոր կոչման և ազգային առաքելության զգացում, ս. Էջմիածնի համար ապրելու և գործելու գաղափարական գեղեցկություն:

Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանում Նրա սուրբ Աջով եպիսկոպոսական աստիճան են ստացել հետևյալ 36 եպիսկոպոսները.

1. տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալստյան (պատրիարք Կ. Պոլսի հայոց).
2. տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան.
3. տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան.
4. տ. Հայրիկ արքեպիսկոպոս Ասլանյան.
5. տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյան.
6. տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայան.
7. տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյան.
8. տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյան.
9. տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան.
10. տ. Շահե արքեպիսկոպոս Ամեմյան.
11. տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյան.
12. տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան.
13. տ. Եզնիկ եպիսկոպոս Ազնավուրյան.
14. տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյան.
15. տ. Շավարշ եպիսկոպոս Գուլումճյան.
16. տ. Զգոն եպիսկոպոս Հակոբյան.
17. տ. Գնել եպիսկոպոս Ծերեճյան.
18. տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյան.
19. տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյան.
20. տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան.

21. տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյան.
22. տ. Վահան եպիսկոպոս Տերյան.
23. տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյան.
24. տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյան.
25. տ. Զավեն եպիսկոպոս Չինչինյան.
26. տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճյան.
27. տ. Շահան եպիսկոպոս Սվանյան.
28. տ. Գյուտ եպիսկոպոս Նագգաշյան.
29. տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյան.
30. տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյան.
31. տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյան.
32. տ. Հմայակ եպիսկոպոս Ինդոյան.
33. տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյան.
34. տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյան.
35. տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան.
36. տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյան:

Եպիսկոպոսաց սույն ցանկից վախճանվել են.

1. տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան.
2. տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյան.
3. տ. Եզնիկ եպիսկոպոս Ազնավուրյան.
4. տ. Պարգև եպիսկոպոս Վրթանեսյան.
5. տ. Շավարշ եպիսկոպոս Գույումճյան.
6. տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյան.
7. տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան:

Վեհափառ Հայրապետը, ինչպես տեսնում ենք, հայ եկեղեցին օժտեց նորապսակ իշխանավորներով՝ հանուն հայ եկեղեցու առաքելության բարձրացման նաև մե՛ր օրերին և ի պայծառություն մեր ժողովրդի հոգևոր սպասի:

Վեհափառ Հայրապետն Իր գահակալության ընթացքում բախտավոր եղավ Իր շուրջն ունենալու, որպես Գերագույն հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամներ, որպես մերձավոր գործակիցներ, թե՛ հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ և թե՛ հայրենաբնակ վաստակաշատ, անվանի մտավորականներ, որոնք իրենց արտագին մասնակցությունը բերեցին Հայոց Հայրապետի եկեղեցաշեն ու հայրենանվեր իրագործումներին:

Գերագույն հոգևոր խորհրդի համալրված ներկա կազմն է հետևյալը.

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյան.
Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան.
Տ. Շահե արքեպ. Անեմյան.
Տ. Հուսիկ եպս. Սանթուրյան.
Դոկտ.-պրոֆ. Առաքել Առաքելյան.
Ակադեմիկոս, դոկտ.-պրոֆ. Արարատ Ղարիբյան.
Դոկտ.-պրոֆ. Սարգիս Մելիքսեթյան.
Դոցենտ Հովհաննես Թոփուզյան:

Գերագույն հոգևոր խորհրդի նիստերին մասնակցում են նաև, խորհրդակցական ձայնով, ի պաշտոնե, Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը և Միջ-

եկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին Գերագույն հոգևոր խորհրդին առընթեր գործել է միշտ Վերաստուգիչ հանձնաժողով, որի կազմում են այժմ.

Տ. Նարեկ եպս. Շաքարյան.

Եփրեմ Ալեքսանյան.

Բարսեղ Թաշճյան:

Վերջերս Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Գերագույն հոգևոր խորհրդին առընթեր կազմվեց նաև Իրավագիտական խորհրդատու մարմին՝ հետևյալ կազմով.

Դոկտ. Վազգեն Հակոբյան.

Դոցենտ Մակիչ Ուզունյան.

Դոկտ.-պրոֆ. Գևորգ Խոլոպյան:

Վերջին քսան տարիների ընթացքում շինարարական աշխատանքները ղեկավարել է, Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների գիտական հանձնաժողովը, որի կազմում են.

Դոկտ.-պրոֆ. Վարազդատ Հարությունյան (նախագահ).

Ակադեմիկոս, նկարիչ Գրիգոր Խանջյան.

Դոկտ.-պրոֆ. Կարո Ղաֆադարյան.

Դոկտ.-պրոֆ. Կոստանդին Հովհաննիսյան.

Ճարտարապետ Բաղդասար Արզումանյան.

Ինժեներ Կոստանդին Ալթունյան.

Ճարտարապետ Արծրուն Գալինյան:

Կարևոր նշանակություն ունեցան նաև Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին Մայր Աթոռում զանազան առիթներով գումարված ազգային-եկեղեցական և եպիսկոպոսաց ժողովները:

Վեհափառ Հայրապետն Իր ուշադրությունը կենտրոնացրեց նաև ներքին թեմերի վերակազմակերպման աշխատանքների վրա: Նրա անմիջական հսկողության և տարած հետևողական աշխատանքների շնորհիվ կարելի եղավ առավել կազմակերպված, բնականոն և արդյունավետ կյանք ստեղծել ներքին բոլոր թեմերում:

Այսօր Հայաստանի սահմաններից ներս ունենք երկու պատմական թեմեր՝ Արարատյան և Շիրակի, որոնք իբրև կենտրոն ունեն Երևան և Լենինական քաղաքները: Հայաստանի սահմաններից դուրս ունենք Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի թեմերը:

Բոլոր թեմերն ունեն իրենց թեմական առաջնորդները, բոլորն էլ Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ, ունեն իրենց թեմական խորհուրդներն ու եկեղեցական վարչությունները, որոնք հավատավոր և նվիրյալ քահանաների համագործակցությամբ ղեկավարում են թեմերի եկեղեցական, հոգևոր կյանքը՝ Վեհափառ Հայրապետի օրհնության ներքո:

Ինչպես Մայր Աթոռում, այնպես էլ ներքին թեմերում, Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ, հաստատվել է վարչա-տնտեսական կարգ ու կարգապահություն, որ գործադրվում է ճշգրտությամբ և բարեխղճությամբ: Սրանով էլ բացատրվում է Մայր Աթոռի և ներքին թեմերի ֆինանսական եկամուտների աճը:

Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանում ավելի քան երբեք

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ԳԱՀԱԿԱԼՆԵՐԻ, ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ՈՒ ԱՅԼ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

ՊՈՒՇԿԻՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ, Տ. ՊԻՄԵՆ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՎ Տ. ԴԱՎԻԹ Ե ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻ ԺԱՄԱՆԱԿ ՎԵՀԱՐԱՆԻ ԴԱՀԼԻԶՈՒՄ

ամրապնդվել, ստեղծել է կապը Մայր Աթոռի և հայ եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռների ու արտասահմանյան թեմերի միջև:

Մայր Աթոռի և մեր ազգային եկեղեցական թեմերի փոխհարաբերությունը Վեհափառ Հայրապետին շահագրգռող կենտրոնական խնդիրներից մեկն է եղել, որովհետև այդ փոխհարաբերությամբ էլ բնորոշվել է Հայաստանյայց եկեղեցու մեկությունը և մեր ազգային-եկեղեցական կյանքի միասնությունը:

Այսօր, և մանավա՛նդ այսօր, Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ և նրա տիրախնամ թեմերի անմիջական գործակցությամբ, հոգևոր, ազգային, հայրենասիրական մեծ ու վճռական առաքելություն ունի կատարելիք հայ ժողովրդի կյանքում:

Հայ եկեղեցու արտասահմանյան թեմերն են. Ատրպատականի թեմ (կենտրոն՝ Թավրիզ), Թեհրանի թեմ (կենտրոն՝ Թեհրան), Սպահանի թեմ (կենտրոն՝ Նոր Ջուղա), Եգիպտոսի թեմ (կենտրոն՝ Կահիրե), Արևմտյան Եվրոպայի թեմ (կենտրոն՝ Փարիզ), ԱՄՆ-ի արևելյան թեմ (կենտրոն՝ Նյու-Յորք), ԱՄՆ-ի արևմտյան թեմ (կենտրոն՝ Լոս-Անջելոս), Հարավային Ամերիկայի թեմ (կենտրոն՝ Բուենոս-Այրես), Իրաքի թեմ (կենտրոն՝ Բաղդադ), Հնդկաստանի թեմ (կենտրոն՝ Կալկաթա), Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմ (կենտրոն՝ Սիդնեյ), Ռումինիայի և Բուլղարիայի միացյալ թեմեր (կենտրոններ՝ Բուխարեստ և Սոֆիա), Հունաստանի թեմ (կենտրոն՝ Աթենք) և Անգլիայի հայրապետական պատվիրակությունը:

Արտասահմանի մեր թեմերը նույնպես ունեն իրենց թեմական առաջնորդները՝ բոլորն էլ Մայր Աթոռի միաբաններ, անձնդիր և քաջ հովիվներ, ունեն թեմական կազմակերպություններ, համաձայն իրենց կանոնագրությունների: Թեմական առաջնորդներն ու թեմական կազմակերպությունները չափազանց շնորհակալ գործ են կատարում սփյուռքի պայմաններում մեր ժողովրդի հոգևոր, ազգային կյանքում, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր իշխանության և օրհնության ներքո:

Վեհափառ Հայրապետն Իր գահակալության առաջին իսկ օրերից հղացավ, կազմեց և գործադրության դրեց հայրենի մեր բազմաթիվ վանքերի և եկեղեցիների վերականգնման ու վերանորոգման մեծ ծրագիրները, որոնք քայլ առ քայլ կենսագործվեցին:

Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռին առընթեր կազմված հայ անվանի ճարտարապետներից բաղկացած ճարտարապետական հանձնաժողովը գիտական հեղինակությամբ, ինքնաբուխ նվիրումով և մեծ սիրով իր վրա վերցրեց Մայր Աթոռի, պատմական վանքերի և եկեղեցիների շինարարական ու վերանորոգչական աշխատանքների ընդհանուր վերահսկողությունը՝ մարմին տալու համար շինարար և շինող Հայրապետի ծրագրերին: Այդ աշխատանքների շնորհիվ է, որ այսօր Մայր Աթոռը ստացել է իր արժանի շուքն ու բարեզարդությունը, փառավոր տեսքը: Այդ շինարարական աշխատանքների շնորհիվ է, որ վերանորոգվեցին կամ վերակառուցվեցին և վերազարդարվեցին առաջին հերթին Մայր տաճարը, Նոր Վեհարանը, Հին Վեհարանը, միաբանական սեղանատունը, Ղազարապատը, մայրավանքի ողջ շրջափակը, որտեղ և կառուցվեց ուխտի և աղոթքի Հայ նահատակաց հուշարձանը, վերակառուցվեցին նաև մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր և եկեղեցիներ, ինչպիսիք են ս. Հռիփսիմեն, ս. Գայանեն, ս. Ծողակաթը, Խորվիրապը, ս. Գեղարդ վանքը, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, Բջնու և Սիսիանի եկեղեցիները, Դարալագյազի ս. Խաչը, Երևանի ս. Զո-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ռավոր եկեղեցին, Լենինականի, Կիրովականի, Ստեփանավանի, Մոսկվայի, Թբիլիսիի, Բաքվի, Ռոստովի հայոց եկեղեցիները:

Շինարարական այս ձեռնարկումների մեջ հիշատակության արժանի գործ հանդիսացավ Արագածի լանջերին, Բյուրական գյուղում, «Հայկաշէն» Հայրապետանոցի կառուցումը, որի հողամասը 1969 թվականին հայրենի իշխանությունը սիրով տրամադրեց Հայոց Հայրապետին:

Այստեղ մասնավոր կարևորությամբ պետք է արձանագրել նաև Երևանի առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցու հիմնական վերակառուցումը, որն իր հայեցի ոճով համահնչուն է դարձել մեր մայրաքաղաքի ճարտարապետական կերպարին:

Ծուրջ քսան տարի է, որ առանց ընդհատման այսպես շարունակվել են շինարարական, վերանորոգչական աշխատանքները Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ, Հայրապետ, Որի «կյանքի նպատակն իսկ է եղել» վերաշինությունը մեր պատմական կոթողների, որպեսզի «երազը անգամ մը ևս իրականություն դառնա», որովհետև Հայոց Հայրապետը քսան տարի է, «սկսած է շինել, ինչ որ անցյալի մեջ չար ձեռքեր քանդեցին դարեր և դարեր շարունակ»:

Շինարարական վերոհիշյալ աշխատանքների զգալի մասը կատարվել է արտասահմանից ստացված նյութական հատկացումներով և բացառիկ նվիրատվություններով:

Այստեղ առաջին հերթին պետք է հիշել Մայր Աթոռի հանգուցյալ մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանին և նրա արդար անունը կրող «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը, ինչպես նաև առանձին անհատ բարերար հավատացյալներ, որոնք իրենց նյութական հատկացումներով օժանդակեցին Վեհափառ Հայրապետի շինարարական լայն ծրագրերի իրականացմանը: Երախտագիտությամբ պետք է հիշել Մայր Աթոռի հետևյալ բարերարների անունները.

Միացյալ Նահանգներից

Ալեքս Մանուկյան, Հայկ Գավուքճյան, Էդվարդ Մարտիկյան, Պետրոս և Հմայակ Սարաֆյաններ, Տատուր Տատուրյան, Հերրի Թաթոսյան, Ստեփան Տեր-Գրիգորյան, Հերրի Բըրտ Մովսիսյան, Հովակիմ Մուրադյան:

Ֆրանսիայից

Նուրհան Ֆրենկյան, Արծրուն Զրբաշյան, Մուշեղ Ծիերճյան, Նապոլեոն Պուլլուքյան, Գևորգ Պագրրճյան, Կարպիս Զրբաշյան, Կարպիս Ծնգըտըրյան, Մուշեղ Պետրոսյան:

Անգլիայից

Սարգիս Քյուրքճյան, Հռիփսիմե Ռոզ-Թրիք, Պետրոս Ալեքսանյան, եղբայրներ Գևորգ և Հովհաննես Քյուրքճյաններ, Կարո Գրիգորյան, Գևորգ Թահտա, Թորոս Պարսամյան:

Իտալիայից

Երվանդ Հյուսիսյան, Ստեփան Սրապյան, եղբայրներ Հայկ և Թորգոմ Ղազարոսյաններ ու Օննիկ Մանուկյան:

Արգենտինայից

Եղբայրներ Հովհաննես և Սարգիս Տիարպեքիրյաններ, Գևորգ Սարաֆյան, Տիգրան Մյուրեքյան, Կոպեռնիկ Սաֆարյան:

Ադիս-Աբեբայից

Մարտիրոս Տարագճյան և Լևոն Երզնկացյան:

Հալեպից

Սուրեն Գալենտեր:

Սիդնեյից

Հարություն Ակինյան:

Ժենևից

Կարապետ Ղազարյան:

Բեյրութից

Գեղամ Տանձիկյան, Սարգիս Սարգիսյան, Երվանդ Դեմիրջյան և Կրոնասեր տիկնանց միություն:

Վիեննայից

Ազատ Վարդյան:

Բրազիլիայից

Գառնիկ Բազարյան:

Մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև այն բազմահարյուր հավատացյալներին, թե՛ ներքին թեմերից և թե՛ սփյուռքից, որոնք թեև համեստ, բայց իրենց սրտաբուխ նվերներով սատարեցին ս. Էջմիածնի պայծառությանը:

Վեհափառ Հայրապետի գործունեությունը Մայր Աթոռում ընդգրկում է ընդարձակ հորիզոններ: Նրա ջանքերով կազմակերպվեցին Մայր Աթոռի դիվանատունն ու տնտեսական-ֆինանսական բաժինները, որոնց բարեկարգ գործունեությունը տվեց իր բարի պտուղները: Նորին Սրբությունն Իր անմիջական հսկողության ներքո հաստատեց խնայողության ռեժիմ և գործիմացությամբ հետևեց Մայր Աթոռի բյուջեի գործադրությանը՝ ուշադիր լինելով, որ Մայր Աթոռի յուրաքանչյուր կոպեկը ծառայի իր նպատակին:

Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ Մայր Աթոռում բացվեցին ատաղձագործարանը, ոսկերչական և երկաթագործական արհեստանոցները, ասեղնագործության աշխատանոցը, դերձակատունը, մոմաձուլարանը, սըրբազան նկարչության վերանորոգման արվեստանոցը, Մայր Աթոռի փոխադրական միջոցների կենտրոնը (գարաժ)՝ 28 ավտոմեքենաներով: Այսպիսով, Մայր Աթոռը քսան տարիների ընթացքում դարձավ տնտեսա-ֆինանսական մի լուրջ հաստատություն՝ իր բազմաճյուղ և ընդարձակ գործունեությամբ: Բավական է արձանագրել, որ այսօր Մայր Աթոռի պաշտոնեության, արհեստավորների և աշխատավորության թիվը 160 է:

Որպեսզի կարողանանք թվերով արտահայտել Մայր Աթոռի ֆինանսական կացությունը, անհրաժեշտ ենք համարում արձանագրել այստեղ, որ 1975 թվականին Մայր Աթոռի եկամուտը եղել է 765 հազար ռուբլի, 1956 թվականի 240 հազար ռուբլու դիմաց:

Մայր Աթոռի եկամուտների գլխավոր աղբյուրներն են եղել մասնավորապես Մայր Աթոռը, Արարատյան հայրապետական թեմը և ս. Գեղարդ վանքը: Մայր Աթոռը զգալի եկամուտներ է ունեցել նաև Լենինականի, Վրաստանի և Ադրբեջանի թեմերից:

Մայր Աթոռի ընթացիկ ծախսերի բյուջեն հարյուր տոկոսով փակվել է վերոհիշյալ ներքին եկամուտներով: Մայր Աթոռի շինարարական բացառիկ ծրագրերը միայն իրականացվել են արտասահմանի մեր բարերարների կարևոր նվիրատվություններով:

Ուրախ ենք նաև հայտնելու, որ վերջին քսանմեկ տարիների ընթացքում արտասահմանից ստացված մեծագումար և փոքրագումար նվիրատվությունների շնորհիվ այսօր Մայր Աթոռը «Ունիոն դե բանկ Սուիս» դրամատան

մեջ ունի մի կարևոր անձեռնմխելի գումար, որի տոկոսները Մայր Աթոռն օգտագործում է տարեկան իր բյուջեն հավասարակշռելու համար:

Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանում հոգևոր ճեմարանը դարձավ Նրա հայրապետական սրտին մոտիկ և հարազատ հաստատությունը: Հայոց Հայրապետն է գլխավորել միշտ հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը: Հոգևոր ճեմարանի աշխատանքները տվեցին իրենց բարի արդյունքները: Անցնող քսան տարիների ընթացքում հոգևոր ճեմարանը տվել է 63 շրջանավարտներ, որոնցից 56-ն ընդունել են հոգևոր կոչում: Այսօր Մայր Աթոռում և ներքին ու արտասահմանյան թեմերում պաշտոնավարում են հոգևոր ճեմարանից շրջանավարտ 5 եպիսկոպոսներ, 16 վարդապետներ, 17 սարկավագներ և 18 քահանա հայրեր:

Վեհափառ Հայրապետը հայ եկեղեցու վերականգնման աշխատանքներում և հայ ժողովրդի կրոնա-բարոյական դաստիարակության գործում պատասխանատու դեր է վերապահել Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին, որը Նրա գահակալության օրոք ևս, ավելի քան քսան տարի, անընդմեջ հրատարակվում է:

Ամսագիրը Հայոց Հայրապետության կենդանի խոսքն է՝ ուղղված անխտիր Մայր Աթոռի հարազատ բոլոր զավակներին:

«Էջմիածին» ամսագիրը հանդիսացել է Հայոց Հայրապետի քսան տարիների գահակալության սրտառուչ ճիգերի, կառուցումների, հաջողությունների կենդանի օրագրությունը: Ամսագրի առաջին էջերը միշտ զարդարել են հայրապետական կոնդակները, կրոնաշունչ և հայրենաբույր պատգամներն ու ելույթները, հովվապետական ուղևորությունների նկարագրությունները: Ամսագրի էջերում շոշափված և լուսաբանված են մեր ազգային-եկեղեցական կյանքի բազմաթիվ ու բազմապիսի հարցերը:

1960 թվականին Մայր Աթոռն օժտվեց իր սեփական տպարանով, որը սրտագին նվերն էր ԱՄՆ-ի հայոց թեմի: Այդ տպարանում հրատարակվում են «Էջմիածին» ամսագիրը, Մայր Աթոռի այլ հրատարակություններ, այդ թվում՝ Մայր Աթոռի օրացույցը: Հրատարակվել են նաև ալբոմներ, «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերի մատենագիտությունները, Հայոց Հայրապետի արտասահմանյան ինն ուղևորությունների գրքերը, «Վազգեն Ա Հայրապետ Հայոց» շարքի երեք հատորները և այլ հրատարակություններ:

Այստեղ ամենայն կարևորությամբ և երախտագիտությամբ պետք է արձանագրել Մայր Աթոռի տպարանից 1969 թվականին արևելահայերեն նոր թարգմանությամբ լույս տեսած «Հորս Ավետարաններ»-ի և «Գործք առաքելոց»-ի հրատարակությունը 10.000 օրինակ տպաքանակով և ապա 1975 թվականին Նոր Կտակարանի արևելահայերեն ամբողջական թարգմանության հրատարակությունը՝ դարձյալ 10.000 օրինակ տպաքանակով:

Վեհափառ Հայրապետի հրամանով Մայր Աթոռում արևմտահայ գրական լեզվով թարգմանվեց նույնպես Նոր Կտակարանն ամբողջությամբ, որը շուտով տպագրության կհանձնվի Երուսաղեմի հայոց սրբոց Հակոբյանց վանքի տպարանում:

Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ և հսկողությամբ կատարված հրատարակչական մեծ նվաճում էր նաև հայերեն և օտար լեզուներով «Հայկական եկեղեցիներ» (1970 թ.) և «Հայկական խաչքարեր» (1973 թ.) գեղարվեստական բարձր ճաշակով տպագրված ալբոմների հրատարակությունը՝ յուրաքանչյուրը 12.000 օրինակ տպաքանակով:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին Մայր Աթոռում

մեծ հանդիսությամբ և համազգային շուքով կատարվեցին եկեղեցական, մշակութային, ազգային հիշարժան մեծ իրադարձությունների հոբելյանները, ինչպիսիք էին՝ 1962 թվականին ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, Կ. Պոլսի պատրիարքության հաստատման 500-ամյակը, 1965 թվականին՝ Ապրիլյան եղեռնի 50-ամյակը, 1966 թվականին՝ Ոսկանյան Աստվածաշնչի հրատարակության 300-ամյակը, 1968 թվականին՝ Սարդարապատի հերոսամարտի 50-ամյակը, նույն թվականին՝ Երևանի հիմնադրության 2750-ամյակը, 1969 թվականին՝ Կոմիտաս վարդապետի ծննդյան 100-ամյակը, 1970 թվականին՝ Առաքել վարդապետ Դավրիժեցու մահվան 300-ամյակը, Ներսես Աշտարակեցու ծննդյան 200-ամյակը, Խրիմյան Հայրիկի և հայր Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակները, 1971 թվականին՝ Մայր Աթոռի տպարանի հաստատման 200-ամյակը, 1973 թվականին՝ ս. Ներսես Շնորհալի Հայրապետի մահվան 800-ամյակը, 1975 թվականին՝ Ամենայն Հայոց Հայրապետության կիլիկյան շրջանի 600-ամյա պատմության փառքի ոգեկոչումը և այլ հոբելյաններ:

Վեհափառ Հայրապետի մշակութային գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում նաև Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստի թանգարանների կազմակերպումն ու հարստացումը, ձեռագրերի, հնատիպ գրքերի, սրբանկարների, հին դրամների, հայկական ասեղնագործությունների, եկեղեցական արծաթե սպասների, գորգերի և հնագիտական ու գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող այլ իրերի ձեռքբերումը և պահպանումը:

Վեհափառ Հայրապետի 20-ամյա բեղմնավոր գործունեության մեջ առանձին տեղ է գրավում աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման գործին կամ խաղաղության դատին Նրա բերած մասնակցությունը:

Խաղաղության ի նպաստ Նորին Սրբության կատարած աշխատանքները լիովին համապատասխանում են մեր սուրբ եկեղեցու ոգուն, մեր ժողովրդի և հայոց վերածնված հայրենիքի կենսական շահերին: **«Քրիստոնեությունը էապես սիրո և խաղաղության մի առաքելություն է մարդկային կյանքի և հասարակության մեջ, իսկ Քրիստոս ինքը՝ Իշխան արդարության և Արեգակ արդարության: Հետևաբար ի՞նչ կա ավելի հարազատ Քրիստոսի եկեղեցու և Հայոց Հայրապետի համար, քան աշխարհի խաղաղության դատի պաշտպանությունը և ամրապնդումը բարեկամության՝ ազգերի և պետությունների միջև... խաղաղությունը կյանքի առողջ և ստեղծարար ուժերի ներդաշնակորեն զարգացող գոյավիճակն է արդարության լույսի տակ: Մեր օրերում, երբ մարդու հանճարը թռիչք է առած նվաճելու համար նյութական տիեզերքը ամբողջ մինչև արև՝ աղբյուրը լույսին, ինչքա՜ն հրաշալի պիտի լիներ տեսնել հաղթանակը նույն մարդու բարոյական հանճարին, նվաճումը արդարության և խաղաղության լույսին, որ դարեր առաջ շողաց հավատքի և հույսի բարձունքներից՝ աշխարհին բերելով պատգամը Աստուծո. «Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»,** պատգամում է Հայոց Հայրապետը:

Անցնող քսան տարիների ընթացքում ահա այս հավատով և ոգով Հայոց Հայրապետն Իր ձայնը բարձրացրեց միջազգային համաժողովների և համագումարների բեմերից՝ Երևանում, Մոսկվայում, Պրագայում, Հելսինկիում և Բեռլինում՝ ի խնդիր խաղաղության, ի խնդիր զինաթափման, ի խնդիր ժողովուրդների բարեկամության և պետությունների խաղաղ գոյակցության:

Միջազգային այդ բեմերից Հայոց Հայրապետը, խոսելով խաղաղության մասին, չէր մոռանում նաև հիշել ու դատապարտել 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը՝ հայկական Ապրիլյան եղեռնը, որին զոհ գնաց շուրջ երկու միլիոն հայություն, ցեղասպանություն, որը դուռ բացեց հետագա զարհուրելի այլ ցեղասպանությունների:

Հայոց Հայրապետը 1962 թվականին Իր խաղաղասիրական գործունեության համար պարգևատրվեց Ստոկհոլմի Խաղաղության պաշտպանության կոմիտեի «Ժոլիո Կյուրի» պատվանշանով:

Վեհափառ Հայրապետի գահակալության տարիներին շարունակվեցին պահպանվել և առավել սերտացվեցին հայ եկեղեցու և քույր եկեղեցիների միջև քրիստոնեական եղբայրական կապերն ու համագործակցությունը մեր նախնյաց ոգով և օրինակով:

Արդի ժամանակներում եկեղեցական կյանքը հատկանշվում է միջեկեղեցական հարաբերությունների աշխուժացման, եկեղեցիների մերձեցման, համագործակցության և հանուն ապագա եկեղեցական միության կատարված շնորհակալ ճիգերով:

Հանրահայտ է հայ եկեղեցու ավանդական լայնախոհությունը և հարգանքը դեպի քույր եկեղեցիները: Այս ոգով մեր եկեղեցին Հայոց Հայրապետի գահակալության քսան տարիների ընթացքում, Նրա հրահանգով և օրհնությամբ, մասնակցեց ԱՄՆ-ի ազգային եկեղեցիների համաժողովին (1957 թ.), Եկեղեցիների համաշխարհային խորհրդի երրորդ (1961 թ., Նյու-Դելհի), չորրորդ (1968 թ., Ուփսալա) և հինգերորդ (1975 թ., Նայրոբի) համագումարներին, համաօրթոդոքս եկեղեցիների Հոոդոսի ժողովին (1962 թ.), Վատիկանի երկրորդ ժողովին (1963—1965 թթ.) Մոնրեալի Հավատո և կարգի չորրորդ ժողովին (1964 թ.), Արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի Ադիս-Աբեբայի համագումարին (1965 թ.) և այլն:

1962 թվականին Հայաստանյայց առաքելական եկեղեցին Հայոց Հայրապետի նախաձեռնությամբ անդամակցեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդին: Վերջին քսան տարիների ընթացքում քույր եկեղեցիների պետերի և Հայոց Հայրապետի միջև կատարվեցին փոխայցելություններ էկումենիկ ոգով, որոնք առավել ևս սերտացրեցին հայ եկեղեցու եղբայրական կապերը քույր եկեղեցիների հետ: Այս ոգով Մայր Աթոռ այցելեցին, ի գլուխ եկեղեցական պատվիրակությունների, ռուս պրավոսլավ եկեղեցու պետեր՝ Նորին Սրբություններ Տ. Ալեքսի և Տ. Պիմեն Պատրիարքները, վրաց օրթոդոքս եկեղեցու պետեր՝ Նորին Սրբություններ Տ. Մելքիսեդեկ Գ, Տ. Եփրեմ Բ և Տ. Դավիթ Ե Սրբազան Պատրիարք-կաթողիկոսները, Ռումինիայի Նորին Սրբություն Տ. Ժուստինիան Պատրիարքը, Բուլղարիայի Նորին Սրբություններ Տ. Կիրիլ և Տ. Մաքսիմ Պատրիարքները, Վատիկանի Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ Նորին Գերազանցություն կարդինալ Ժան Վիլլեբրանդը, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարքության ներկայացուցիչ Էմիլիանոս Դիմիտրիադիս միտրոպոլիտը, ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Ամբա Շենուդա Գ-ը, Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հույն ուղղափառ եկեղեցու Պատրիարք Նորին Սրբություն Նիկոլաոս Զ-ը, Լիբանանի հայ կաթողիկե համայնքի Պատրիարք Նորին Ամենապատվություն Իգնատիոս Պետրոս Պաթանյանը, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղարներ դոկտ. Վիսերտ Հուֆթը և դոկտ. Էոժեն Բլեյկը, անգլիկան, մալաբար և եթովպական քույր եկեղեցիների բարձրաստիճան պատվիրակություններ, ԱՄՆ-ի եկեղե-

ցիների ազգային խորհրդի նախագահ դոկտ. Միլլերը, Հեսսեն Նասսաու նահանգի (ԳԴՀ) ավետարանական-լութերական համայնքի նախագահ դոկտ. Մարտին Նիմյուլլերը, ինչպես նաև Միջին Արևելքի հայ ավետարանական համայնքների նախագահ վերապատվելի Հովհ. Ահարոնյանը և բազմաթիվ այլ բարձրաստիճան եկեղեցականներ:

Այս տարիներին Հայոց Հայրապետը եղբայրական ջերմ հարաբերություններ հաստատեց նաև կրոնական այլ համայնքների հոգևոր պետերի, այդ թվում՝ Անդրկովկասի և Ադրբեջանի մուսուլմանների կրոնական վարչության պետ Շեյխ-Ուլ Իսլամ Հաքիմզադե Դեքիրովի, Միջին Ասիայի Շեյխ-Ուլ-Իսլամ Բաբախանովի, ինչպես նաև Հորդանանի, Դամասկոսի մահմեդական կրոնապետների հետ:

Իր հերթին Հայոց Հայրապետը պաշտոնական այցելություններ տվեց ռուս պրավոսլավ եկեղեցուն, վրաց օրթոդոքս եկեղեցուն, անգլիկան, ռումին, բուլղար, ղպտի, մալաբար և այլ քույր եկեղեցիների հոգևոր պետերին:

Այստեղ մասնավոր կարևորությամբ ցանկանում ենք արձանագրել հայ առաքելական և ռուս պրավոսլավ եկեղեցիների եղբայրական հարաբերությունների ամրացումն ու երկու հավատացյալ ժողովուրդների դարավոր խարեկամության ամրապնդումը Վեհափառ Հայրապետի գահակալության օրերին: Հայոց Հայրապետը ռուսաց պատրիարքության սիրալիր հրավերով զանազան առիթներով այցելեց Մոսկվա, Զագորսկ և Կիև, ռուս պրավոսլավ եկեղեցու կրոնական կենտրոնները, և սրտագին հանդիպումներ ունեցավ երջանկահիշատակ Տ. Ալեքսի Պատրիարքի և այժմյան Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենի հետ:

Այստեղ գոհունակությամբ արձանագրում ենք նաև Երուսաղեմի հայոց տ. Եղիշե պատրիարքի այցելությունը 1974-ին Ամենայն Հայոց Հայրապետի հետ Մոսկվա, Զագորսկ և Կիև, ինչպես նաև Կ. Պոլսի հայոց տ. Շնորհք պատրիարքի այցելությունը Մոսկվա և Զագորսկ՝ սրտագին հրավերով Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքի:

Բացառիկ նշանակություն ունեցավ 1961 թվականին Հայոց Հայրապետի հանդիպումը Կ. Պոլսում Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասի հետ: Պատմական-եկեղեցական կարևոր նշանակություն ունեցավ նաև հռոմեական կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբություն Պողոս Զ Պապի հրավերով Հայոց Հայրապետի այցելությունը Վատիկան 1970 թվականին՝ հայ եկեղեցու նվիրապետական մյուս Աթոռների գահակալներից և բարձրաստիճան հայ հոգևորականներից բաղկացած մեծ շքախմբով:

Միջեկեղեցական հարաբերությունների զարգացման տեսակետից պատմական մեծ իրադարձություններ հանդիսացան նաև Վեհափառ Հայրապետի այցելությունները մալաբար եկեղեցու կենտրոն (Քոթայամ, 1963 թ.), եթովպական եկեղեցու կենտրոն (Ադիս-Աբեբա, 1965 թ.), ապա անգլիկան եկեղեցու կենտրոն (Լամբեթ պալատ, 1956 և 1975 թթ.), Ե. Հ. Խ.-ի կենտրոն (Ժնև, 1963 թ.), այնուհետև Նրա հանդիպումները Միլանի, Վենետիկի, Փարիզի, Մարսելի, Լիոնի, Վիեննայի, Պորտուգալիայի կարդինալ արքեպիսկոպոսների և քույր եկեղեցիների այլ բարձրաստիճան հոգևորականների հետ:

Հայ եկեղեցու և քույր եկեղեցիների միջև հարաբերությունները կանոնավորելու և է՛լ ավելի սերտացնելու համար Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ Մայր Աթոռում 1969 թվականին ստեղծվեց Միջեկեղեցական

հարաբերությունների հատուկ բաժին, որը ձեռնհասորեն կատարում է իր առջև դրված պարտականությունները:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու պատմական առաքելություններից մեկն է եղել հայ եկեղեցու միության պահպանումը ս. Էջմիածնի օրհնության ներքո: Այս ոգին է իշխել ու տիրապետել մեր եկեղեցական ողջ կյանքի ընթացքում: Այդ նույն ոգով է առաջնորդվել նաև մեր հոբելյար Հայրապետն Իր գահակալության քսան տարիների ընթացքում:

Սփոփվել ենք աշխարհով մեկ, բայց միացած ենք ս. Էջմիածնի խորհրդով և աստվածային օրհնությամբ:

Ավա՜ղ, սակայն, 1956 թվականից սկսած հայ եկեղեցու ծոցում դրսևորվեցին Անթիլիասի կիլիկյան Աթոռի կողմից հակականոնական և կենտրոնախույս ձգտումներ և կատարվեցին ոտնձգություններ Մայր Աթոռի տիրապետման թեմերից ներս: Ստեղծվեց եկեղեցական ծանոթ տագնապը:

Հայոց Հայրապետը, սակայն, առաջնորդված հայ եկեղեցու միության ոգով և հայ ժողովրդի գերագույն շահերի գիտակցությամբ, քանի՜-քանի՜ անգամներ, որպես գերագույն Պետը հայ եկեղեցու, համերաշխության և սիրո ձեռք մեկնեց Անթիլիասի Աթոռին, որպեսզի հայ եկեղեցու ծոցից վերանա եկեղեցական երկփեղկումն ու պառակտումը:

Այս նպատակով 1963 թ. հոկտեմբերին Հայոց Հայրապետը Երուսաղեմի հայոց պատրիարքարանում մասնավոր տեսակցություն ունեցավ Անթիլիասի նորընտիր գահակալի հետ, և կայացավ ցանկալի ողջագուրումը՝ հուրախություն մեր եկեղեցու և համայն հայ ժողովրդի, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

Այդ թվականներից մինչև այսօր թե՛ բանիվ և թե՛ գործով Հայոց Հայրապետն «արթուն կերպով հսկել է», որպեսզի ողջագուրումի այդ ոգին «արմատանա մեր եկեղեցական և ազգային կյանքեն ներս և դառնա կենսաբեր ու պտղաստատ»: Բայց, դժբախտաբար, Հայոց Հայրապետի սիրո և միության հորդորները մնացին ցարդ «ձայն բարբառող յանապատի», և Անթիլիասի եկեղեցական ու ազգային ղեկավարության մտայնության և գործելու եղանակի մեջ տեղի չունեցավ ոչ մի փոփոխություն: Աղոթում ենք և սպասում, որ մի օր Անթիլիասը գիտակցի իր սխալն ու վերադառնա հայ եկեղեցու միության կանոնական ու պատմությամբ նվիրագործված սկզբունքներին՝ պահելով մասնավոր իր տեղն ու առաքելությունը հայ եկեղեցու նվիրապետության կառույցի մեջ:

Վեհափառ Հայրապետի գահակալության շրջանում Նրա ձեռնարկած հայրապետական ուղևորությունները, դեսպի մեր ներքին և արտասահմանյան թեմերը, նոր էջ բացեցին հայ եկեղեցու բազմադարյան պատմության մեջ:

1956—1976 տարիներին հովվապետական ուղևորությունները հանդիսացան կարևոր իրադարձություններ հատկապես արտասահմանի հայության եկեղեցական, ազգային կյանքի համար:

Հայոց Հայրապետն արտասահմանում Իր հավատացյալ և հայրենասեր զավակների կողմից գտավ փառահեղ և արտագին ընդունելություն: Սփյուռքի հայությունն զգաց, որ սուրբ Էջմիածինն ինչպես միշտ, նաև այսօր հանդիսանում է հայոց հավատքի ժայռակերտ բերդը և այն հոգևոր ու անքակտելի կամուրջը, որ կապում է ի սփյուռս աշխարհի ցրված հայությունն իր կրոնական կենտրոնին և իր մայր հայրենիքին:

Հովվապետական այս ուղևորությունների ժամանակ Հայոց Հայրապետն այցելեց մեր նվիրապետական մյուս Աթոռները՝ Անթիլիաս, Երուսաղեմ և

Կ. Պոլիս, եղավ թեմական մեր գրեթե բոլոր կենտրոններում, Գանգեսի ափերից մինչև Բոսֆորի ափերը, մինչև Ատլանտյանի և Խաղաղականի ափերը՝ բաշխելու Ավետարանի լույսը, ս. Էջմիածնի աստվածային օրհնությունը և վկայելու, թե մեկ է Հայաստանյայց առաքելական եկեղեցին և անբաժանելի, ինչպես ինքը՝ հայ ժողովուրդը, և թե բոլոր հայերը հարազատ զավակներն են Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Այստեղ կարևորությամբ պետք է արձանագրենք Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարք հոր սիրալիր հրավերով Հայոց Հայրապետի երկրորդ այցելությունը 1975 թ. հունիսին, «յուխտ և յերկրպագութիւն Սուրբ Տեղեաց», միաժամանակ կատարելու համար օծումը Երուսաղեմի ս. Հարության պատմական մեծ տաճարի հայկական մասի վերանորոգված վերնատան եկեղեցու, խորանների և խաչքարերի, ինչպես նաև նախագահելու սրբոց Հակոբյանց վանքում Ալեքս և Մարի Մանուկյանների հիշատակական նվիրատվությամբ կառուցված ընծայարանի և Ժառանգավորաց վարժարանի նոր շենքի բացման հանդիսությանը:

Արտասահմանում կատարած Իր ուղևորությունների ժամանակ Հայոց Հայրապետը պաշտոնական հանդիպումներ ունեցավ զանազան երկրների պետական մի շարք բարձրաստիճան անձնավորությունների հետ, ինչպես օրինակ՝ ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահ մարշալ Նիկոլայ Բուլգանինի (1956 թ.), ՍՍՀՄ Մինիստրների սովետի նախագահի տեղակալ Ալեքսեյ Կոսիգինի (1960 թ.), Ֆրանսիայի հանրապետության պրեզիդենտներ Ռընե Կոտիի (1956 թ.) և Ժորժ Պոմպիդուի (1970 թ.), Հնդկաստանի հանրապետության պրեզիդենտ դոկտ. Ռադհակրիշնանի, Հնդկաստանի վարչապետ Ջավահարլալ Ներուի (1963 թ.), Եթովպիայի կայսր Հայլե Սելասիեի (1965 թ.), Եգիպտոսի Արաբական Հանրապետության պրեզիդենտ Գամալ Աբդել Նասերի (1956 թ.), Հորդանանի Հուսեին Բ թագավորի (1963 և 1975 թթ.), Իսրայելի հանրապետության պրեզիդենտ Էֆրաիմ Գուսցերի (1975 թ.), Լիբանանի հանրապետության պրեզիդենտ Կամիլ Շամունի (1956 թ.), Միավորված ազգերի կազմակերպության ընդհանուր քարտուղար Ու-Տանի (1968 թ.), Արգենտինայի հանրապետության պրեզիդենտ գեներալ Կառլոս Օնգանիայի (1968 թ.), Բրազիլիայի հանրապետության պրեզիդենտ մարշալ Կոստա Սիլվայի (1968 թ.) Կեբեկի (Կանադա) վարչապետ Դանիել Ջոնսոնի (1968 թ.), Ավստրիայի հանրապետության պրեզիդենտ Ֆրանց Յոնասի (1961 թ.), Պորտուգալիայի հանրապետության պրեզիդենտ ծովակալ Ամերիկո Թոմուսի և վարչապետներ Անտոնիո Օլիվեռա Սալազարի ու Մարչելլո Կաետանոյի (1961, 1970 թթ.), Թուրքիայի հանրապետության պրեզիդենտ գեներալ Ջեմալ Գյուրսելի (1961 թ.), Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության Պետական խորհրդի անդամ գեներալ Իվան Միխայլովի (1975 թ.) և Վրաստանի, Ադրբեջանի Մինիստրների սովետների նախագահների հետ զանազան առիթներով:

Մխիթարական է նաև հաստատել, որ գահակալության Իր քսան տարիների ընթացքում Հայոց Հայրապետը միշտ վայելել է բարյացակամ ու հարգալից վերաբերմունքը Հայաստանի բարեխնամ կառավարության: Նորին Սրբությունը եկեղեցական զանազան հարցերի առնչությամբ բազմիցս այցելել է Հայաստանի Գերագույն սովետի նախագահության նախագահներին և ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահներին:

Այս հանդիսավոր պահին պարտականությունն ունենք մեր խորագույն երախտագիտությունն ու անկեղծ շնորհակալությունը հայտնելու մեր հայրե-

նի բարեխնամ կառավարությանը, ինչպես նաև Սովետական Միության կառավարությանը և կրոնների գործերի խորհրդին՝ վերջին քսան տարիների ընթացքում ս. Էջմիածնի և նրա Գահակալի գործունեության նկատմամբ նրանց ցուցաբերած հույժ բարյացակամ ու լայնախոհ վերաբերմունքի և բարոյական օժանդակության համար:

Սույն քսանամյակը լուսավոր և խոստումնալից մի հանգրվան է Հայոց Հայրապետի բեղմնավոր գործունեության ճանապարհի վրա: Մեր երախտագիտության առարկա է դառնում քսան տարիների վրա պարարտացված Նրա կյանքը, որ ճշմարտապես եղավ պայծառ հավատքի, անդուլ աշխատանքի, հոգևոր, մշակութային և շինարար իրագործումների մի բեղուն շրջան:

Գերագույն հոգևոր խորհուրդս, հանուն բովանդակ հայ ժողովրդի, իր որդիական սերն ու հավատարմությունն է հայտնում դեպի մեր հավատի բազմադարյան կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածինը, որ ամեն հայ մարդու սրտում իր ամուր խարիսխն ունի, և դեպի նրա արժանավոր Գահակալը, որ Իր մաքուր ձեռքերի մեջ է պահում հայրապետական իշխանության գավազանը՝ դեպի հայ եկեղեցին ու հայ ժողովուրդն ունեցած Իր պարտքի և կոչման խորունկ գիտակցությամբ. **«Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ Քահանայապետ սուրբ, անմեղ, անարատ»** (Եբր. Է 26):

Հոբելյար և սիրելի Հայրապետ մեր, թող պայծառ, խաղաղ և արևոտ լինեն Ձեր կյանքի հետագա տարիները՝ լի աստվածային օրհնությամբ, շրջապատված մեր ժողովրդի պաշտամունքի հասնող սիրով, որպեսզի դեռ երկա՜ր ու երկա՜ր տարիներ շարունակեք մնալ Լուսավորչի Գահի վրա՝ կարողանալ իրագործելու համար Ձեր եկեղեցաշեն ու հայրենանվեր բոլոր անավարտ մնացած ծրագրերը՝ հանսասանություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի պայծառություն Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ի բարօրություն հայրենյաց և ի մխիթարություն հավատացյալ ժողովրդի:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 5-ը սուրբ Էջմիածնում տեղի ունեցան սրբալույս մեռոնի օրհնության և Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության քսանամյակին նվիրված հանդիսություններ:

Այս առթիվ Մայր Աթոռ էին ժամանել Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքը, Կոստանդնուպոլսի հայոց ամենապատիվ տ. Շնորհք պատրիարքը, հայ եկեղեցու բոլոր թեմական առաջնորդներն ու թեմերի պատգամավորները, Մայր Աթոռի բարերարներ, ինչպես նաև բազում հրավիրյալներ և բազմահազար ուխտավորներ:

Հանդիսություններին մասնակցելու համար ս. Էջմիածին էին ժամանել նաև քույր եկեղեցիների հոգևոր պետեր և ներկայացուցիչներ:

Ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակությանը գլխավորում էր Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Տ. Պիմենը, վրաց օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը՝ Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը, Հնդկաստանի մալաբար եկեղեցու պատվիրակությանը՝ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոսը:

Կաթոլիկ եկեղեցու պետ Ն. Ս. Պողոս Զ Պապին ներկայացնում էր կարդինալ Ժան Վիլլեբրանդսը, Քենտրբերիի արքեպիսկոպոսին՝ Լոնդոնի եպիսկոպոս Ջերալդ Ալեքսանդր Էլիսոնը, Երուսաղեմի հույն պատրիարքությանը՝ միտրոպոլիտ Գերմանոս Մամալիսը, Երուսաղեմի ֆրանչիսկյան միաբանությանը՝ Մաուրիլիո Սակկի վարդապետը:

Սեպտեմբերի 25-ին, երեկոյան, Մայր տաճարում տեղի ունեցավ կիրակամուտի ժամերգություն և հոգևոր համերգ, որին ներկա եղան քույր եկեղեցիների պատվիրակությունները, հայ հոգևորական և աշխարհական պատգամավորներ, ինչպես նաև մեծ թվով ուխտավորներ:

Սեպտեմբերի 26-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Մայր տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Կ. Պոլսի հայոց պատրիարք տ. Շնորհք արքեպիսկոպոսը: Ս. պատարագի ընթացքում քարոզեց Հայոց Հայրապետը և ողջունեց ներկայությունը Մայր Աթոռի հոգևորական և աշխարհական բոլոր հյուրերի:

Ապա Մայր տաճարում ողջույնի և շնորհավորանքի խոսք ասաց նաև Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը:

Պատարագից հետո հոգևոր պետերը առաջնորդվեցին Մայր տաճարի բակի արևմտյան մասում այս առթիվ պատրաստված պատվանդան:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը, զգեստավորված, ուղեկցությամբ Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց պատրիարքների և տասներկու թեմական արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների, ինչպես նաև քույր եկեղեցիների հոգևոր պետերի, առաջնորդվեց Մայր տաճարի զանգակատան առջև պատրաստված բեմ՝ կատարելու սրբալույս մեռոնի օրհնությունը:

Մայր տաճարի ամբողջ շրջափակը լցված էր տասնյակ հազարավոր ուխտավորներով, հավատացյալներով և հյուրերով:

Ժամը 12-ին սկսվեց մեռոնօրհնության արարողությունն ըստ հայ եկեղեցու դարավոր կարգի և կանոնի:

Մեռոնօրհնության արարողությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Արարողության վերջում Վեհափառ Հայրապետը քարոզեց հայ ժողովրդի համար սրբալույս մեռոնի ունեցած հոգևոր նշանակության մասին:

Մեռոնօրհնության արարողությունից հետո հանդիսավոր մեծ թափորով Ամենայն Հայոց Հայրապետը, քույր եկեղեցիների հոգևոր պետերը, ողջ հոգևորականությունը և թեմերի ներկայացուցիչներն առաջնորդվեցին Վեհարանի գահասրահ, ուր Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոսը շնորհավորեց Հայոց Հայրապետին սրբալույս մեռոնի օրհնության ուրախ առիթով:

Գահասրահում ներկա էր նաև տիար Սարգիս Գասպարյանը:

Հանդիսության ավարտին օրհնության խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց Հայրապետը:

Սեպտեմբերի 27-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանի հանդիսության դահլիճում տեղի ունեցավ հոբելյանական հանդիսություն՝ նվիրված Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության քսանամյակին:

Հանդիսությանը ներկա էին քույր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները, ինչպես նաև Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց ամենապատիվ պատրիարքները, հայ եկեղեցու բոլոր թեմական առաջնորդները, թեմերի պատգամավորները, Մայր Աթոռի բարերարները և բազում այլ հյուրեր՝ 350 հոգի:

Հանդիսությանը Սովետական Հայաստանի կառավարությունը ներկայացնում էր ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը:

Հանդիսության բացումը կատարեց Հոբելյանական կենտրոնական հանձնաժողովի նախագահ տ. Եղիշե սրբազան պատրիարքը:

Հոբելյար կաթողիկոսի քսանամյա գործունեությանը նվիրված Գերագույն հոգևոր խորհրդի զեկուցագիրն ընթերցեց տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը:

Այս առթիվ Գերագույն հոգևոր խորհրդի անունից Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին նվիրվեց ոսկեձույլ և ականակուռ «Հայրապետական արծիվ» շքանշանը:

Ապա ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը հանդես եկավ ողջույնի և շնորհավորանքի խոսքով:

Այնուհետև ողջույնի և շնորհավորանքի խոսքերով հանդես եկան տ. Շնորհք

պատրիարքը՝ հանուն հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների և բոլոր թեմերի, Տ. Պիմեն Պատրիարքը՝ հանուն ռուս պրավոսլավ եկեղեցու և Սինոդի, Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը՝ հանուն վրաց օրթոդոքս եկեղեցու, Տ. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոսը՝ հանուն մալաբար եկեղեցու. կարդինալ Ժան Վիլլեբրանդը՝ հանուն Պողոս Զ Պապի և հռոմեական կաթոլիկ եկեղեցու, Ջերալդ Ալեքսանդր Էլիսոն եպիսկոպոսը՝ հանուն անգլիկան եկեղեցու, Գերմանոս Մամալիս միտրոպոլիտը՝ հանուն Երուսաղեմի հույն պատրիարքության, Մաուրիլիո Սակկի վարդապետը՝ հանուն Երուսաղեմի կաթոլիկ ֆրանչիսկյան միաբանության:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի տնօրինության և գիտական խորհրդի անունից ողջույնի խոսք ասաց նույն հաստատության տնօրեն ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը, հանուն կոմիտեի, նույնպես ողջունեց և շնորհավորեց Հայոց Հայրապետին:

Հանդիսության ժամանակ ընթերցվեցին նաև ողջույնի և շնորհավորանքի հեռագրեր: Ջերմապես ընդունվեց ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնների գործերի խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրոյեդովի շնորհավորական հեռագիրը:

Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակը հեռագրով շնորհավորել էին նաև Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ Ալեքս Մանուկյանը և անվանի երաժիշտ-կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը:

Հանդիսության ավարտին շնորհակալության և երախտագիտության ջերմ խոսքով հանդես եկավ Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Ժամը 16-ին Երևանի «Արմենիա» հյուրանոցի ռեստորանում Հոբելյանական կենտրոնական հանձնաժողովը, ի պատիվ Հայոց Հայրապետի և բոլոր հյուրերի, կազմակերպեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա եղան 270 հոգի:

Սեպտեմբերի 28-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բոլոր հոգևոր պետերը, պատգամավորներն ու հյուրերն այցելեցին Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան: Այս առթիվ հուշարձանին գեղեցիկ ծաղկեպսակներ զետեղեցին Վեհափառ Հայրապետը, Տ. Պիմեն Պատրիարքը և Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը:

Նահատակաց հուշարձանի հավերժական կրակի շուրջ հայ և քույր եկեղեցիների հոգևոր պետերը, հայ հոգևորականությունը և բոլոր պատգամավորները միասնաբար աղոթեցին հայ նահատակների հոգիների խաղաղության համար:

Ժամը 11-ին քույր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները Հայոց Հայրապետի գլխավորությամբ այցելեցին ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան և ծանոթացան հայ մշակույթի գանձերի հնագույն նմուշներին:

Ժամը 12.30-ին Հայոց Հայրապետի գլխավորությամբ Տ. Պիմեն Պատրիարքը և Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը պաշտոնական այցելություն տվեցին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդ:

Ժամը 15-ին «Արմենիա» հյուրանոցում ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյա-

նը, հանուն հայրենի կառավարության և եկեղեցական խորհրդի, ճաշկերույթ տվեց՝ ի պատիվ Հայոց Հայրապետի և Նրա հարգարժան հյուրերի:

Երեկոյան ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը Բյուրականի «Հայկաշէն» հայրապետանոցում տվեց հրաժեշտի ընդունելություն քույր եկեղեցիների հոգևոր պետերի և պատվիրակությունների պատվին:

Սեպտեմբերի 29-ին, չորեքշաբթի օրը, Տ. Պիմեն Պատրիարքը, Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը, կարդինալ Վիլլեբրանդսը, Ջերալդ Էլիսոն եպիսկոպոսը, Գերմանոս Մամալիս միտրոպոլիտը, իրենց շքախմբի անդամներով, հրաժեշտ տվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսին, Մայր Աթոռին և մեկնեցին լավագույն տպավորություններով:

Սեպտեմբերի 30-ին, հինգշաբթի օրը, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց Վեհարանի բակում կանգնեցված և Հայոց Հայրապետի 20-ամյա գործունեությանը նվիրված հոբելյանական խաչքարի հանդիսավոր բացումը:

Այնուհետև հարգարժան հյուրերը Վեհարանում դիտեցին գեղարվեստական բարձր ճաշակով հորինված հայոց Մեսրոպյան այբուբենի ոսկեգիր տառերը, որ պատրաստվել էր Հայոց Հայրապետի պատվերով՝ Իր հոբելյանի առթիվ:

Ժամը 17-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվեց եպիսկոպոսաց խորհրդակցական ժողով, որին մասնակցեցին տ. Եղիշե, տ. Շնորհք սրբազան պատրիարքները, թեմական առաջնորդները և հանդիսությանը ներկա եպիսկոպոսները՝ 20 հոգի:

Եպիսկոպոսաց սույն խորհրդակցական ժողովը որոշեց առաջիկա տարի, աշնանը, հրավիրել եպիսկոպոսաց ժողով, որը Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքի հրավերով գումարվելու է Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքում:

Հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, կատարվեց լոնդոնաբնակ Գևորգ և Հովհաննես Քյուրքճյան եղբայրների նվիրատվությամբ Երևանի վերակառուցված ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցու նավակատիքն ու օծումը՝ ձեռամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի:

Օրվա հանդիսության առթիվ քարոզեց Վեհափառ Հայրապետը:

Նույն օրը, ժամը 15-ին, Երևանի «Անի» հյուրանոցում, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի և թեմական խորհրդի կողմից, ի պատիվ հյուրերի, կազմակերպվեց հրաժեշտի ընդունելություն ս. Սարգիս եկեղեցու օծման առիթով:

Հոկտեմբերի 4—5 օրերին հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորները հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին, Մայր Աթոռին և մեկնեցին շնորհակալ տպավորություններով:

Սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5 օրերը Մայր Աթոռի մեր օրերի պատմության մեջ հանդիսացան անմոռանալի օրեր, որոնք վերածվեցին մեր հավատքի կենտրոն ս. Էջմիածնի, նրա արժանավոր Գահակալի, մեր վերածնված մայր հայրենիքի շուրջ, հայ ժողովրդի համախմբվածության, սիրո, հավատարմության համազգային մի սրբազան տոնի:

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
4 հոկտեմբերի 1976 թ.

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ՝ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԺԱՄԱՆՈՒՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԵՐԻ

1976 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5-ը պատմական և հիշարժան օրեր հանդիսացան մեր եկեղեցական և ազգային ժամանակակից պատմության մեջ ու մի ուշագրավ հանգրվան **Մայր Աթոռ ս. Էջմիածնի** և **Վեհափառ Հայրապետի** եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեության ճանապարհի վրա՝ ոգևորիչ արդյունքներով:

1975 թվականի հոկտեմբերին լրացավ Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակը:

Մայր Աթոռի **Գերագույն հոգևոր խորհուրդը** որոշեց 1976 թվականի աշնանը համազգային հանդիսությամբ նշել հիշարժան այդ իրադարձությունը և այս առթիվ ս. Էջմիածնում կատարել նաև **սրբալույս մեռոնի օրհնությունը:**

Հայոց Հայրապետի գահակալությունը մեր եկեղեցու ներկա պատմության ժամանակաշրջանում մի նոր էջ բացեց հայ եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի տարեգրության մեջ հոգևոր, եկեղեցական, մշակութային, շինարարական, հայրենասիրական ու խաղաղասիրական խանդավառ իրագործումներով, ինչպես նաև միջեկեղեցական հարաբերությունների ներտացման և ամրապնդման ուղղությամբ:

Անցնող քսան և մեկ տարիների ընթացքում Հայոց Հայրապետի բարձր անձնավորությունը նույնացել է Մայր Աթոռի և Հայոց վերածնված աշխարհի հետ: Նրա ոգեշնչող անձնավորությունից ճառագայթող լույսն է, որ ջերմացրել է ողջ հայության սիրտը որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի և անքակտելի կերպով կապել սուրբ Էջմիածնի և հայոց մայր երկրի հետ:

Սեպտեմբերի 21-ից սկսած մինչև 25-ը Մայր Աթոռ ժամանեցին Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքը, Կ. Պոլսի հայոց ամենապատիվ տ. Շնորհք պատրիարքը, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյանը, Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ արքեպիսկոպոս Ղազարյանը, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց առաջնորդ տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճյանը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանը, Անգլիայի հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանը, Եգիպտոսի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Ներսեհ ծ. վարդապետ Փապուճյանը, Դամասկոսի հայոց առաջնորդ տ. Ոսկան ծ. վարդապետ Գալբակյանը՝ ի գլուխ եկեղեցական և աշխարհական պատգամավորների:

Ներքին թեմերից նույնպես հանդիսություններին մասնակցում էին եպիսկոպոսաց դասը՝ ի գլուխ պատգամավորությունների. Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը, Վրաստանի թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը, Ադրբեջանի թեմի առաջնորդ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանը, ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպիսկոպոս Տերյանը և Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը:

Հրավիրյալների թվում էին՝ Փարիզում հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Գյուտ եպիսկոպոս Նագաշյանը, Մարսելում հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանը, Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ տ. Արիս եպիսկոպոս Շիրվանյանը, Ավստրիայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ ծ. վարդապետ Գրիգորյանը, Իտալիայի հայոց հոգևոր հովիվ տ. Ծիրայր վարդապետ Թաշճյանը և Հնդկաստանի հայոց հոգևոր հովիվ տ. Հակոբ քահանա Գյոկչյանը:

Հանդիսություններին մասնակցելու համար ս. Էջմիածին էին ժամանել նաև քույր եկեղեցիների հոգևոր պետեր և ներկայացուցիչներ:

Ռուս պրավոսլավ եկեղեցու պատվիրակությանը գլխավորում էր Մոսկվայի և համայն Ռուսաստանի Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը, վրաց օրթոդոքս եկեղեցու պատվիրակությանը՝ Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը, հնդիկ մալաբար եկեղեցու պատվիրակությանը՝ Նորին Սրբություն Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա. կաթողիկոսը:

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբություն Պողոս Զ Պապին ներկայացնում էր կարդինալ Ժան Վիլլեբրանդը, անգլիկան եկեղեցուն և Քենտրբերիի Տ. Ֆրեդերիկ Կոգան արքեպիսկոպոսին՝ Լոնդոնի եպիսկոպոս տ. Զերալդ Ալեքսանդր Էլիսոնը, Երուսաղեմի հունաց պատրիարքու-

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻ ՊԱՀ

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊՈՒՇԿԻՆԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆ

թյանը՝ **տ. Գերմանոս Մամալիս միտրոպոլիտը,** Երուսաղեմի ֆրանչիսկյան միաբանությանը՝ **կուստոդ տ. Մաուրիլիո Սակկի վարդապետը:**

Երևանի օդանավակայանում հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորները, ինչպես նաև քույր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները դիմավորվեցին հանդիսավորությամբ և ջերմորեն՝ հանախ Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ:

Հայոց Հայրապետի և Մայր Աթոռի հարգելի հյուրերին Երևանի օդանավակայանում ողջունեց և բարի գալուստ մաղթեց հայրենի կառավարության և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի անունից խորհրդի նախագահ ար. **Սարգիս Գասպարյանը:**

Բոլոր հոգևորական պետերն ու պատգամավորներն օդանավակայանից հանդիսավորապես առաջնորդվեցին Մայր Աթոռ և Իջման սուրբ սեղանի առաջ կատարեցին իրենց ուխտն ու աղոթքը:

Հայոց Հայրապետը Մայր տաճարում ջերմորեն ընդունեց **Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքին, Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսին** և **Տ. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոսին:**

Մայր տաճարում Հայոց Հայրապետը և քույր եկեղեցիների հոգևոր պետերը փոխանակեցին բարիգալուստյան և ողջույնի ճառեր:

ԿԻՐԱԿԱՄՏԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՀԱՄԵՐԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, քույր եկեղեցիների հոգևոր պետերը և հայ եկեղեցու ընդհանրապետական Աթոռների գահակալները, արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները, վարդապետներն ու քահանա հայրերը, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, եկեղեցական թափորով և ուխտավորների ու հավատացյալների խուռներամ բազմությամբ առաջնորդվեցին Մայր տաճար՝ ներկա լինելու կիրակամտի հանդիսավոր ժամերգությանը:

Հավարտ ժամերգության, ի պատիվ հոգևոր պետերի, պատգամավորների և ուխտավորների, տրվեց հոգևոր համերգ՝ Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ՝ գեղարվեստական ղեկավարությամբ խմբավար **Խորեն Մեյխանեջյանի:**

Համերգի մեներգերը կատարում էր սիրված երգչուհի **Լուսինե Զաքարյանը,** իսկ երգեհոնի բաժինը՝ երգեհոնահար **Լևոն Աբրահամյանը:**

Համերգի ծրագրում կային «Խորհուրդ խորին»-ը, «Հսուն հաւուն»-ը, «Քրիստոս պատարագեալ»-ը, «Գովեա Երուսաղէմ»-ը, Բորդիանկու «Կոնչերտո»-ն, Չայկովսկու «Տէր ողորմեա»-ն, «Հրեշտակայնին» հունական տաղը և Ա. Շարպանտիեի «Լաուդատե Դոմինում»-ը:

Հոգևոր համերգի ավարտին հնչեց նաև վեհ ու հանդիսավոր «Հայրապետական ձոն»-ը, որ ստեղծագործել էր երգչախմբի վաստակավոր ղեկավար **Խորեն Մեյխանեջյանն** ի պատիվ **Հայոց Հայրապետի**՝ Նրա գահակալության քսանամյակի առիթով:

Ժամը 20-ին քույր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները, ինչպես նաև հայ հոգևորականները, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, ընթրեցին Մայր Աթոռի միաբանական սեղանատանը:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 26. կիրակի: Տոն Վարագա ս. Խաչի:

Ժամը 10-ին Մայր տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Կ. Պոլսի հայոց տ. Շնորհք սրբազան պատրիարքը: Սուրբ սեղանին սպասարկում էին **տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը, տ. Ներսեհ ծ. վրդ. Փապուճյանը, տ. Վիգեն, տ. Խաժակ** վարդապետները և Մայր Աթոռի սարկավագների խումբը:

Ժամը 11-ին **Վեհափառ Հայրապետը,** քույր եկեղեցիների հոգևոր պետերը և ողջ հայ հոգևորականությունը եկեղեցական թափորով, Մայր տաճարի զանգերի տոնական ու զվարթ ղողանջների ներքո, մայրավանքի շրջափակում հավաքված տասնյակ հազարավոր ուխտավորների և հավատացյալների խանդավառ արտահայտությունների ներքո, առաջնորդվեցին Մայր տաճար:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում, իրենց դիրքի և աստիճանի համեմատ, առանձին գահերի վրա, տեղ էին գրավել հոգևոր պետերը: Եկմալյանի սուրբ պատարագի երգեցողությունը կատարում էր Մայր տաճարի երգչախումբը:

«Հայր մեր»-ից առաջ սուրբ Սեղան բարձրացան **Վեհափառ Հայրապետը** և **Տ. Պիմեն Պատրիարքը:**

Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը Մայր Աթոռում սրբալույս մեռոնի օրհնության սուիթով ներկաներին ուղղեց ողջույնի և շնորհավորանքի հետևյալ ջերմ խոսքը.

Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(Կիրակի օրը, սեպտեմբերի 26-ին)

Ձերդ Սրբություն,

Ի Տեր սիրեցյալ Սրբազան Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց Վազգեն Առաջին.

Ամենապատիվ Հովվապետներ,

Հարգարժան Հայրեր, եղբայրներ և քույրեր,

Հարգելի հյուրեր.

Մենք եկել ենք այստեղ, հնադարյան, բայց միշտ գեղեցիկ Էջմիածին սրբավայրը՝ բաժանելու համար Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու ուրախությունը Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Վազգեն Առաջինի հայրապետական գործունեության 20-ամյակի առիթով:

Եկել ենք նաև ներկա լինելու մեր հայ եղբայրների ու քույրերի հետ միասին, որոնք այնքան մոտ են մեզ հավատով ու քրիստոնեական կյանքով, մեռոնօրհնության սրբազան արարողությանը:

Հանուն ռուս պրովոսլավ եկեղեցու, նրա հոգևոր դասի և հավատացյալ ժողովրդի Մենք ջերմորեն ողջունում ենք Ձերդ Սրբությանը և սրտագին աղոթում, որպեսզի ամենաողորմածն Աստված պարգևի Ձեզ բազում արգասավոր տարիներ՝ նույն հաջողությամբ գլխավորելու համար եղբայրական հայ առաքելական եկեղեցին:

Այսօր նորից, ինչպես մի քանի տարիներ առաջ, Մենք խորին հուզմունքով մտանք Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տաճար, որը կենդանի վկան

է մեծ, տաղանդավոր և ջերմասիրտ հայ ժողովրդի հինավուրց պատմության, մի ժողովուրդ, որն անցել է բազմադարյան փշոտ ճանապարհ և այժմ ձեռք բերել ծաղկուն կյանք մեր մեծ ու սիրեցյալ հայրենիքի ժողովուրդների եղբայրական ընտանիքում, որի բարօրությանը մենք նվիրում ենք մեր ընդհանուր աղոթքներն ու ջանքերը:

Այսօր Մենք գտնվում ենք այստեղ, ձեր մեջ, վկայելու Աստուծո օգնականությամբ պահպանված մեր հոտի մեծ սերը Ձեր և հայ եկեղեցու սիրեցյալ զավակների նկատմամբ, որպեսզի մեկ անգամ ևս ընդգծվեն մեր երկու եկեղեցիների ու ժողովուրդների միջև եղած սերտ կապերը:

Ողորմությամբ միակ Աստուծո և սուրբ Երրորդության Մենք ուրախ ենք հայտնելու, որ մեր եկեղեցական հարաբերությունները երբեք չեն մթագնվել անվստահության և անհասկացողության զգացումներով:

Հայ առաքելական եկեղեցին և ռուս պրավոսլավ եկեղեցին, ղեկավարվելով քրիստոնեական պարտքի գիտակցությամբ, սիրո և եղբայրության զգացումով գործել և գործում են հանուն քրիստոնեության՝ առաջնորդելով Աստուծո ժողովուրդը, դաստիարակելով իրենց հոտը հավատի և բարեպաշտության ոգով:

Մեր եկեղեցիները նշանակալից ուշադրություն են նվիրում եկեղեցական միության հարցերին ինչպես աստվածաբանական խնդիրները խորապես ուսումնասիրելու, այնպես էլ զանազան միջդավանական հանդիպումներին մեր ներկայացուցիչների մասնակցության միջոցով:

Տեղին է այստեղ նշել, որ օրթոդոքս եկեղեցիները և արևելյան հին (ոչ քաղկեդոնական) եկեղեցիները ամենայն անկեղծությամբ ձգտում են գտնել ուղիներ, որոնք տանեին դեպի կատարյալ միություն ի Քրիստոս: Նրանց այդ ձգտումը արտահայտվում է աստվածաբանական երկխոսությունների միջոցով: Մենք աղոթում ենք և հավատում, որ Տիրոջ օգնականությամբ մեր ջանքերը հաջողություն կունենան՝ վերականգնելու 15 դար առաջ եկեղեցիների՝ ի հաղորդության եղած և ապա ընդհատված հարաբերությունները, որով և կկարողանանք միատեղ մոտենալ Հաղորդության սուրբ սկիհին՝ փառաբանելով մեր Հովվապետին և մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որը հանդիսանում է միակ, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցու Գլուխը:

Խոսելով համատեղ գործունեության մասին, Մենք ընդգծում ենք մեր երկու եկեղեցիների ձգտումը՝ գործուն կերպով մասնակցելու այն բարի ջանքերին, որոնք նպաստում են միջազգային լարվածության թուլացման, խաղաղության պահպանման և ամրապնդման գործին, ինչպես նաև մեր բազմազգ մեծ պետության բարօրությանը:

Խաղաղությունը ընտանիքում՝ ընտանեկան կյանքի երջանկության և բարեկեցության հիմքն է. խաղաղությունը ամբողջ աշխարհում՝ բոլոր ժողովուրդների երջանկության ու բարօրության հիմքն է: Դա մի հնարավորություն է բոլոր եկեղեցիների համար հանգիստ և արդյունավետ կերպով իրագործելու իրենց առաքելությունը երկրի վրա: Մեծ է խաղաղության ջատագովներին խոստացված պարգևը, «որովհետև նրանք Աստուծո որդիներ պիտի կոչվեն» (Մատթեոս Ե 9): Մենք գոհունակությամբ նշում ենք, որ մեր երկու եկեղեցիների սպասավորներն ու հավատացյալները միակամ են իրենց ցանկության մեջ՝ մասնակցելու աշխարհի վրա օրհնյալ ու բաղձալի խաղաղության ստեղծման գործին: Մենք հավատում ենք, որ կգա ժամանակ, երբ մարդիկ, ի կատարումն Եսայի մարգարեի խոսքերի, «իրենց սուրերը խոփե-

րի և իրենց նիզակները մանգաղների պիտի վերածեն. ազգը ազգի վրա սուր պիտի չվերցնի, և պիտի չսովորեն պատերազմել» (Եսայի Բ 4):

Այս նշանակալից օրը, աղոթելով այս սուրբ տաճարում, Մենք եռանդագին խնդրում ենք երկնավոր Հորը, որ սուրբ Գրիգոր Լուսավորչի հովանու ներքո եղող Հայաստանյայց առաքելական եկեղեցին իր իմաստուն Հովվապետի՝ Ծայրագույն Պատրիարք-կաթողիկոս Նորին Սրբություն Վազգեն Առաջինի ղեկավարությամբ առավել ամրանա և ծաղկի՝ բազմապատկելով հոգևոր արժեքները, արմատավորելով հավատը, բարեպաշտությունը, սերը և խաղաղությունը:

Թող Աստուծո օրհնությունը միշտ լինի Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու բարեպաշտ զավակների վրա: Թող Աստված զորացնի Ձերդ Սրբության ուժերը՝ շարունակելու համար Ձեր օգտաշատ հովվապետական գործունեությունը երկար և երկար տարիներ:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, աստվածային սերը և սուրբ Հոգու զորությունը լինի բոլորիս հետ:

Հայոց Հայրապետը, արտահայտելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ողջ հայ եկեղեցու և բովանդակ հայ ժողովրդի ուրախությունն այս հանդիսավոր առիթով, ողջունեց բոլոր հյուրերի ներկայությունը՝ ի դեմս Տ. Պիմեն Պատրիարքի, ապա քարոզեց օրվա հանդիսության հոգևոր նշանակության մասին և ասաց.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(Կիրակի օրը, սեպտեմբերի 26-ին)

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս.

Այսօր մեր եկեղեցու համար, մեր համայն ժողովրդի համար պատմական մի օր է, սուրբ օր, որովհետև պատրաստվում ենք այս սուրբ պատարագով օրհնել մեռոն մեր բարեպաշտ ժողովրդի համար:

Այս սրբազան պահին Դուք գալիս եք ոչ միայն Մեր կողքին լինելու ու Մեզ հետ ուրախանալու և աղոթելու, այլ նաև բերում եք Ձեր սրտից բխած քաղցր մաղթանքները՝ ուղղյալ մեր ս. եկեղեցուն, մեր ժողովրդին և անձամբ Մեր անձին: Եվ ներկայացնում եք Մեզ, իբրև թանկագին նվեր, մեր Տիրոջ և Փրկչի սրբանկարը: Մենք հանուն մեր եկեղեցու և ժողովրդի հայտնում ենք Մեր խորագույն շնորհակալությունը այն բոլոր բարիքների համար, որ Դուք շնորհում եք մեզ:

Դուք Ձեր խոսքում շատ գեղեցկահյուս կերպով ոգեկոչեցիք սիրո կապերը մեր երկու եկեղեցիների և ժողովուրդների միջև: Իրապես՝ ռուս պրավոսլավ եկեղեցու և Հայաստանյայց առաքելական եկեղեցու հարաբերությունները դարերի պատմություն ունեն և սկիզբ են առնում տակավին Կիևյան Ռուսաստանի օրերից, երբ քրիստոնեության լույսը ծագեց ռուս հավատավոր ժողովրդի հոգու մեջ: Դարերի ընթացքում այդ բարեկամությունը առավել աճեց և ծաղկեց, և Մենք, մեր օրերին մանավանդ, երջանիկ ենք առավել ամրապնդված տեսնելու դրանք: Այս վերջին 20 և ավելի տարիների ընթացքում չկա հայ եկեղեցու և մանավանդ ս. Էջմիածնի համար մի հանդիսավոր պահ, մի կարևոր իրադարձություն, որին ներկա եղած չլինեն ռուս եկեղեցու պատրիարքները կամ նրանց բարձր ներկայացուցիչները: Նույնպես և Մենք, անձամբ իբրև հայ եկեղեցու Գլուխ և կամ Մեր ներկայացուցիչները միշտ եղբայրական սիրով ներկա ենք եղել և մասնակցել ռուս

պրավոսլավ եկեղեցու կարևոր հանդիսություններին Մոսկվայում, Զագորսկում, Լենինգրադում կամ Կիևում:

Մեր երկու եկեղեցիների գործակցությունը առավել շեշտվում է նաև խաղաղության պայքարի ասպարեզում: Մենք միշտ միասին ենք եղել բարձր հնչեցնելու համար Քրիստոսի խաղաղարար խոսքը ամբողջ աշխարհում: Վստահ ենք, որ նաև հետ այսու մենք նույն աղոթքով և նույն աշխատանքով միասին պիտի լինենք:

Անհավասիկ Մենք անհամբեր սպասում ենք, որ առաջիկա գարունը բացվի, որպեսզի հայ եկեղեցու մի պատվիրակությամբ ներկա լինենք Մոսկվայում Ձեր գլխավորած խաղաղության համաշխարհային կրոնական համագումարին:

Ձեզ լիակատար հաջողություն ենք մաղթում, սիրեցյալ եղբայր, նաև երկար, երջանիկ և խաղաղ տարիներ Ձեր սուրբ առաքելության ճանապարհի վրա:

Թող Աստված օրհնի մեր երկու եկեղեցիների անքակտելի եղբայրությունը և գործակցությունը. ամեն:

Հավարտ ս. պատարագի ողջ հոգևորականությունը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Մայր տաճարից առաջնորդվեց Վեհարան, որտեղ կազմվեց հանդիսավոր մեծ թափոր:

Հայոց Հայրապետն Իր գահակալության քսանմեկերորդ տարում մեծաշուք հանդիսավորությամբ, **չորրորդ անգամ լինելով,** պիտի կատարեր սրբալույս մեռոնի օրհնություն, որով մի անգամ ևս պիտի փառավորվեր Մայր Աթոռ ս. Էջմիածինը, պայծառանար Հայաստանյայց առաքելական եկեղեցին և մխիթարվեր համայն ժողովուրդը հայոց:

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ

Սրբալույս մեռոնի օրհնությունը հայ հավատացյալ ժողովրդի սրտին խոսող նվիրական արարողություններից մեկն է: Դարեր ամբողջ մեռոնը հայ ժողովրդի համար հանդիսացել է **իւղ ցնծութեան, զգեստ լուսաւոր, սրբութիւն հոգւոց և մարմնոց, շնորհ հոգևորական, պահապան կենաց, կնիք արդարութեան, զէն հաւատոյ, ոգւոյ փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն յաւիտենական, լուսաւորութիւն մտաց, ճառագայթ հոգւոց, փարատիչ ցաւոց, պահապան շրթանց, աճեցումն տղայոց, պարարումն ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց և պսակ հաւատացելոց** (Կանոն սրբալոյս մեռոնի օրհնութեան):

Աշնանային պայծառ, զվարթ և արևաշող օր է: Պատգամավորների, ուխտավորների աշխարհախումբ բազմությունը, ավելի քան քառասուն հազար հոգի՝ ափյուռքից, հայոց քաղաքամայր Երևանից, մեր հանրապետության զանազան շրջաններից և հարևան եղբայրական հանրապետություններից եկած, հոգեկան մեծ հրճվանքով, ազգային հպարտության քաղցր զգացումներով ներկա եղավ սրբալույս մեռոնի օրհնությանը, որը կատարվեց բացօթյա, Մայր տաճարի արևմտյան մասում, զանգակատան առաջ հատուկ պատրաստված բեմի վրա:

Առաջին անգամ այս սուրբ հողի վրա, այս սրբազան մթնոլորտում, հավանաբար 303 թվականին, **ս. Գրիգոր Լուսավորիչն էր,** որ օրհնել էր սրբալույս մեռոնը Արշակունի **Տրդատ Գ հայոց արքայի** կնքահայրությամբ: Այնուհետև, դարերի ընթացքում ս. Լուսավորչի հաջորդները միշտ օրհնել են սրբալույս մեռոնը, որպեսզի երբեք ու երբեք հայ եկեղեցում և հայ հոգիների մեջ «չպակսի ձեթը մաքուր իր կանթեղին, հոգիներեն՝ սրբազան հուր»:

Եվ ահա այսօր էլ հայ ուխտավորներն աշխարհի բոլոր ծագերից եկել են ս. Էջմիածին ու մայր հայրենիք՝ իրենց հետ բերելով բյուր կարոտներ,

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԱՋՈՎ ՕՐՀՆՈՒՄ Է ՆՈՐ ՄԵՌՈՆԸ

ՀԱՅԿ ԱՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

համբույր, երազ ու պաշտամունք, կրոնական և հայրենասիրական հույզ ու ապրում:

Սուրբ Էջմիածինը բոլորին կանչել է իր հովանու ներքո, իր մայրական գորովագութ գիրկը՝ իր մեռոնաբույր օրհնությունն ու աղոթքը բաշխելու բովանդակ հայությանը:

Քառասուն օրեր առաջ Մայր Աթոռում սկսվել էր սրբալույս մեռոնի պատրաստությունը: Մեռոնի արծաթաձույլ մեծ կաթսան, լցված ձիթապտղի անարատ յուղով, բալասանով ու անուշահոտ ծաղիկների յուղով, դրվել էր Ավագ սեղանի առաջ ամենօրյա «աղօթիւք և երգօք հոգևորօք» և ծածկվել «եօթն շղարշովք»:

Սրբալույս մեռոնի օրհնության առիթով Հայոց Հայրապետի թանկագին ու մտերիմ բարեկամ Բուլղարիայի **Տ. Մաքսիմ Սրբազան Պատրիարքն** ուղարկել էր հարյուր գրամ վարդի ընտիր և բուրումնավետ յուղ, որն այլ ծաղիկների յուղերի հետ խառնվում է օրհնվելիք մեռոնի մյուս նյութերին:

Եկեղեցական մեծահանդես թափորը սկիզբ առավ Վեհարանից և ձգվեց դեպի Մայր տաճարի առաջ պատրաստված բեմ:

Քահանայապետական լրիվ զգեստավորման մեջ թափորը գլխավորում էր **Վեհափառ Հայրապետը**՝ շրջապատված **տ. Եղիշե** և **տ. Շնորհք** սրբազան պատրիարքներով, որոնք նույնպես հանդիսավոր կերպով զգեստավորված էին իրենց դիրքի և պաշտոնի համաձայն, ինչպես նաև զգեստավորված **տասներկու արքեպիսկոպոսներով և եպիսկոպոսներով,** որոնք մասնակցելու էին սրբալույս մեռոնի օրհնության արարողությանը:

Թափորին մասնակցում էին նաև հանդիսությունների հրավիրված քույր եկեղեցիների հոգևոր պետերը, այդ թվում՝ **Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը, Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը, Տ. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոսը, կարդինալ Ժան Վիլլեբրանդը** և **Ջերալդ Ալեքսանդր Էլիսոն եպիսկոպոսը:**

Մյուս հոգևորականները, պատգամավորները ու հյուրերը տեղ էին գրավել Հին Վեհարանի առաջ այս առթիվ պատրաստված մասնավոր բեմի վրա:

Թափորի առջևից ընթանում էին կարմրազգեստ, ջլապինդ երկու շաթիրները՝ արծաթագլուխ գավազաններով: Նրանց հետևում էին ջահակիրները: Թափորի կենտրոնական մասում երկու վարդապետներ կրում էին խաչվառն ու հայրապետական գավազանը, իսկ երկու սարկավագներ՝ սուրբ մեռոնի կաթսայի ոսկեթել երիզներով բանված սպիտակաթույր շղարշը: Սրանց հետևում էին սրբալույս մեռոնի օրհնության կնքահայրերը՝ **Գևորգ Թահտան** (Լոնդոն), **Հովակիմ Մուրադյանը** (Նյու-Յորք), **Ռաֆֆի Պագրճյանը** (Փարիզ)՝ երեքն էլ գեղեցիկ շապիկներ հագած:

Այնուհետև թափորին մաս էր կազմում եկեղեցականների դասը, այսինքն՝ զգեստավորված տասներկու արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների շքախումբը՝ մասունքներով, արծաթապատ Ավետարաններով և այլ սրբություններով:

Մեռոնօրհնության ժամանակ, ըստ հայ եկեղեցու ավանդական կարգ ու կանոնի, օգտագործվում են աստվածամուղ սուրբ Գեղարդը, Կենաց սուրբ Փայտը, սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը, սուրբ Թադեոս առաքյալի Աջը, սուրբ Բարթողիմեոս առաքյալի Աջը, սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի Աջը, սուրբ Անդրեաս առաքյալի Աջը, արծաթապատ սուրբ Ավետարաններ, սուրբ մեռոնի մերանը, բալասանի անոթ-սրվակը և այլ սրբություններ:

«Հրաշափառ Աստուած» շարականի վեհ հնչյունների տակ, Տրդատյան կամարակապ դռան միջով եկեղեցական թափորի շքերթը բարձրանում էր զանգակատան առաջ հարդարված բեմ-սեղանի վրա: Նույն պահին վեհ ու հաղթական թնդաց «Ուրախ լեր» շարականը, որը հոգեկան անպատում բերկրանքի և խնդության հույզերով համակեց արարողությանը ներկա հազար-հազար հավատացյալների և ուխտավորների սրտերը:

Արդարև, այսօր ուրախ է Մայր Աթոռ ս. Էջմիածինը՝ «մայր՝ որդուովք բերկրեալ»:

Ամենուրեք լո՞ւյս, վեհությո՞ւն ու ցնծությո՞ւն:

Բեմի վրա **Հայոց Հայրապետը** բազմեց «յաթոռ, և երկոտասան եպիսկոպոսունք կալով շրջապատ առաջի, ունելով ի ձեռս իւրեանց զսուրբ նշանն Կենաց և զԱջ սրբոյ Լուսաւորչին և զնշխարս սրբոց և մեռոնաշիշ մի լցեալ հին մեռոնաւ» և կատարեց «զխորհրդածութիւն սրբոյ մեռոնի», ըստ սրբալույս մեռոնի օրհնության կանոնի:

Ապա սրբազան եպիսկոպոսներն Աստվածաշնչից կատարեցին համապատասխան հատվածների ընթերցումներ սուրբ յուղի պատրաստության հոգևոր, մաքրազարդող նշանակության և նրա գործածության մասին Հին և Նոր Կտակարաններում:

Այնուհետև Հայոց Հայրապետն ընթերցեց մեռոնօրհնության մեծ աղոթքը. «Արդ՝ զօրութեամբ ամենասուրբ Հոգւոյդ եղիցի իւղս այս... զգեստ լուսաւոր, սրբութիւն հոգւոց և մարմնոց, պահապան կենաց, զէն հաւատոյ, կնիք արդարութեան... ցնծութիւն սրտից... **զի որ ոք օծցի ի սմանէ, վերստին ծննդեան իւղովս երկիւղած լինի յԱստուծոյ և աներկիւղ հակառակորդէն...**»:

Դպրաց դասը, միաբերան և ներդաշնակ, երգեց մեռոնօրհնության խորհրդին նվիրված մի շարք հոգեկից շարականներ: Հայոց Հայրապետն ապա ընթերցեց մեռոնօրհնության երկրորդ և երրորդ մեծ աղոթքները: Այնուհետև «լինի բացումն դրան նիւթոյ մեռոնի», այսինքն՝ լուսարարապետ **տ. Հուսիկ եպիսկոպոսը** բացեց մեռոնի արծաթյա կաթսայի կափարիչը, մինչ դպիրները ոգևորությամբ երգում էին. «Բացեր, Տէ՛ր, այս օր զգանձդ երկնային» շարականը: Նույն պահին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես կաթսայի մեջ լցրեց «զնիւթ ծաղկանցն և ապա զբալասանն և զկնի զհին մեռոնն»՝ ասելով շարական «Առաքելոյ աղաւնոյ»:

Օրհնված հին մեռոնի ոսկի շիթերը, արևի ճառագայթների տակ պսպղալով, թափվում էին նոր մեռոնի մեջ **զի լիցի դղրդումն:** Նույն պահին, տոնական ու վեհ, հնչեցին Մայր տաճարի զանգերը: Ներկա հավատացյալ ժողովրդի և բազմահազար ուխտավորների հոգևոր բերկրանքը հասավ իր գագաթնակետին: Նույն նվիրական րոպեին Հայոց Հայրապետը **Կենաց սուրբ Փայտով, սուրբ Գեղարդով** և **ս. Գրիգոր Լուսավորչի Աջով** երեք անգամ տյառնագրեց ու խառնեց նոր մեռոնը՝ աղոթելով. «Օրհնեսցի՛ և սրբեսցի՛ մեռոնս այս նշանաւ...»: Բոլոր սրտերից և հոգիներից միաբերան ու պաղատագին թնդաց՝ «ամէ՛ն, ալելուիա՛»-ն, որը, տարածվելով Արարատյան դաշտով մեկ, գնաց հեռո՛ւ հորիզոններ, որպեսզի **սովին օծութեամբ զընդհանուր ժողովուրդս (հայոց) ապրացես ամրանալ...:**

Ապա նորից մեռոնի կաթսան ծածկվեց կափարիչով և շղարշով:

Հանդիսադիր Հայրապետն արարողության ավարտին կարդաց վերջին աղոթքը.

«Արդ՝ այժմ և մեք պատրաստելով զսա որպէս կաթն՝ մատուցանեմք զի ամենեքեան որ ի սմանէ առնուցուն, արժանի լիցին ընդունել զհաստատուն

կերակուր՝ ճշմարիտն, զերկնայինն՝ ի շնորհաց Միածնի քո Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... Եւ այժմ ծագեա՛ ի սիրտս մեր զպարգեւս քարութեան Հոգւոյդ սրբոյ, և հաղորդակիցս երևեցո՛ զմեզ պարգևաց քոց սրբոց, վասընգի», **Դու իսկ ես Մեռոն անբիծ և մաքուր և անաղարտ որ հանապազ բուրես յանձինս սրբոց քոց:**

Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվեց սրբալույս մեռոնի օրհնության արարողությունը:

Քույր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները խոր ուշադրությամբ և երկյուղածությամբ հետևում էին արարողությանը «Կանոն օրհնության սրբալույս մեռոնի»՝ անգլերեն թարգմանությամբ, որն այս առթիվ լույս էր տեսել Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի տպարանից գեղատիպ հրատարակությամբ:

Հանդիսությանը ներկա էին ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Այժմ քարոզի պահն է: Վեհափառ Հայրապետը խոսում է Իր ներշընչված քարոզներից մեկը՝ օրվա հոգեզմայլ հանդիսության տպավորության ներքո՝ վեր հանելով սրբալույս մեռոնի հոգևոր խորհուրդն ու ազգային մեծ նշանակությունը մեր ժողովրդի կյանքում:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ
(26 սեպտեմբերի 1976 թ.)

Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ.

«Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ.

«Այս օրը Ինքն Աստված պարգևեց մեզ, ցնծացեք և ուրախ եղեք»:

Այսօր Մայր Աթոռ ս. Էջմիածնի պատմության մեջ մի բացառիկ հանդիսավոր պահ է, որովհետև Աստուծո զորությամբ և սուրբ Հոգու ներգործությամբ Մենք արժանի եղանք, Մեր հոգևոր եղբայրների հետ միասին, աղոթելու և աղերսելու, որ աստվածային զորությունը և շնորհները իջնեն այս յուղի մեջ, որ այժմ արդեն սովորական յուղ չէ, այլ՝ մ ե ռ ո ն կամ մ յ ու ռ ո ն, կամ ինչպես մենք սիրում ենք ասել՝ ս ր բ ա լ ո ւ յ ս մ յ ու ռ ո ն:

Մ յ ու ռ ո ն ը հունարեն բառ է: Նշանակում է անուշահոտ յուղ: Տակավին անհիշելի ժամանակներից ի վեր, Արևելքում մանավանդ, սովորություն կար և նվիրական ավանդություն՝ ձիթենու յուղը օգտագործելու որպես օծանելիք, այն մտածումով, որ այդ յուղի մեջ, որում հաճախ անուշահոտություններ էին խառնում, իջնում է խորհրդավոր մի զորություն, սրբարար զորություն:

Հին Կտակարանի աշխարհում բազում անգամներ պատմվում է, թե ինչպես օգտագործվել է այդ սրբազան յուղը: Օրինակի համար, Տապանակ ուխտին, որ Իսրայելի ժողովրդի Սրբություն Սրբոցն էր, օծվում էր անուշահոտ ձիթենու յուղով: Օծվում էին նաև այն անձինք, որոնք կոչված էին սպասավորելու այդ սրբությունների առաջ, այսինքն՝ հոգևորականները: Բայց նաև Նոր Կտակարանում օծման գաղափարը անցել է ուղիղ ճանապարհով և մի քանի անգամներ, հենց մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուսի կյանքում, օգտագործվել է ձիթենու յուղը իբրև օծանելիք:

Մի պարագա միայն ուզում ենք հիշել այստեղ իբրև վկայություն: Ինքը՝ Հիսուս, տակավին Իր հրապարակային գործունեությունը չսկսած, բայց անմիջապես Հորդանան գետում մկրտվելուց և անապատի փորձությանց շրջթայից անցնելուց հետո, երբ գալիս է իր հայրենի քաղաքը՝ Նազարեթ, այնտեղ շրջապատում են Նրան բնակիչներից շատեր, հարցուփորձեր են անում, և Նա ոգեկոչումի մի պահին, դրսևորելու համար Իր աստվածությունը, բացում է ս. Գիրքը և կարդում Եսայի մարգարեի այն վկայությունը, թե՝ «Աստուծո Հոգին Իմ վրա է, որովհետև Նա Ինձ օծեց»: Այս խոսքը, այս դեպքում, վերաբերում էր հենց Հիսուսին, որ Աստուծո Որդին էր՝ առաքված աշխարհ՝ փրկչական առաքելությամբ և որպես օծյալը Աստուծո:

Անհավասիկ, սիրելի հավատացյալներ, թե ինչպես և՛ Հին Ուխտի աշխարհում, և՛ Քրիստոսի Ավետարաններում փառաբանվում, մեծարվում, հարգանքի և նույնիսկ պաշտամունքի առարկա է դառնում ձիթենու յուղը: Այսպես պետք է բացատրել այն մեծ իրողությունը, որ եկեղեցիները բոլոր, գոնե պատմական եկեղեցիները, ընդունեցին այս ավանդությունը ամենայն երկյուղածությամբ, և ջրով մկրտվելուց հետո՝ սուրբ մեռոնի դրոշմով նվիրագործեցին Հին և Նոր Կտակարանների յուղով օծման ավանդությունը:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին բացառիկ շուքով, հանդիսավորությամբ տոնախմբում է մեռոնի օրհնության արարողությունը, ինչպես մենք արեցինք այսօր: Մենք, իբրև ձեր Հայրապետը, հոգեպես անհունորեն մխիթարված ենք, որ դուք, սիրելի զավակներ Մեր, թե՛ մայր երկրից՝ սովետական հայրենիքից և թե՛ արտասահմանի երկրներից, հավաքվել եք հազար-հազարներ, որպեսզի ներկա գտնվեք այս սուրբ արարողությանը:

Սրբալույս մեռոնը պատրաստվում է մեզ մոտ բացառիկ ուշադրությամբ ու խնամքով, աղոթքներով և ծիսական արարողություններով: Գիտեք անշուշտ, սիրելի հավատացյալներ, թե մեր եկեղեցին մեռոնը պատրաստում է հիմնականում ձիթենու յուղից՝ ձիթայուղից, բայց մեջը խառնում է բավականաչափ բալասան, և նաև քառասուն համեմունքների և ծաղիկների հյութեր, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում վարդի յուղը, նարնջի յուղը և ծիրանի յուղը: Մենք այս բոլորը խառնեցինք այսօր այս մեր օրհնած սրբալույս մեռոնի մեջ: Ու այսպիսով սրբագործվեց այն: Մենք վստահ ենք, թե Աստված պիտի ընդունի մեր աղոթքները, մեր ուխտերը, և այս մեռոնը իր սրբարար զորությամբ պիտի բաշխվի տարիներ-տարիներ շարունակ հետ այսու, մեր ժողովրդի բոլոր զավակներին, որոնք մկրտությամբ դրոշմվում են սրբալույս մեռոնով:

Մեր իղձն ու մաղթանքն է, որ հայ ժողովրդի մեջ ոչ մեկը չմնա ճակատը առանց մեռոնի:

Մեր ժողովուրդը հավատում է սրբալույս մեռոնի սրբարար զորությանը: Մենք էլ հավատում ենք, որ մեռոնը սրբացնում է, մաքրում, ազնվացնում մեր մարմինն ու հոգին: Մեր ժողովուրդը հավատում է սրբալույս մեռոնի շնորհատու զորությանը, թե սուրբ մեռոնի միջնորդությամբ սուրբ Հոգին բաշխում է մեր ազգի զավակներին Իր շնորհները, այսինքն՝ լույսը գիտակցության, ճառագայթը հանճարի և առաքինությունները բարոյական, որոնցով զարդարված են մեր ժողովրդի հոգիները տակավին այն օրերից, երբ ս. Գրիգոր Լուսավորիչը, հենց այստեղ երևի, առաջին անգամ սուրբ մեռոն օրհնեց, և այդ օրերից սկսեց բաշխվել այն:

Եթե նկատեցիք այսօր, Մենք հատուկ սափորով նոր մեռոնի մեջ խառնեցինք նաև հին մեռոնից մի մաս: Այդ նշանակում է, որ դրա մեջ կար նաև

մի մասնիկ այն օրհնված մեռոնից, որ սրբացավ ս. Գրիգոր Լուսավորչի օրհնությամբ և ձեռամբ: Մեր ժողովուրդը հավատում է սրբալույս մեռոնի բուժիչ զորությանը և, այո, Մենք էլ հավատում ենք, որ մեր մարմնի տկարությունները և մանավանդ մեր հոգեկան վերքերը և վշտերը ամոքվում են և մեղմանում, և երբեմն նույնիսկ բուժվում սրբալույս մեռոնի զորությամբ:

Մեր ժողովուրդը հավատում է, և մեր պատմությունն էլ վկայում է, որ սրբալույս մեռոնը ունի իր մեջ նաև եղբայրարար զորություն, այսինքն՝ թե բոլոր նրանք, ովքեր ընդունում են իրենց ճակատի վրա դրոշմը այս մեռոնի, դառնում են նույն եկեղեցու, նույն ազգի անբաժանելի զավակները, և դառնում այսպիսով հարազատ եղբայրներ: Համայն հայ ժողովուրդը սուրբ մեռոնով կազմում է անքակտելի մի եղբայրություն՝ հոգևոր, մշակութային և ազգային իմաստով: Այս մանավանդ թելադրանքն է և պատգամը մեր բազմադարյան պատմության:

Մեր ժողովուրդը հավատում է նաև, վերջապես, սրբալույս մեռոնի խաղաղարար զորությանը: Սուրբ մեռոնի միջոցավ սուրբ Հոգվո շնորհների բաշխումով հայ հավատացյալների հոգիները խաղաղվում են, աճում է սերը և եղբայրական ոգին նույն ժողովրդի զավակների միջև, և առհասարակ մարդկանց միջև:

Մենք խոսում ենք մեր դարաշրջանում խաղաղության մասին, և ճիշտ ենք անում, որ խոսում ենք ու աղոթում: Աղոթում ենք վասն խաղաղության ամենայն աշխարհի: Բայց պետք չէ մոռանալ, և այդ Հիսուսի Ավետարանն է մեզ թելադրում և ուսուցանում, որ ճշմարիտ խաղաղությունը սկիզբ է առնում մարդկանց հոգիներից: Հետևաբար մենք մաղթում ենք, որ այս սուրբ մեռոնով խաղաղություն իջնի հայ ժողովրդի բոլոր զավակների հոգիների մեջ, և այդ խաղաղության ճառագայթումը տարածվի նաև մեր ազգի սահմաններից այն կողմ, և իրականանա Աստուծո կամքը՝ «երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»: Մանավանդ մենք, իբրև հայ ժողովրդի և եկեղեցու զավակներ, որ անցյալում բազում անգամներ մահվան անդունդի առջև ենք գտնվել, պատերազմի արհավիրքների շրջաններում, ինչպես այդ պատահեց մանավանդ 1915—1916 սև տարիներին, ինչպես այդ պատահեց հերոսական մարտնչումների տարիներին, Հայրենական մեծ պատերազմի ընթացքում, մաղթենք և աղոթենք, որ աշխարհը, ժողովուրդները և մարդիկ այլևս երբեք և երբեք, և ոչ մեկ տեղ չտեսնեն պատերազմներ և արյունահեղություններ, տիրի եղբայրություն և համերաշխ գործակցություն բոլոր ազգերի և բոլոր պետությունների միջև, հերջանկություն բոլորին:

Սիրելի ժողովուրդ, այս մաղթանքներով Մենք մի անգամ ևս գոհություն ենք մատուցում Աստծուն, որ Մեզ արժանի արեց օրհնելու այսօր սուրբ մեռոնը մեր եկեղեցու և մեր ժողովրդի համար: Բոլորի՜դ, բոլորի՜դ, որ ներկա եք այստեղ և համայն մեր ժողովրդին՝ օրհնություն աստվածային, լույս և շնորհք Հոգվույն սրբո, և սեր ու խաղաղություն Տեառն մերո Հիսուսի Քրիստոսի, այժմ և հավիտյան. ամեն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Սրբալույս մեռոնի օրհնությունից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով, երգով ու խնկով, բազմահազար ժողովրդի խանդավառ արտահայտություններ ներքո առաջնորդվեց Վեհարան՝ օրվա տոնի առթիվ ընդունելու շնորհավորություններ:

Օտար և հայ ողջ հոգևորականությունը, պատգամավորներն ու հյուրերը, ուխտավորները և պաշտոնական այլ անձինք տեղ էին գրավել շքեղ գահասրահում:

Այստեղ ևս ներկա էին պարոն Սարգիս Գասպարյանը և պարոն Անդրանիկ Հասրաթյանը:

Հանուն հայ եկեղեցու լրության, բովանդակ հայ ժողովրդի, սրբալույս մեռոնի օրհնության ուրախ առիթով **Հայոց Հայրապետին** սրտառուչ բարեմաղթություններով շնորհավորեց Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ **տ. Սերովբե արքեպիսկոպոսը** հետևյալ ուղերձով.

ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ

(26 սեպտեմբերի 1976 թ.)

Աստվածարյալ Հայրապետ,

Այսօրվան պատմական և վեհաշուք սրբալույս մեռոնի օրհնության առթիվ թույլ տվեք հանուն հայ հոգևոր դասուն, հայ հավատացյալներուն և հանուն ամբողջ հայ ժողովուրդին, որ ի հայրենիս և ի սիյուռս աշխարհի, սրտագին շնորհավորել Ձեզ և հայտնել ամենուն երախտագիտական զգացումները Ձերդ Ս. Օծության հանդեպ:

Ձեր հայրապետության քսան և մեկ տարիներու ընթացքին Աստված բախտավոր առիթը շնորհեց Ձեզի չորս անգամ կատարելու շնորհաբաշխ սուրբ մեռոնի օրհնությունը. բայց այսօրվանը ամենեն պատմականն ու մեծաշուքը եղավ, վասն զի ոչ միայն բազմահազար հավատացյալներ խանդավառությամբ, երկյուղածությամբ և արցունքոտ աչքերով հետևեցան այս բացառիկ և հոգեպարար արարողության, այլև անոր մասնակցեցան, նաև պատմական և քույր եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչները, որոնց անունները Դուք արդեն հիշեցիք Ձեր այնքան հոգեշունչ և պերճախոս պատգամին մեջ:

Սուրբ մեռոնի օրհնությունը մեր եկեղեցվո ամենեն ժողովրդական և խորհրդավոր արարողությունն է, ուր սուրբ Հոգվույն շնորհները կիջնեն և սուրբ մեռոնի միջոցավ կբաշխվին հայ հավատացյալներուն: Ան մեր ժողովուրդի հոգեկան կյանքի ամենեն թանձրացյալ արտահայտություններեն մեկն է, որ ոսկի շղթայով մը մեզ կկապե մեր անցյալի հավատավոր հայրապետներու ստեղծագործ ոգիին, հայրապետներ, որոնց արժանավոր հաջորդն եք Դուք, և կզորացնե ու կվերապրեցնե մեր ազգային սրբությունները, մեր քրիստոնեական հավատքը և սերը մեր հոգևոր և մշակույթի արժեքներուն:

Կուզեմ վստահեցնել Ձերդ Վեհափառությունը, որ այս պատմական և հիշատակելի օրվան առթիվ ամբողջ հայ ժողովուրդին մտածումներն ու զգացումները կեդրոնացած են մայր հայրենիքի սիրտին՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի մեջ կատարվող սրբալույս մեռոնի օրհնության և շինարար, ազգասեր և աստվածարյալ Հայրապետիդ 20 տարիներու արդյունաշատ գործունեության շուրջ:

Մեր ժողովուրդի պատմությունը ալեկոծ ծովու մը կնմանի, որուն միակ խաղաղ նավահանգիստը եղած է մեր ս. եկեղեցին և անոր հայրապետները,

անոր ոչ միայն հոգևոր, այլ նաև քաղաքական առաջնորդները եղած են անոր դժվարին պայմաններուն մեջ: Դուք ալ, Վեհափառ Հայրապետ, անոնց արժանավոր հաջորդը, ոչ միայն բացառիկ կերպով այս 20 տարիներու ընթացքին պայծառացուցիք և ծաղկեցուցիք Մայր Աթոռ ս. Էջմիածինը, անոր շրջակա վանքերը և բոլոր եկեղեցիները, այլ նաև մեր հավատքին խորհուրդը՝ ս. Էջմիածինը, և ամբողջ մեր ազգային սրբությունները վերակենդանացուցիք, և անոնք վերստին ծնան ամբողջ հայ ժողովուրդի հոգիին և մտքին մեջ: Ատոր համար, Վեհափառ Հայրապետ, մեր ամբողջ ժողովուրդը երախտապարտ է Ձերդ Ս. Օծության, որ այս 20 տարիներու ընթացքին ապահով և իմաստուն կերպով ղեկավարեցիք-առաջնորդեցիք մեր եկեղեցին և, Մայր Աթոռ ս. Էջմիածնի հովանիին տակ, հովվեցիք և մխիթարեցիք զանոնք, որուն համար ամբողջ հայ ժողովուրդը երախտապարտ է Ձեզի: Ամեն եկեղեցի, ամեն գաղութ կարծեք թե մրցումի ելած է ավելի փառավոր կերպով տոնելու, հիշատակելու և պանծացնելու համար Ձեր 20 տարիներու այնչափ արդյունավոր վաստակը:

Հանուն ամբողջին, Վեհափառ Հայրապետ, դարձյալ շնորհակալություն և երախտագիտություն Ձեզի, մաղթելով, որ Աստված տակավին շատ երկար, առողջ կյանք պարգևե Ձեզի, որպեսզի ուղղիսի պատմական, համազգային և համաեկեղեցական դեպքերով պայծառացնեք Մայր Աթոռը, տարածեք քրիստոնեական լույս հավատքը, ի փառս Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց առաքելական եկեղեցվո և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Այս առթիվ, Վեհափառ Հայրապետ, թույլ տվեք, որ մասնավորապես հիշեմ, թե ֆրանսահայ գաղութը ս. մեռոնի օրհնության և Ձեր գահակալության հանդիսավոր առիթով, որոշած է Փարիզի մեջ պատրաստել տալ կոպլեն գորգ մը ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, հավերժացնելու համար Ձեր գահակալության 20-րդ տարեդարձը և այսօրվան սրբալույս մեռոնի օրհնությունը: Իսկ Փարիզի մեր ազգայիններեն Մայր Աթոռ ս. Էջմիածնի բարերար և փարիզյան շրջանի Աստվածածին եկեղեցվո բարերար պ. Նուրհան Ֆրենկյան, ի հիշատակ անցած տարի Ձեր այցելության իր ողջակը և իր ընտանեկան դամբարանին օրհնության առիթով, իր կողմե կնվիրե, Փարիզի հայ ոսկերիչներուն կողմե պատրաստված, իր և իր ընտանիքին կողմե իբրև նվեր այս գավազանը, որ այժմ իր իսկ ձեռքով պիտի հանձնե Ձերդ Վեհափառության:

Երկար կյանք և առավել արդյունավետ գործունեություն Ձեզ՝ միշտ ի փառս Աստուծո և ի պայծառություն Հայաստանյայց առաքելական եկեղեցվո և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Հանդիսության ավարտին Հայոց Հայրապետը հանդես եկավ շնորհակալության և օրհնության հետևյալ խոսքով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ
(26 սեպտեմբերի 1976 թ.)

Աստվածային օրհնություն ենք համարում այն իրողությունը, որ Մեր գահակալության 21 տարիների ընթացքում անավասիկ չորրորդ անգամն է, որ կարողացանք Մեր հոգևոր եղբայրների հետ միասին օրհնել սրբալույս մեռոնը: Մեր կյանքի ամենաերջանիկ օրերից մեկն է այսօր:

Շնորհակալություն բոլորին: Նախ մեր քույր եկեղեցիների Հովվապետներին և ներկայացուցիչներին, մեր մայր եկեղեցու բարձրաստիճան հոգևոր

եղբայրներին, մեր ժողովրդի զավակներին, որոնք շրջապատում են Մեզ այս պահին: Մենք զգում ենք նրանց սերն ու հարգանքը դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Շնորհակալություն նաև Ձեր զգացված, ջերմ, եղբայրական խոսքերի և մաղթանքների համար, սիրելի Սերովբե սրբազան: Ձեզի հատուկ պերճախոսությամբ Դուք վեր հանեցիք կարևորությունը այս պատմական օրվան:

Շնորհակալություն նաև Ձեզ, հարգարժան տիար Նուրհան Ֆրենկյան, այս գեղեցիկ հուշանվերի՝ ոսկեգլուխ հայրապետական գավազանի համար, որ պիտի մնա անմոռանալի հիշատակ, դարեր շարունակ, և Մեր ձեռքից այն պիտի փոխանցվի Մեր հաջորդներին, ու այս ձևով միշտ պիտի հիշվի Ձեր անունը, Ֆրենկյան պատվական գերդաստանի անունը: Թող Աստված լուսավորի հոգիները Ձեր բոլոր ննջեցյալների: Աստված երկար կյանք պարգևի Ձեզ, Ձեր զավակներին և թոռներին, և արժանի անի ձեզ բոլորդ սուրբ Հոգու շնորհներին. Ամեն:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, ի պատիվ հայ և օտար հոգևորականության, օրվա հանդիսության առթիվ տրվեց պաշտոնական ճաշկերույթ:

ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ

Սեպտեմբերի 27-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհարանի հանդիսությանց շքեղ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության քսանամյակին:

Վեհարանի հանդիսությանց դահլիճը լցվել էր հայ և օտար հոգևորականներով, պատգամավորներով, հյուրերով, ուխտավորների բազմությամբ, ինչպես նաև մայրաքաղաքի գիտական, մշակութային, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներով և արվեստագետներով՝ շուրջ 400 հոգի:

Հոբելյանական սույն հանդիսությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսության բացումը կատարեց Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի ու ընծայարանի վերատեսուչ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ **տ. Շահե արքեպիսկոպոս Ամեմյանը:**

Այնուհետև հոտնկայս, խմբական արտասանությամբ ասվեց «Հայր մեր»-ը, որին հաջորդեց ՀՍՍՀ պետական հիմնի նվագի կատարումը:

Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակի առթիվ կազմված Կենտրոնական հոբելյանական հանձնաժողովի անունից առաջինը հանդես եկավ Երուսաղեմի հայոց պատրիարք **ամենապատիվ տ. Եղիշե արքեպիսկոպոսը** հետևյալ բովանդակալից և ջերմ ողերձով.

Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԽՈՍՔԸ

Հանդիսավոր գիտակցությամբ որուն խորքը հիացում կկազմե, հայ ժողովուրդը ամենուրեք իր հարգանքի տուրքը կբերե վերստին Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Վեհափառ կաթողիկոսին, Անոր քսանամյա գահակալության հոբելյանին առիթով:

Մեծ մարդոց հոգիին բացատրությունը պետք է որոնել հոգիին մեջ այն ժողովուրդին, որուն ծոցածին զավակներն են անոնք: Անշուշտ բարեպաշտ

մոր մը և ազնվական հոր մը հոգիեն ստացած է այսօրվան հոբելյարը Իր հոգիին կայծը, որ այժմ խարույկի է վերածվեր Իր մեջ, մեր ցավերուն և կարիքներուն իբրև սպեղանի և փարոս առաջնորդության: Մեծ մարդերը անձնավորյալ արտահայտություններ են իրենց ցեղին ու ժամանակին, անոնց կյանքի պատմությունը պետք է որոնել ոչ թե հույլ մը թվականներու և

Ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարք Երուսաղեմի հայոց

ծանոթություններու մեջ, որոնցմե կիյուսվի կենսագրություն մը, այլ լուսաբանության մեջ այն ձգտումներուն և շարժառիթներուն որոնք կհատկանշեն անոնց ժամանակն ու միջավայրը:

Անոնք որ տակավ կրցին ճանչնալ Նորին Սուրբ Օծությունը Իր իղձերու

անկեղծությանը մեջ և մեր ժողովուրդին խոր կարիքները, կզգան այժմ թե Լուսավորչի Աթոռին գահակալ ըլլալու Իր ընտրությունը նոր թվականի մը առավոտը կբերեր հայ եկեղեցվո երկնքին ներքև: Այս մտածումը իր մեջ ոչինչ ունի պատրողական, վասնզի արդյունք է ոչ թե զգացումի՝ այլ սկզբունքի մը: Այդ սկզբունքը այն համոզումն է թե, համայնքներու շինության գործը կկարոտի բարոյական ուժերու, որոնք երևան կուգան հոգեկան առաքինություններով հարուստ գործիչներու միջոցավ:

Հայության լավագույն օրերը կզուգադիպին միշտ իր բարոյական մեծության թվականներուն: Այդ թվականներեն յուրաքանչյուրին վերև կսավառնի դեմքն ու անունը տեսիլքով լեցուն մարդոց, որոնց մեջ կապրի Աստուծո հոգին, առաջնորդության ճշմարիտ ուժը: Այդ հոգիեն բաժին մը կա Նորին Ս. Օծություն Վազգեն կաթողիկոսին մեջ: Առանց այդ հոգիին, ամեն օր մարդուն մեջ ապրող կենդանի տեսիլքին, մենք պատրանքի զոհեր ենք միայն: Առանց այդ կենդանի շունչին մեր խոսքը բարբսջանք է, իսկ մեր գործը անիմաստ շարժումներու տեսարան մը:

Նորին Սուրբ Օծությունը հոգիի և տեսիլքի մարդ է, մեր օրերու ամենեն պատկառելի և բացառիկ արժեք ներկայացնող դեմքը: Անհատներու կյանքին մեջ քիչ անգամ կարելի է հանդիպիլ որ պատվո և դիրքի հառաջդիմությունը զուգընթաց քալած ըլլա զուտ անձնական արժանիքին հետ, ինչպես կհաստատվի Նորին Ս. Օծություն Վազգեն կաթողիկոսի պարագային: Այս է պատճառը անտարակույս որ Իր կյանքը տեսարան մը ըլլալե ավելի փառք մըն է մանավանդ. զայն դիտելով մարդ հրճվանքեն ավելի կսորվի, այսինքն կաճի փորձառությամբ և հոգիով: Անոնք մարդեր են, որոնք կրնան կարդալ անկեզ մորենիին վրա իրենց ժողովուրդին ճակատագիրը: Որոնք կրնան լսել ձայնը որ զիրենք իրենց ժողովուրդի առաջնորդության կկանչե:

Հասկացողության խոշոր տարբերություն մը կա անշուշտ արժեքի և արժանիքի ըմբռնումներուն միջև: Առաջինը վիճակ մըն է, իսկ երկրորդը հավելյալ առաքինություն մը, որուն կարելի է տիրանալ կամքով և գիտակցությամբ: Ծնիլ արքայորդի արժեք է անշուշտ, բայց այդքան միայն. անոր բուն արժանիքը մարդ կունենա այն ատեն երբ արժեքը կարենա վերածել արժանիքի: Ահա թե ինչպես Նորին Սուրբ Օծությունը ավելի քան երեսուն տարիներ անձնազոհ հոժարությամբ նվիրելե ետք Ինքզինքը կոչումներու ամենեն խորհրդավորին և ազնվականին, կրցած է բարձրանալ քահանայությենե քահանայապետության, շնորհիվ իր անբասիր նկարագրին, իմաստության, հոգեկան կարողություններուն և արդյունավոր գործունեության:

Գործը քսան տարիներ առաջ ստանձնեց Նորին Ս. Օծությունը, դյուրին չէր: Բոլորս ալ գիտենք թե Աթոռները փառապանծ գահեր ըլլալե ավելի խաչեր են: Դժվարությունները շատ հաճախ այնքան մեծ են, որ հրաշքներու պետք կա զանոնք դիմակալելու: Սակայն ազգին վստահությունը առաջին մեկ օրեն այնքան մեծ եղավ իր սիրելի Հայրապետին նկատմամբ, որ սիրով պահանջեց որ գործվի այդ հրաշքը: Մայր տաճարի նորոգությունը, Վեհարանի բարեզարդումը, ճեմարանին և տպարանին տրված նոր թափը և Մայր Աթոռի տնտեսական վերականգնումը առէջներ եղան հրաշքի այդ թեզանին:

Ավերներեն վերականգնող նորափետուր մայր հայրենիքի կողքին Նորին Ս. Օծությունը գիտցավ շինել, զարդարել և ծաղկեցնել Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Հայ ժողովուրդը անցնող հիսուն տարիներուն արքայական պատմուճան հագցուց ավերներու մեջ դարերե ի վեր նստած սգավոր մայր

հայրենիքին, իսկ Վազգեն կաթողիկոս այդ պատմուճանը հագցուց ս. Էջմիածնին: Անոնք, այդ հավերժական զույգ մայրերը, թոթափած իրենց դարավոր փոշին, այժմ իրարու կնային քաղցր ժպիտով, խրած սրբազան դանակը վշտի և թշվառության կոկորդին:

Նման եռամեծար հայրապետներուն, Նորին Ս. Օծության համար Հայոց հայրենիքն ու ժողովուրդը անշամանդաղ ճշմարտություններ են, որոնց պետք է միշտ հավատարիմ մնալ ի գին ամեն զոհողության: Իսկ հայ եկեղեցին աննահանջ դրոշ մըն է, Լուսավորչի կանթեղը որ կլուսավորե մեր անցյալի սխրագործությունները, ինչպես նաև ապագա վաղորդայնները: Այս մտածեսիլ մղումին տակն է որ Ան գործեց քսան ավելի տարիներ, եռանդով, սիրով և հավատարմությամբ, իբրև արժանավոր պետը հայ եկեղեցիին:

Տակավին, հովվապետի գավազանը առած քանի անգամներ, Նորին Ս. Օծությունը շրջած է աշխարհե աշխարհ, գաղութե գաղութ, օրհնելով, սփոփելով և հրահանգելով աշխարհացրիվ Իր հոտը ս. Էջմիածնի և վերածնող մայր հայրենիքի զգացումովն ու գաղափարովը: Այդ զույգ զգացումներու ոսկի գետն է որ կհոսեցնե Ան, տարիներե ի վեր, արտասահմանի մշուշներուն նստած Իր պանդուխտ զավակներու հոգիեն ներս:

Ի վերջո պետք է գիտնանք թե ս. Էջմիածինը ոչ միայն բարձր բերդն է հավատքին, այլ նաև ոսկի կամուրջը հայ սփյուռքի և մայր հայրենիքի միջև: Սրբազան տապանակը որուն մեջ տակավին պահված կմնա հազար անգամ նահատակված բայց հավերժ կենդանի ժողովուրդի մը հոգևոր մխիթարության և հավատքի մուրհակը: Ան մեր դարավոր մութերը լուսավորող փարոսն է եղած, մեկ ուրիշ երեսը մեր հայրենիքին ու ժողովուրդին: Ամեն անգամ երբ աղետները հարվածեր են մեր մեկ երեսը մենք մյուսն ենք դարձուցեր, մշտնջենավորելու մեր ազգային գոյությունը: Առանց ս. Էջմիածնի, մեր ժողովուրդի հոգևոր երեսին, շատ բան պիտի պակսեր մեր կյանքեն և մեր ժողովուրդի ապագա սխրագործություններեն: Չկա ստեղծագործություն, մեջն ըլլալով նաև գեղեցիկ տիեզերքին, եթե անոր կպակսի հոգեկան տարրը որ կբոցավառե զայն իր հոգիին ռիթմովը:

Դժվար է անշուշտ արժանիքներու համեմատական կշիռը կազմել, սակայն մարդիկ մեծ են համաձայն իրենց ձգտումներուն: Անոնք որ կխիզախեն իրենց անձին համար, իրենց անձը կարժեն. անոնք որ կպայքարին ի խնդիր աշխարհի նյութական բարիքներուն, աշխարհը կգտնեն լոկ. իսկ անոնք որ կձգտին իրենցմե անդին, հավիտենական ու համայնական ճշմարտություններուն, մեծագույններն են մարդոց որդիներեն, որոնք գիտեն մարդոց բերել կաթիլ մը լույս և ափ մը բարիք, ամոքելու անոնց կիզիչ պասուքը:

Վեհափառ Տեր, թույլ տվեք որ հաբուն հայ եկեղեցվո լրության, պաշտոնեության և ժողովուրդին, շնորհավորեմ Ձեր գահակալության քսանամյակը, մաղթելով ի սրտե որ աստվածային օրհնությամբ տակավին երկար ապրիք, իբրև իմաստուն դիտապետ և ծիր մատովակը մեր եկեղեցիին: Ապրիք երկար, իրականացնելու ոչ միայն Ձեր իղձերը, այլ նաև որպեսզի տեսնեք իրականացումը մեր ժողովուրդի դարավոր երազին:

Ողորմած Աստված մեր հայրերուն թող միշտ անսասան պահե Լուսավորչի գահը, ինչպես նաև սովետական մեր հայրենի աշխարհը. թող իր վրայեն չանցնի բնավ սև թևը չարիքին, և իր կողերուն չծանրանա բռունցքը բռնակալին: Չպակսի թող իր հողերեն հայ բազուկը շինարար, իր գործարաններեն ձայնը աշխատանքի ոսկի մուրճին: Առատ ըլլան միշտ հնձանները-

ը բարիքին և բացվի ժպիտը երջանկության հոգիներուն մեջ, որպեսզի կարենանք ըսել մեր սիրտերու խորեն. Ովսաննա նորանորոգ հարուցելույն մեր եկեղեցիին և հայրենիքին:

Հոբելյար Հայոց կաթողիկոսի քսանամյա գործունեությանը նվիրված Գերագույն հոգևոր խորհրդի զեկուցագիրն ընթերցեց **տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը** (Սույն զեկուցագիրը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 12):

Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակի առիթով **Գերագույն հոգևոր խորհուրդը** պատրաստել էր տվել ականակուռ և ոսկեձույլ **Հայրապետական Արծիվ** պատվանշանը՝ հանուն մեր սուրբ եկեղեցու և համայն հայ ժողովրդի, իբրև որդիական երախտագիտության և հավատարմության արտահայտություն: Պատվանշանը հետևյալ գեղեցիկ գրաբար ձոնուղերձով մատուցվեց Վեհափառ Հայրապետին.

«ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ԵՒ ՍՐԲԱԶՆԱՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

Վեհափա՛ռ Տէր,

Յայտ առնեմք Սրբութեան Ձերոյ, եթէ Գերագոյն Խորհուրդ աստուածակառոյց Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, խորհուրդ ի մէջ արարեալ, անդաճեաց զեկեղեցաշէն, հայրենանուէր եւ յոգնաջան գործս շնորհազարդ Հովուապետիդ Ամենայն Հայոց:

Յաւուրս քսանամեայ վեհաշուք գահակալութեան մեծի Քահանայապետիդ, Եկեղեցի Հայաստանեայց, որ խրթնաբեալ էր ի բարեզարդութենէ բեմբին, յոյժ պայծառացաւ եւ բարձրագոյնս կամակարութեամբ երևելի եղև յաշխարհիս եւ յազգիս մերում:

Վասն որոյ Գերագոյն Խորհուրդ Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի, ի տրիտուր աստուածահաճոյ գործոց Եպիսկոպոսապետիդ Ամենայն Հայոց, այլև ի նշանաւորումն քսանամեայ գահակալութեան Ծայրագոյն Պատրիարքիդ եւ Կաթողիկոսիդ, սահմանեաց շնորհել մեծագործ Գահակալիդ մեծի Աթոռոյս եւ Հովուապետիդ, զականակուռ եւ զոսկեհուռ **զԱրծուի Հայրապետական,** թողուցեալ հայրենի թևօք, յանուն մերս Սրբոյ Եկեղեցւոյ եւ համայն ժողովրդեան Հայոց:

Վեհից Վեհագոյն, ընկա՛լ քաղցրութեամբ զայս ոսկեգնիս սրբանուէր, որ վայել է Մեծի Հօրդ, քանզի Դո՛ւ ես Հովիւ քաջ եւ իմաստուն քրիստոսահիմն Եկեղեցւոյ եւ Քև պարծին Եկեղեցի Հայաստանեայց եւ ամենայն ժողովուրդն Հայոց:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, եւ զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետի, պայծառացուցեալ ծաղկեցո՛ յամայր ամս»:

ԱՆԴԱՄՔ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՅ՝

ՊՐՈՖ. ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼԵԱՆ	ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊՐՈՖ. ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲԵԱՆ	ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍԵԹԵԱՆ	ԾԱՀԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԴՈՑԵՆՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՓՈՒԶԵԱՆ	ՅՈՒՍԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Մայր Աթոռ սուրբ Էջմիածին,
27 սեպտեմբերի 1976 թ.»;

Գերագույն հոգևոր խորհրդի սույն ձոն-ուղերձը հանդիսավորությամբ ընթերցեց **տ. Շահե արքեպիսկոպոսը**, որից հետո, բոլոր ներկաների սրտագին ծափողջույնների տակ, **տ. Սերովբե արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին** հանձնեց վերոհիշյալ պատվանշանը՝ զարդարելով Նրա կուրծքը:

Ապա Հայաստանի կառավարության և ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի անունից ողջույնի և շնորհավորանքի խոսքով հանդես եկավ խորհրդի նախագահ տիար **Սարգիս Գասպարյանը** (Սույն ողջույնի խոսքը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 9):

Տասը րոպե ընդմիջումից հետո ողջույնի և շնորհավորանքի հետևյալ ջերմ խոսքերով հանդես եկավ Կ. Պոլսի հայոց **տ. Շնորհք պատրիարքը**՝ հանուն հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների և բոլոր թեմերի.

Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,

Սրբազան ու հարգարժան հանդիսականներ,

Ցնծության մեջ է համայն հայությունը, որ գիտե, թե մենք, այսինքն իր պաշտոնական պատվիրակները և անպաշտոն ներկայացուցիչները, հավաքված ենք այսօր այստեղ, հայրենի երկինքին ներքև, ու հայրապետական այս երդիքի տակ ու կտոնախմբենք հանդիսավոր իրադրության մեջ, Ձեր Ս. Օծության գահակալության 20-ամյակը:

Այս ցնծատոնին մենք կբերենք ամենեն առաջ սրտաբուխ սիրո տուրքը համայն հայ թեմերու և իրենց ժողովուրդին: Ու այդ սիրո սրտագին տուրքին կմիացնենք անոնց որդիական ամենաջերմ շնորհակալությունները և հավատարմական զգացումները, իբրև արգադիր նվեր, ու կմատուցանենք զանոնք Ձեր գահակալության քսանամյակի այս երջանիկ տոնախմբության առիթով:

Արժանապես ու լրիվ ի հանդես բերվեցան արդեն Ձեր Ս. Օծության հայրապետական 20 տարիներու իրագործումները. ներկայացվեցաք իբրև շինարար ու ժողովրդանվեր կաթողիկոսը Ամենայն Հայոց. հետևաբար մենք այդ մասին չէ, որ պիտի անդրադառնանք. բայց պիտի չկրնանք չհիշել գեթ անցողակի և համառոտիվ երեք երևույթներ, որոնք մեր համոզումով կկազմեն կարևորագույն երեսները Ձեր Սրբության բազմաբեղուն կյանքին ու գործին, որոնք սերտորեն կապ ունին նաև մեր նվիրապետական Աթոռներու և թեմերու հետ:

Առաջինը Ձեր հոգևոր հոտին բացվելու և բաշխվելու տրամադրությունն է: Դուք եղաք այն բացառիկ ու երջանիկ հայրապետը, որ չմնաց իր փղոսկրյա աշտարակին մեջ, այլ դուրս եկավ անկե շփման մեջ մտնելու համար իր ժողովուրդին հետ գրեթե ամենուրեք: Դուք մոտեցաք ամենքին ու մոտեցուցիք Մայր Աթոռը ամենքին: Դուք իբրև բարի հովվապետ հաճախ ձգեցիք Ձեր հոտի 99 տոկոսը իր խաղաղ ու ապահով արոտավայրին մեջ, գացիք անձամբ փնտրելու կորուստի վտանգին մատնված հատվածը Ձեր հոտին: Գտաք զայն ու մանավանդ գտնվեցաք անկե: Սիրեցիք ամենքը և սիրվեցաք ամենքեն, ու Ձեր հայրական սիրո ճառագայթումով մխիթարեցիք և սրտապնդեցիք զանոնք: Եվ օտար ջուրերու մեջ իսպառ չկորսվելու գաղտնիքը պարզեցիք անոնց, հորդորելով, որ իրենց հայացքները շարունակ հառած պահեն Մայր Աթոռ ս. Էջմիածնին և անով մարմնավորված սրբություն-

ներուն: Երախտապարտ է արդարև արտասահմանի հայությունը Ձեր այս հայրական հոգածության ու հայրապետական հետաքրքրության համար:

Բաշխեցիք Ձեր հայրապետական օրհնությունները, կոնդակներով ու ս. Գրիգոր Լուսավորչի շքանշաններով, ոչ միայն Մայր Աթոռի բարերարներուն, նյութական նվիրատուներուն, այլ նաև մեր ժողովուրդի բարոյական նվիրատուներուն, այսինքն մտքի ու գեղարվեստի մշակներուն, որոնք ամբողջական նվիրումով, հաճախ առանց փողի և թմբուկի, կծառայեն մեր դպրության և հայ մշակույթի այլ մարզերուն մեջ:

Երկրորդ կետը, զոր կուզենք ընդգծել այս երջանիկ առիթով, Մայր Աթոռի ամբողջական վերականգնումը և նյութական վերաշինությունն է: Ավելորդ կնկատենք թվել փաստերը մի առ մի: Քարերը կաղաղակեն արդեն այդ մասին: Ու Մայր Աթոռի ընդհանրական նյութական այդ վերելքը մարմնավորված ու խորհրդանշված է վերանորոգյալ Վեհարանի այս հոյակերտ կառույցին մեջ, որ պատիվ կբերե ոնէ եկեղեցիին: Մենք հույս մեծ ունինք, թե Մայր Աթոռի նյութական այս վերանորոգչական գործին պիտի հաջորդե Հայց. եկեղեցիի վարչական մեքենականության վերանորոգությունը, իր մայր կանոնագիրով ու եկեղեցական կանոնագիրքով:

Երրորդ կետը, որուն կուզենք անդրադառնալ ու շեշտել անոր կարևորությունը, Նոր Կտակարանի արևելահայ բարբառի թարգմանությունը և հրատարակությունն է Մայր Աթոռի տպարանեն:

Մարդիկ ընդունին կամ ոչ՝ մեր հավատքը և համոզումը կմնա անխախտ, թե Նոր Կտակարանը աշխարհի Գերագույն Գիրքն է: Մարդկության վրա ամենեն բարերար ու դրական ազդեցությունը ներգործող Մատյանն է: Եթե հանուն Ավետարանի գործված են նաև երբեմն մեղքեր կամ եղած են չարաշահություններ, մեղավորը Ավետարանը չէ, այլ անկատար մարդը, որ հաղորդ չէ եղած Ավետարանի ոգիին և տառին: Նոր Կտակարանի մեջ հայտնվածեն ավելի բարձր ճշմարտություն չէ տրված մարդկության. «Աստված սեր է». կամ «Աստված Լույս է. Անոր մեջ խավարի ոչ մեկ հետք կա» պատգամված է անոր սրբազան էջերուն մեջ, իբրև բարձրագույն ճշմարտություն: Նոր Կտակարանի քարոզածեն ավելի բարձր բարոյական չէ ավանդված մարդերուն. «Սիրե ընկերդ անձիդ պես». կամ «Ըրե ընկերոջդ այն, ինչ որ կուզես, որ ընկերդ ընե քեզի»: Ասոնք կկազմեն կորիզը և համադրությունը Ավետարանի ընկերային բարոյականին, որ եթե գործադրվի, ինքնին պիտի վերնան աշխարհեն պաղ կամ տաք բոլոր պատերազմները և բոլոր անարդարությունները. վերջ պիտի գտնեն բոլոր անհավասարությունները և ընկերային շահագործումները: Հետևաբար Ավետարան հրատարակել՝ կնշանակե ծառայել համամարդկային արդարության ու ճշմարտության դատին:

Բաց աստի, խաղաղությունը, որ մարդկային ազգի գերագույն բաղձանքը և բարիքն է, ուրիշ ոչ մեկ գրքի մեջ այնքան կարևորություն և շեշտ ստացած է, որքան Ավետարանի էջերուն մեջ. հետևաբար զայն հրատարակել ու տարածելը՝ կնշանակե ծառայել նաև խաղաղության դատին:

Ձեր Վեհափառության օրով ու գլխավորությամբ հրատարակված Ավետարանը կմնա Ձեր Ս. Օծության կոթողական գործերեն մեկը: Մենք մեծ գոհունակությամբ իմացանք, որ արդեն իսկ պատրաստված է Ավետարանի արևմտահայ աշխարհաբարի թարգմանությունը և մոտ օրեն լույս կտեսնե արտասահմանի մեջ: Այս իրողությունը կներշնչե մեզի այն հույսը և վստա-

հությունը, թե Նոր Կտակարանի ամբողջական հրատարակության պիտի հաջորդե նույնքան և ավելի կարևոր հրատարակությունը ամբողջ Աստվածաշունչին, իր գրաբար ու աշխարհաբար ձևերուն մեջ։ Ասիկա պիտի լինի Ձեր Ս. Օծության բազմարդյուն գործունեության պսակը և գագաթը։



Ամենապատիվ տ. Ծնորհք սրբազան պատրիարք Կ. Պոլսի

Աստվածաշունչի հրատարակությունը, բացի իր կրոնաբարոյական բարձր նպատակեն, պիտի ունենա իր քովընտի բարիքները հայ դպրության ու մշակույթին ընդհանրապես և հայ լեզվաբանության մասնավորաբար։

Ծանոթ է, թե մեր գրաբար Աստվածաշունչը առաջին գործը և գլուխ-գործոցն է հայ գրավոր դպրության: Մեր դասական լեզվի գրեթե ամբողջ բառագանձը համադրված է անոր մեջ: Այնտեղ է մեր զույգ աշխարհիկ բարբառներու մայրը, մեր գրաբար լեզուն, իր ոսկեղենիկ փառքին ու վսեմ պարզության մեջ: Հետևաբար խոշոր ծառայություն մը պիտի լինի մեր մտավորականության և հայ դպրության՝ Աստվածաշունչի գիտական գրաբար հրատարակությունը և անոր ճշգրիտ թարգմանությունը:

Ձեր Ս. Օծության նախաձեռնությամբ ի գլուխ հանված մեր պատմական բազմաթիվ տաճարներու նյութական նորոգչական գործերը մեզի կներշնչեն այն հույսը, թե ասոնց պիտի հաջորդեն վերանորոգչական աշխատանքները նաև մեր եկեղեցիի բարոյական հորինվածքին վրա, ծիսական, արարողական ու ժամասաշտական մարզերուն մեջ. որովհետև ասոնք ալ կկարոտին պարբերական վերանորոգության կամ բարեզարդման, ինչպես մեր նյութական տաճարները. որովհետև անոնք ալ ենթակա են ժամանակներու եղծիչ ազդեցության, ինչպես եղած են մեր քարեղեն կառույցները:

Թող ներվի ինձ, Վեհափառ Տեր, վերադառնալ պահ մը իմ իսկական հանգամանքին, իբրև պատրիարք հայոց Թուրքիո, ու այս անգամ թարգման հանդիսանալ նաև իմ ժողովուրդիս զգացումներուն մասնավորաբար:

Մենք այս ցնծատոնին, այսինքն Ձեր անձին հանդեպ երախտիքի արտահայտության այս հանդեսին, նախ կբերենք պարզուկ սերը և անսահման նվիրումը Թուրքիո հայության այն հատվածին, որ ցրված է գավառներու հեռավոր մեկնության մեջ ու կապրի մնացորդացի իր սրտմաշուք օրերը: Ասոնք գրեթե մոռցած ու մոռնալու վրա են այն ամենը, որոնք անհրաժեշտ են ժողովուրդներու կենսունակության և տևականացման համար. բայց անոնք առնվազն կպահեն դեռ հիմնական երկու խարիսխները իրենց գոյության. նախ հայ ծնած ըլլալու գիտակցությունը. և ապա՝ մայր եկեղեցիի, և անով՝ Մայր Աթոռի զավակ մկրտված ըլլալու համոզումը: Կբերենք ապա որդիական խորունկ ու խանդավառ սերը Թուրքիո հայության մյուս մեծ զանգվածին, որ ամփոփված է Վոսփորի զույգ ափերուն վրա. ըսել կուզենք իսթանպուլահայության, որ երբեմն կեդրոնը և կառավարողը եղած էր ամբողջ արևմտահայության: Որքան ալ կապրի ան այսօր իր նվազման օրերը, գրեթե ամեն մարզի մեջ, մեկ բան սակայն չէ նվազած այնտեղ. այդ հարումն ու հավատարմությունն է մեր կրոնական սրբություններուն, ու այդ սրբությունները մարմնավորող Մայր Աթոռին և անոր Գահակալին՝ Ամենայն Հայոց Հայրապետին հանդեպ:

Պոլսո հայության տարեգրության ու ժամանակակից սերունդի հիշողության մեջ անջնջելի պիտի մնա Ձեր Ս. Օծության պատմական այցելությունը պատմական այս քաղաքին: Ուստի անոնց որդիական կարոտի և խոր հարգանքի զգացումներուն կմիացնենք նաև անոնց անմար հույսը, թե օրին մեկը պիտի ստեղծվին ավելի բարեբաստիկ պայմաններ, երբ անգամ մը ևս պիտի ապրին անոնք երջանկությունը Ամենայն Հայոց Հայրապետը իրենց մեջ ունենալու:

Մենք ամենքս պիտի աղոթենք Վեհիդ թանկագին կյանքին արևշատության համար: Պիտի աղոթենք Ձեր մշտական ու տոկուն քաջառողջության համար, որպեսզի Հայց. առաքելական եկեղեցին ու հայ ժողովուրդը երկար վայելեն Ձեր շինարար ու բարերար հայրապետությունը: Պոլսո շրջանակներու մեջ հանախակի գործածված ծանոթ բացատրությամբ մը՝ անպակաս

ընկա Ձեր շուքը մեր գլուխեն: Ու աստվածային և երկնային շնորհը շարունակե առաջնորդ ու հովանի հանդիսանալ Ձեր Ս. Օծության՝ իբրև հրեղեն սյուն խավար գիշերներուն ու իբրև հովանավոր ու զովարար ամպ կիզիչ ցորեկներուն: Եվ շնորհեսցե մեզ Տեր՝ Ձեր Սրբությունը՝ ընդ երկայն ավուրս ուղիղ վարդապետությամբ ու քաջ հովվապետությամբ:

Այնուհետև ողջույնի և շնորհավորանքի խոսքերով հանդես եկան **Տ. Պիմեն Պատրիարքը՝** հանուն ռուս պրավոսլավ եկեղեցու և սուրբ Սինոդի, **Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը՝** հանուն վրաց օրթոդոքս եկեղեցու, **Տ. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոսը՝** հանուն հնդիկ մալաբար ուղղափառ եկեղեցու, **կարդինալ Ժան Վիլլեբրանդը՝** հանուն հռոմեական կաթոլիկ եկեղեցու և Պողոս Զ Պապի, Լոնդոնի **տ. Ջերալդ Ալեքսանդր Էլիսոն եպիսկոպոսը՝** հանուն անգլիական եկեղեցու և Քենտրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Կոգանի, **տ. Գերմանոս Մամալիս միտրոպոլիտը՝** հանուն Երուսաղեմի հունաց պատրիարքության և Տ. Բենեդիկտոս Պատրիարքի, և **տ. Մաուրիլիո Սակկի վարդապետը՝** հանուն Երուսաղեմի կաթոլիկ ֆրանչիսկյան միաբանության:

Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՈՂՋՈՒՅՑՆԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն, սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս, Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք-կաթողիկոս Վազգեն Ա,

Բարձրապատիվ Հովվապետներ և Հովիվներ Հայաստանյայց առաքելական եկեղեցու,

Թանկագին եղբայրներ ու քույրեր,

Հարգելի հյուրեր.

Մեր սիրտը նորից լցված է ուրախությամբ դեպի ամենայն հայոց հոգևոր կենտրոն սուրբ Էջմիածին կատարած Մեր անմոռանալի այցելությամբ, հայ եկեղեցու իմաստուն և բարի Հովվապետ Նորին Սրբություն Վազգեն կաթողիկոսի և Նրա բոլոր գործակիցների հետ Մեր ունեցած եղբայրական ոգեշնչող հարաբերությամբ:

Այս անգամ Մեզ այս օրհնյալ երկիրը բերեց Մեր հոգու և սրտի մղումը, որպեսզի հաղորդենք Ձեզ, Ձերդ Սրբությանը, ռուս պրավոսլավ եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչների, հոգևոր դասի և հավատացյալ ժողովրդի սրտագին ողջույնները Ձեր հովվապետական 20-ամյա արդյունաշատ գործունեության առթիվ:

Բերելով Մեր եղբայրական ողջույնները, միաժամանակ հույս ենք հայտնում և աղոթում, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը բազմապատկի Ձերդ Սրբության ուժերը՝ հետագայում ևս ծառայելու նրա ամենասուրբ անունին և Հայաստանյայց մեծ եկեղեցուն:

Գտնվելով ձեր հինավուրց և օրհնյալ երկրում, Մենք մտքով գնում ենք դեպի այն հեռավոր ժամանակները, երբ հայ ժողովրդի մեջ նոր էր ծագում քրիստոնեության հավատքի արշալույսը առաքելական քարոզչության միջոցով, որով սկիզբը դրվեց Քրիստոսի Ավետարանի տարածմանը Հայաստանում: Մենք վերհիշում ենք սուրբ Գրիգոր Լուսավորչի թափած ջանքերը, ինչպես նաև հայ ժողովրդի և նրա եկեղեցու անցած պատմական տաժանելի ուղին:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին միշտ էլ եղել է հայ ժողովրդի

կողքին, երբ նա ծանր փորձություններ է կրել: Հայ եկեղեցու հեղինակությունը իրոք որ շատ մեծ է ոչ միայն մեր հայրենիքում, այլև ամբողջ աշխարհում: Դրա վկայությունն է այս հանդիսավոր ժողովը, որի մասնակից-



Նորին Սրբություն Տ. Պիմեն Սրբազան Պատրիարք Մոսկվայի և համայն Ռուսաստանի

ների թվում Մենք տեսնում ենք քրիստոնեական մյուս եկեղեցիների հարգարժան ներկայացուցիչներին, որոնք եկել են կիսելու հայ հավատացյալ ժողովրդի այս երջանիկ հանդիսության ուրախությունը:

Ռուս պրավոսլավ եկեղեցին հատուկ հարգանք ու սեր է տածում դեպի հայ առաքելական հնադարյան եկեղեցին: Աշխարհագրականորեն մենք մոտիկ ենք իրար, մեր ժողովուրդների ճակատագրերը սերտորեն շաղկապ-

ված են միմյանց պատմականորեն, մենք միակամ ենք ավետարանական ուսմունքի հաստատման մեջ, իրար հետ ունեցած մեր բարեկամական հարաբերության, դեպի մեր մերձավորները տածած ծառայական սիրո, երկրի վրա խաղաղության գործի ամրապնդման և մեր սովետական մեծ պետության բարիքների բազմապատկման մեջ:

Մենք վստահություն ենք հայտնում, որ Մեր այս այցելությունը ավելի ևս կամրապնդի եղբայրական սրտագին սիրո կապերը մեր սուրբ եկեղեցիների միջև:

Ձերդ Սրբություն, թույլ տվեք Մեզ ռուս պրավոսլավ եկեղեցու անունից մեկ անգամ ևս սրտագին ողջունել Ձեզ այս նշանակալից օրվա առթիվ, ջերմորեն շնորհավորել Ձեզ Ձեր սրբազան հոբելյանի կապակցությամբ, միաժամանակ ողջունել Հայաստանյայց առաքելական եկեղեցու եպիսկոպոսաց և ամբողջ հոգևոր դասին, ինչպես նաև հավատացյալ ժողովրդին, որ ի Հայաստան և ի ամենայն աշխարհի:

Մենք հայտնում ենք Ձերդ Սրբությանը Մեր սրտագին շնորհակալությունը Ձեր սիրալիր ու առատաձեռն հյուրասիրության համար և ամբողջ հոգով մաղթում Ձեր գլխավորած եկեղեցուն հետագա ծաղկում, իսկ անձամբ Ձեզ՝ քաջառողջություն, աստվածատուր ուրախություն և հաջողություն Ձեր բոլոր հետագա ձեռնարկումների մեջ:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսը երկար տարիներ պահպանի Ձերդ Սրբությանը բարեհաջողությամբ:

ՎՐԱՑ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԴԱՎԻԹ Ե-Ի ԽՈՍՔԸ

Այս է որդին, որ ստեղծեց Աստված:

Ժառանգորդ Հիսուսի, համազոր հրեշտակների:

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Առաջին:

Այս օրը հայ եկեղեցու համար բախտավոր մի օր է, որովհետև Դուք կարողացաք քսան տարիների Ձեր ստեղծագործ աշխատանքներով պատիվ բերել նրան:

Այսօր, երեկ և նախանցյալ օրն իմ սիրտը լի էր ուրախությամբ: Համայն Վրաստանը ողջունում է Ձեր գործունեության 20-ամյակը:

Վրաց եկեղեցին քրիստոնեական եկեղեցու հնագույն Աթոռներից մեկն է: Ո՛չ օսմանցիները և ո՛չ պարսիկները չկարողացան մեր աշխարհից ջնջել քրիստոնեությունը:

Ձերդ Սրբություն, մեր երկու եկեղեցիների և ժողովուրդների բարեկամությունը շատ հին է և սերտ: Ոչ մի ուժ աշխարհում չի կարող խախտել մեր դարավոր եղբայրության այդ ամուր կապը: Դուք ամեն ինչ արել եք և շարունակում եք անել, որպեսզի աշխարհի բոլոր ժողովուրդներն ապրեն խաղաղության մեջ, ապահով ու երջանիկ:

Կրկին անգամ հայտնում եմ իմ խորազգաց շնորհակալությունները Ձեր եղբայրական հրավերի և սիրալիր ընդունելության համար:

Խաղաղություն ամենեցուն:

Նորին Սրբություն Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոս վրաց օրթոդոքս եկեղեցու

ՀՆԴԻԿ ՄԱԼԱԲԱՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՍԻԼԻՈՍ ՄԱՐ ԹՈՄԱ ՄԱՏԹԵՈՍ ԱՌԱՋԻՆԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն Վազգեն Ա կաթողիկոս,
Ձերդ Սրբություն Պիմեն Պատրիարք,
Ձերդ Սրբություն Դավիթ Ե կաթողիկոս,
Ձերդ Ամենապատվություն կարդինալ Վիլլեբրանդս,
Գերաշնորհ և պատվարժան եպիսկոպոսներ ու հյուրեր,
Երկար ժամանակ Մեր փայփայած ցանկությունն էր՝ այցելություն տալ

Հայաստանի մեր հարգարժան քույր եկեղեցուն և տեսնել այն ակնհայտորեն հաջող առաջնորդության պտուղները, որ Նորին Սրբություն Վազգեն կաթողիկոսը տվել է Հայց. եկեղեցուն անցնող քսան տարիների ընթացքում:

Նորին Սրբություն Տ. Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոս հնդիկ մալաբար եկեղեցու

Այժմ մեզ համար մասնավոր պատիվ է շնորհավորել Ձերդ Սրբությանը՝ ս. Էջմիածնի հինավուրց գահին Ձեր բարձրանալու 20-րդ տարեդարձի կապակցությամբ:

Այս առթիվ բերում ենք Ձեզ Մեր անձնական եղբայրական ողջույնները և բարի մաղթանքները, ինչպես նաև բարեմաղթությունները մեր 12 թեմա-

կալ առաջնորդ եպիսկոպոսների, մեր ավելի քան հազար ծխական համայնքների և մեր մեկուկես միլիոն հավատացյալների:

Իբրև հետևանք այն իրողության, որ ս. Թովմաս առաքյալը քաջաբար հասավ այն ժամանակվա ծանոթ աշխարհի ամենահեռավոր անկյունները, մենք այսօր Հնդկաստանում պատիվն ունենք խոնարհաբար կրելու Քրիստոսի ջահը՝ լույսն աշխարհի: Սակայն ճիշտ այն պատճառով, որ մենք այնքան հեռու էինք մեր քույր եկեղեցիներից, ս. Թովմասի գահը երկար ժամանակ մեկուսացած մնաց մյուս քրիստոնյա եկեղեցիներից: Այսօր այս տեխնիկական դարը և էկումենիկ շարժումը մեզ նորից իրար մոտ են բերել: Ձերդ Սրբության այցելությունը մեր եկեղեցուն, ավելի քան տասը տարիներ առաջ, դեռևս հիշվում է որպես Հնդկաստանում մեր եկեղեցու վերջին շրջանի պատմության մեծ իրադարձություններից մեկը: Հաճելի է Աստուծո, որ Մենք այժմ փոխադարձում ենք այդ այցելությունը՝ այսպիսով հայրապետական մակարդակի վրա ամրապնդելով այն սերտ կապերը, որոնք մեր երկու եկեղեցիներն իրար են միացրել Քրիստոսի մարմնի մեջ՝ սկսած մեր եկեղեցիների սկզբնավորության հնագույն ժամանակներից:

Այս երջանիկ առիթով թույլ տվեք մի անգամ ևս շնորհավորել Ձերդ Սրբությանը Ձեր քսանամյա հայրապետության հանգրվանին և աղոթել Աստուծո, որպեսզի Ձերդ Սրբությանը շնորհի շատ տասնամյակներ՝ հովվելու համար այս հինավուրց քույր եկեղեցին, պարգևի Ձեզ քաջառողջություն, խոր իմաստություն, նվիրյալ գործակիցներ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է արդյունավետ ծառայության՝ հովվելու համար այս եկեղեցին որպես Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց:

ԿԱՐԴԻՆԱԼ ՎԻԼԼԲՐԱՆԴՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Այցելել Էջմիածին՝ հայ եկեղեցու սուրբ քաղաքը, միշտ էլ խոր ուրախության մի առիթ է առաջին հերթին այն հայերի համար, որոնք ուխտի են գալիս այստեղ աշխարհի այն բոլոր երկրներից, ուր ձեր ժողովրդի շարժուն և գործունյա ոգին կամ սփյուռքի պայմանները քշել-տարել են նրանց, ապա նաև մյուս ազգերի քրիստոնյաների համար, ինչպիսի եկեղեցական իշխանության էլ ենթակա լինեն նրանք:

Այս անգամ Պողոս Զ Պապը, որ մեծ սեր է տածում ձեր եկեղեցու նկատմամբ, մանավանդ Ձերդ Սրբության այցելությունից հետո սուրբ քաղաք՝ Հռոմ, առավել մեծ սիրով ընդունեց Ձեր հրավերը՝ պաշտոնական մի պատվիրակություն ուղարկելու Էջմիածին՝ երկու կարևոր շարժառիթներով. առաջինը՝ սրբալույս մեռոնի օրհնության հանդիսավոր արարողություններն էին, և երկրորդը՝ Ձեր գահակալության 20-րդ տարեդարձի տոնակատարությունը:

Սրբալույս մեռոնի օրհնությունը հոգևոր մեծ նշանակություն ունի Եկեղեցու համար: Այս արարողության ամենանշանակալից կողմը գուցե նրա ներկայացրած կարևորությունն է Եկեղեցու միությունն արտահայտելու տեսակետից: Եկեղեցու պետի կողմից սրբագործված մեռոնը եկեղեցական կենտրոնից տարվում ու բաշխվում է բոլոր թեմերին, բոլոր եկեղեցիներին: Այսպիսով հաստատվում և արտահայտվում է հոգևոր կենտրոնի կապը եպիսկոպոսի հետ:

Սրբալույս մեռոնը սահմանված է խորհրդակատարությունների համար:

Մեռոնը Սուրբ Հոգով օծվելու նշանն է: Հունարեն «Քրիսմա» բառը հիշեցնում է Քրիստոսին, որը Օծյալն է Աստուծո: Քրիստոս ծառայի կերպարանք ընդունեց՝ պահելով հանդերձ Իր մեջ աստվածության լրիվությունը, և այդպիսով օծեց Իր մարդկային բնությունը՝ լցնելով այն Սուրբ Հոգով:

Կարդինալ Ժան Վիլլեբրանդ

Նա նույն Հոգին փչեց Իր առաքյալների վրա՝ ասելով. «Առէ՛ք Սուրբ Հոգին»: Նա տվեց Հոգին ամբողջ Եկեղեցուն Հոգեգալստյան օրը: Առաքյալներն այնուհետև շարունակեցին տալ այդ Հոգին բոլոր նրանց, ովքեր մկրտված էին: Այսպիսով, քրիստոնյան դառնում է Աստուծո օծյալը և մասնավոր կերպով միանում Քրիստոսին, որը Գերագույն Օծյալն է:

Սրբալույս մեռոնը, հետևաբար, դրոշմն է ոչ թե մի ինչ-որ օծման, այլ Սուրբ Հոգով օծման և ի Քրիստոս միության: Միանալով ի Տեր, քրիստոնյաները միացած են լինում միմյանց հոգևոր մի կապով, որը հանդիսանում է Եկեղեցու խորհրդակատարական իրականությունը:

Սրբալույս մեռոնը, հետևաբար, դրոշմն է ի Քրիստոս միության և եկեղեցական միության:

Ահա թե ինչու սրբալույս մեռոնի օրհնությունը մի տոն է ողջ Եկեղեցու համար: Այս պատճառով է, որ Պողոս Զ Սրբազան Քահանայապետը սիրահոժար ընդունեց Ձերդ Սրբության հրավերը՝ ուղարկելու մի պատվիրակություն, որպեսզի ներկա լինի այս տոնակատարությանը և մասնակցի ձեր եկեղեցու, նրա նվիրապետության ու նրա ժողովրդի ուրախությանը և մասնավորապես Ձեր անձնական ուրախությանը, որպես հայ եկեղեցու Հովվապետի:

Այսպիսով, ես արդեն գալիս ու կանգ եմ առնում այստեղ մեր ներկայության երկրորդ շարժառիթի վրա. դա Ձեր գահակալության 20-րդ տարեդարձն է, դա Ձեր տոնն է, իբրև հայ առաքելական եկեղեցու առաջին Հովվի:

Կցանկանայի այս առթիվ վկայակոչել մի քանի իրադարձություններ, որոնք պատմական կարևոր նշանակություն են ներկայացնում մեր երկու եկեղեցիների հարաբերությունների մեջ և որոնք տեղի ունեցան քսան տարիների այս երկար ժամանակաշրջանի ընթացքում:

Ամենից առաջ դա այն փաստն է, որ Ձերդ Սրբությունն ընդունեց Հռոմի Սրբազան Քահանայապետի հրավերը՝ ուղարկելու դիտորդ-պատգամավորներ Վատիկանի Բ ժողովին: Այդ ժողովի տարբեր նիստերի ընթացքում հայ առաքելական եկեղեցին ներկայացվեց դիտորդ-պատգամավորներով, որոնք հնարավորություն ունեցան ձեր եկեղեցուն հաղորդելու հավաստի տեղեկություններ մեր եկեղեցու կյանքի, նրա աստվածաբանական և հովվական վերածննդի մասին այսօրվա աշխարհում: Փոխադարձաբար մենք ևս հարստացանք այն զրույցներով և գաղափարների փոխանակությամբ, որ ունեցանք ձեր դիտորդների հետ, որոնք շատ բան հաղորդեցին մեզ հայ առաքելական եկեղեցու պատմության, ավանդությունների և արդի վիճակի վերաբերյալ:

Մեր երկու եկեղեցիների միջև ստեղծված այս նոր հարաբերությունների ամենահանդիսավոր արտահայտությունն ու հաստատումը հանդիսացավ այն այցելությունը, որ Ձերդ Սրբությունը, գալով սուրբ Էջմիածնից, տվեց Հռոմի սուրբ քաղաքին: Շրջապատված ձեր նվիրապետության մեծարգո անդամներով, ինչպես նաև Սովետական Հայաստանից և սփյուռքից եկած բազմաթիվ հավատացյալներով, Ձերդ Սրբությունը փոխանակեց խաղաղության համբույրը Նորին Սրբություն Պողոս Զ Պապի հետ՝ միասնաբար աղոթելով սուրբ Պետրոս առաքյալի գերեզմանի վրա: Սրբազան Պապի հետ միասին Դուք հրավիրեցիք «բոլոր քրիստոնյաներին և հատկապես կաթոլիկ եկեղեցու և Հայաստանյայց առաքելական եկեղեցու զավակներին՝ առավել հավատարմությամբ պատասխանելու Սուրբ Հոգու կոչին, որը մղում է նրանց դեպի առավել խոր միություն, մեր բոլորի Փրկչի կամքի համաձայն, և որն առավել բեղմնավոր կդարձնի քրիստոնյաների ծառայությունը աշխարհին» (Համատեղ Հայտարարություն, Վատիկան, 1970 թ. մայիս 12):

Ես ուրախ եմ այստեղ, այս պահին ներկայացնելու Նորին Սրբություն Պողոս Զ Պապին և փոխանցելու Ձեզ Սրբազան Քահանայապետի անձնա-

կան ցանկությունները. «Գիտակից այն նշանակությանն ու կարևորությանը, որ ունեն այս կրկնակ տոնակատարությունները Ձեզ համար և ձեր եկեղեցու համար, Մենք բարձրացնում ենք Մեր աղոթքն առ Աստված, որպեսզի այս իրադարձությունները լինեն ուրախության և հոգևոր վերազարթոնքի մի աղբյուր ձեր բոլոր հավատացյալների համար և մի առիթ՝ քրիստոնյաների միջև եղբայրական սիրո խորացման ու բարի կամքի տեր բոլոր մարդկանց միջև միաբանության: Արտահայտում ենք Ձեզ Մեր աղոթքի մեջ կատարած Մեր ջերմ մաղթանքը. թող այս հանդիպումը կարևոր մի հանգրվան հանդիսանա եկեղեցական կատարյալ միության ճանապարհի վրա, հավատի և սիրո մեջ»:

Ձերդ Սրբություն, այժմ թույլ տվեք ինձ Ուտրեխտի արքեպիսկոպոսի և Հոլանդիայի եպիսկոպոսաց ժողովի նախագահի իմ հանգամանքով, ավելացնել մի քանի անձնական խոսքեր: Մաաստեխտի գլխավոր եկեղեցում յոթ տարին մեկ կատարվում են հանդիսություններ՝ ի պատիվ և ի հիշատակ չորրորդ դարում ապրած մի սուրբ եպիսկոպոսի, որը մասնակցել է Նիկիոն տիեզերական ժողովին և Սարդիկեի ժողովին: Նա եկել է իմ երկիրը քարոզելու համար Ավետարանը: Նրա հիշատակը միշտ թարմ է մնում հոլանդացի կաթոլիկ հավատացյալների մտքում, հատկապես Հոլանդիայի հարավում գտնվող Լիմբուրգ նահանգում: Նա կոչվել է Սերվացիուս և մեզ մոտ է եկել Հայաստանից: Այս տարի ես ուրախությունն ունեցա նախագահելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի այդ ծառայի պատվին կազմակերպված հանդիսություններին և աղոթեցի նրա հայրենի երկրի հավատացյալ ժողովրդի համար, ողջ հայ ազգի և ի մասնավորի Ձերդ Սրբության համար:

ԼՈՆԴՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԵՐԱԼԴ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԷԼԻՍՈՆԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Գերհարգելի եկեղեցական պետեր և ներկայացուցիչներ,

Ձերդ Վսեմություն պր. Գասպարյան և հարգելի ներկաներ.

Մենք մեծ շնորհ ենք համարում, որ մեր եկեղեցին ևս հրավիրեցիք ներկա գտնվելու և մասնակցելու այս երկու մեծ հանդիսություններին: Այս առթիվ մեր շնորհակալությունն ենք հայտնում Ձեր սրտաբաց հյուրասիրության համար:

Մեր ներկայությունն այստեղ արտահայտում է սրտագին, երկարամյա ու ջերմ հարաբերությունը մեր երկու եկեղեցիների միջև: Մենք Լոնդոնի մեջ գնահատում ենք հատկապես մեր երկու եկեղեցիների միջև գոյություն ունեցող այս սերտ կապը: Ուրախ ենք հայրապետական պատվիրակ տ. Ներսես եպիսկոպոսի ներկայությամբ Լոնդոնի մեջ: Անգլիկան եկեղեցու համար մեծ հաճույք և ուրախություն եղավ, անցյալ տարի, ընդունել Ձերդ Սրբությանը Լոնդոնում, երբ եկել էիք օծելու ս. Պետրոս եկեղեցին:

Զարմանալի ուրախալի է, որ Անգլիայում գոյություն ունի հայկական եկեղեցական մի համայնք, որն ապրում, գործում և աղոթում է քրիստոնեական, եղբայրական ոգով:

Այս առիթը սակայն, Ձերդ Սրբություն, մեզ համար ունի մասնավոր նշանակություն, երբ եկել ենք մասնակցելու Ձեր գահակալության քսանամյակին նվիրված հանդիսությանը:

Ձեզ բերում եմ հատուկ համակրությամբ և սիրով լեցուն շնորհավորանքները Քենտրբերիի արքեպիսկոպոսի և կարծում եմ դրանով արտա-

հայտած լինել անգլիկան ամբողջ համայնքի զգացումները՝ շնորհավորելով Ձեզ Ձեր գահակալության առիթով:

Անշուշտ ո՛չ մեկ նվեր կկարողանար արդարորեն արտահայտել մեր հարգանքը Ձերդ Սրբության նկատմամբ: Այնուամենայնիվ մեզ համար հաճելի է այս ուրախ առիթով Ձեզ մոտ թողնել մի հիշատակ՝ արտահայտությունը մեր համակրության և հարգանքի:



Նորին գերաշնորհություն Ջերալդ Ալեքսանդր Էլիսոն եպիսկոպոս Լոնդոնի

Վերջին ամիսներին մտահոգ էի և մտածում էի, թե ինչպես կարող եմ հարմար և արժանավայել ձևով արտահայտել մեր համակրությունը և զգացումները Ձեր նկատմամբ: Եվ, որպես Լոնդոնի եպիսկոպոս, հիշեցի երկու

շենքերի մասին, որոնք փառքն են կազմում Լոնդոնի: Դրանցից մեկը Վեստ-մինիստեր աբբայարանն է, որի հիմնադրության 900-ամյակը հիշատակվեց 1965 թվականին: Այդ առիթով հատկապես պատրաստվեց հիշատակի մի ափսե, որ քիչ հետո ներկայացնելու եմ Ձեզ:

Բայց ինչպես Ձերդ Սրբությունը գիտե, Վեստմինիստերի վանքը հատուկ տեղ ունի անգլիական եկեղեցու կյանքում: Այդ վանքը չի մտնում ո՛չ Քենտըրբերիի արքեպիսկոպոսի և ո՛չ էլ Լոնդոնի եպիսկոպոսի իշխանության ներքև, հետևաբար և Վեստմինիստերից բերված մի հիշատակ բավարար պիտի չլիներ արտահայտելու անձնապես մեր զգացումները:

Լոնդոնի ս. Պողոս տաճարը, լինելով Մայր տաճարը իմ առաջնորդության սահմանների մեջ մտնող, միաժամանակ մեր եկեղեցու կյանքում ներկայացնում է մի հին ավանդություն: Թեև այդ տաճարը հիմնված է ավանդական շատ հին մի տեղի վրա, սակայն կանգուն տաճարի շենքը նոր է բաղդատմամբ Էջմիածնի հնադարյան ձեր սուրբ տաճարի, որովհետև հին շենքը այրվեց Լոնդոնի մեծ հրդեհի ժամանակ՝ 1666-ին, բայց անմիջապես վերաշինվեց Մեծն Քրիստափոր Ռոմի միջոցով: Ուստի, ինչպե՞ս կարող էի լավագույնս արտահայտել իմ զգացումները Ձերդ Սրբության նկատմամբ, եթե ոչ՝ բերելով մի մասունք ս. Պողոս տաճարից, որ քիչ հետո պիտի հանձնեմ Ձեզ: Այն քարի մի բեկոր է՝ պոկված տաճարի հյուսիս-արևմտյան աշտարակից, և ապա մետաղյա մի վարդ, որ գտնվեց ս. Պողոս տաճարի գմբեթի մեջ, երբ այն վերանորոգվում էր 1708 թվականին:

Այս առիթով միաժամանակ կցանկանայի հայր Մայքլ Մուրի կողմից հանձնել Ձերդ Սրբությանը ս. Պողոս Մայր տաճարի նկարը, ինչպես նաև պրն. Գիլբերտի կողմից, որը Անգլիայում ներկայացուցիչն է Քրիստոնեության ծանոթացման և տարածման գրասենյակի, գեղեցկորեն կազմված և զարդարված Աստվածաշնչից և աղոթագրքից մի օրինակ՝ այն խոստումով, որ հետագայում առավել ևս օգտակար գրքեր պիտի կարողանանք ուղարկել ձեր ճեմարանի սաների համար:

Ներկայացնելով Ձեզ այս փոքր հուշանվերները, ողջունում և շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը որպես մի մեծ եկեղեցականի, որպես հանրաճանաչ մի անձնավորության, բայց այս բոլորից վեր, մանավանդ, որպես Աստուծո մի համեստ և սուրբ ծառայի և իր ժողովրդին նվիրված Հովվապետի:

ԲԵԴՐԱՑԻ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԳԵՐՄԱՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՄԱԼԻՍԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Եկել եմ այստեղ իմ սիրտն ուրախությամբ լեցուն և մասնավոր հպարտությամբ ներկայացնելու իմ Տիրոջը և Պատրիարքին՝ Երուսաղեմի հունաց Նորին Ամենապատվություն Բենեդիկտոս Առաջինին, Ձերդ Սրբության գահակալության 20-րդ տարեդարձի այս հանդիսավոր առիթով:

Նախ և առաջ բերում եմ իմ Հայրապետի եղբայրական ողջույնները, սրտագին շնորհավորությունները և լավագույն մաղթանքներն այս երջանիկ առիթով:

Բերում եմ միաժամանակ ջերմագին ողջույնները Սիոնի, որ սուրբ Մայրն է բոլոր եկեղեցիների, գերհարգելի Հայաստանյայց եկեղեցուն, որ Ձերդ Սրբությունը գլխավորում է Աստուծո շնորհով:

Իմ ջերմագին աղոթքներով միանում եմ բոլոր հավատացյալներին և եղբայրներիս ի Քրիստոս, որոնք ներկա են այստեղ, որպեսզի Ձերդ Սրբությունն օրհնվի և գահակալի երկար, քաջառողջ և բարգավաճ կյանքով՝ ի հոգևոր մխիթարություն ձեր ժողովրդի և ողջ Հայաստանյայց եկեղեցու:



Տ. Գերմանոս Մամալիս միտրոպոլիտ

Եվ Մովսեսի նման, որ Սինա լեռան կատարը բարձրացավ և բարձրացրեց իր ձեռքերը, որպեսզի ապրի Իսրայելը (Ելից ԺԷ 11), Ձերդ Սրբությունը ևս թող լինի միշտ իր հայրապետական գահի վրա և բարձրացնի Իր ձեռքերը, որպեսզի ձեր ազգն ու եկեղեցին հաղթանակեն և ապրեն շատ ու շատ օրհնված տարիներ խաղաղության, շինության և անսասանության մեջ: Ամեն:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՖՐԱՆՉԻՍԿՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԿՈՒՍՏՈԴ ՀԱՅՐ ՄԱՈՒՐԻԼԻՈ ՍԱԿԿԻԻ ԽՈՍՔԸ

Ձերդ Սրբություն,

Մենք, իբրև Ֆրանչիսկյան միաբանության անդամներ, որ ուխտ ենք արել ապրելու խոնարհության և աղքատության մեջ, Ձեր այս տոնին բերել ենք մեր սիրտն ու աղոթքը:

Մեծապես շնորհակալ ենք Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե պատրիարքի միջոցով մեզ եղած այս սիրալիր հրավերի համար:

Հայ հավատքի կենտրոն սուրբ Էջմիածնում տեղի ունեցած սրբալույս մեռոնի օրհնության և Ձերդ Սրբության գահակալության քսանամյակի առթիվ կատարված հանդիսությունները, ինչպես նաև մեր ուխտագնացությունները դեպի հայկական պատմական վանքերն ու եկեղեցիները մեզ համար եղան կրոնական ապրումների և հոգևոր նոր փորձառության թանկագին առիթներ:

Մենք այստեղ խորապես տպավորվեցին մանավանդ տեղի ունեցած եկեղեցական վեհաշուք արարողություններից և հայ ժողովրդի ցուցաբերած քրիստոնեական հավատքից ու նրա բարեպաշտիկ ապրումներից:

Մենք Երուսաղեմում շատ սերտ հարաբերության մեջ ենք Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետ, որովհետև Երուսաղեմի հայոց պատրիարքության, ինչպես նաև հույն պատրիարքարանի հետ բաժանում ենք սուրբ Տեղյաց պատասխանատվությունը և մանավանդ Քրիստոսի ս. Հարության տաճարի պաշտպանությունն ու ծառայությունը:

Մենք երջանիկ ենք մանավանդ քրիստոնեական եկեղեցու մեջ գոյություն ունեցող այն հազվագյուտ իրողության համար, որ ս. Հարության նույն տաճարից ներս. մենք՝ երեք քույր եկեղեցիներս, միասին ենք աղոթում, միասին ենք երգում և միասին ենք փառք տալիս Աստծուն:

Հայ եկեղեցու հնադարյան այս սրբավայրում մենք աղոթեցինք ձեր եկեղեցու նվիրապետության, ձեր հավատացյալ ժողովրդի, բայց մանավանդ դարերից եկող ձեր ազգի համար:

Թողնելուց առաջ աստվածաշնչական այս երկիրը՝ Ձեզնից մի շնորհ ունեմ խնդրելու. որ բարեհաճեք տալ ինձ և իմ միաբանակից եղբայրներին Ձեր օրհնությունը, որպեսզի ս. Գրիգոր Լուսավորչի ներկայությամբ և մեր միաբանության հիմնադիր ս. Ֆրանսուա Դ'Ասիզի առաջնորդությամբ կարողանանք պահել քրիստոնեական հավատքը մեր եկեղեցիներից ներս ի փառս Աստուծո և ի հարգանս սուրբ Աստվածամոր. ամեն:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանի տեսչության, գիտական խորհրդի և ողջ անձնակազմի անունից շնորհավորանքի հետևյալ ջերմ խոսքն ընթերցեց Մատենադարանի տնօրեն **Լևոն Խաչիկյանը.**

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ՈՒՂԵՐՁԸ

Ձերդ Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա
կաթողիկոս Ամենայն Հայոց.

Վեհափառ Տեր,

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը և գիտական ողջ անձնակազմը Ձեր գահակալության արդյունավետ քսանամյակի և ազգանվեր լայն գործունեության առիթով ջերմորեն շնորհավորում են Ձեզ և ցանկանում առավել բարեհաջող և առավել բեղմնավոր նոր քսանամյակներ:

Մենք հպարտությամբ նշում ենք, որ Ձեր Վեհափառությունն այսօր, բազմած Սահակ Պարթև, Ներսես Շնորհալի, Ներսես Աշտարակեցի, Խրիմյան Հայրիկ, Գևորգ Վեցերորդ երջանկահիշատակ կաթողիկոսների գահին, շարունակում է կյանքի կոչել ազգօգուտ նույն ավանդները և ընթանալ հայրենանվեր գործունեության նույն մայրուղիով:

Ճակատագրի բերումով Ձեզ և Ձեր նախորդներից շատերին վիճակվել է հոգալ ոչ միայն մայր հայրենիքում բնակվող, այլև նրա սահմաններից դուրս օտար հորիզոններում պատսպարված հայության հայրենաբաղձ զանգվածների հոգևոր պետքերը և համախմբել նրանց հայրենի երկրի, նրա մշակույթի սրբազան ավանդների շուրջ: Հանրահայտ է, Վեհափառ Տեր, որ այս առումով շատ մեծ են Ձեր ծառայությունները: Սփյուռքահայության շնորհած Ձեր այցելությունները հիրավի եղել են կենսապարգև: Դուք ամենուրեք ոտք եք դրել որպես վերածնված Հայաստանի և ազատագրված հայ ժողովրդի երջանիկ առաքյալ՝ նպատակ ունենալով սփյուռքահայության բոլոր հանգրվանները կապել Սովետական Հայաստանի նվիրական հող ու ջրին և լուսավոր առօրյային:

Մեր նախնիները կերտել են մշակութային հոյակապ հուշարձաններ, որոնք ամենուրեք արժանացել են անվերապահ գնահատության: Ըստ այդմ, մեր սրբազան պարտքն է՝ աչքի լույսի պես պահպանել հայ մշակույթի՝ մեզ ավանդված անգնահատելի մասունքները և սրբությամբ փոխանցել գալիք սերունդներին: Դուք, Վեհափառ Տեր, այս ուղղությամբ ևս բեղմնավոր աշխատանք եք տարել՝ պաշտպան կանգնելով և նոր կյանք պարգևելով հայրենյաց հիշատակներին: Հանրահայտ են Ձեր ջանքերով իրականացած Էջմիածնի Մայր տաճարի մեծածավալ նորոգումները, նրա ներքին և արտաքին բարձրաճաշակ հարդարումը, Վեհարանի շքեղ սրահներում արվեստի նոր թանգարանի ստեղծումը, ինչպես նաև պատմական ու մշակութային մեծարժեք բազմաթիվ հուշարձանների վերակենդանացումը:

Մենք, Մաշտոցի անվան Մատենադարանի ներկայացուցիչներս, խորին երախտագիտությամբ ենք արձանագրում այսօր հին ու միջնադարյան ձեռագրերի հավաքման և պահպանության ուղղությամբ Ձեր ծավալած նպատակադիր ու արդյունավետ գործունեությունը, որն արտահայտվել է Մաշտոցի անվան Մատենադարանին մեր մշակույթի տասնյակ մեծարժեք հուշարձանների նվիրաբերությամբ, որոնց մեջ հատուկ հիշատակության են արժանի Ձեր սիրելի մոր անունը հավերժացնող Ավետարանը և Թորոս Ռոսլինի բարձրարվեստ մանրանկարներով զարդարված ձեռագրերը:

Դրվատելով Ձեր հայրենանվեր գործունեության արդյունքները, չենք կարող այսօր չհիշել, որ դրանք արգասավորվել են աշխարհի խաղաղության պայմաններում: Հայ ժողովուրդն առավելագույնս գիտե գնահատել

խաղաղությունը, որին այնքան ծարավի է եղել դարերի ընթացքում: Այս ճշմարտությունը Ձեզ քաջ հայտնի է: Այդ չէ՞ պատճառը, որ Դուք իրապես աշխարհի շատ բեմերից արտասանեցիք Ձեր ազնիվ «Խաղաղութիւն ամենեցուն»-ը: Ահա թե ինչու, Վեհափառ Տե՛ր, Դուք արժանի եք կրկնակի մեծարման նաև խաղաղության պահպանության գործին բերած Ձեր հետևողական ջանքերի համար, որը բարձր է գնահատվել սովետական պետության կողմից և նշանավորվել Ձեզ տրված կառավարական պարգևներով:

Ընդամենը քսան տարի... բայց անմնացորդ նվիրաբերման որքա՜ն եռանդ, ինչպիսի՜ մեծարժեք արգասիքներ, ի՜նչ մնայուն կոթողներ...

Ի լրումն բանից մերոց սակաւուց կամիմք ըստ լեզուին նախնեաց մերոց ի գիր արձանացուցանել, եթէ, արդարև, բազում են երախտիք Ձերդ Վեհափառութեան, որք շնորհապարտ կացուցանեն զազգս հայոց ի սփիւռս աշխարհի: Կէտ նպատակի կենաց Ձերոց եւ համայնից գործառնութեանց կայր եւ մնայ յաւէրժ պահպանութիւն մտաւոր եւ ոգեղէն գանձուց մերոց հայրենեաց: Եւ գոհութեամբ սրտի հաստատեմք, եթէ յայսմ յամենայնի ոչ ինչ ունիք զպարտիս հատուցման առաջի ժողովրդեանն. զոր ինչ արարեալ էք, յաւելեալ եւ լիով:

Առ այս, բոլորով սրտիւ բարեմաղթեմք Վեհափառութեանդ Ձերում քաջառողջութիւն եւ արևշատութիւն ի յամայր ամս եւ կատարեալ լրումն համօրէն ըղձից եւ նպատակաց Ձերոց:

Ի դիմաց տնօրէնութեանն Մաշտոցեան Մատենադարանի՝

Լ. Ս. ԽԱՉԻԿԵԱՆ

Գրեցաւ ի թուականութեանս հայոց ՌՆԻԵ,
Յամսեանն սեպտեմբերի ԻԷ, օրն Բ-շաբթի:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ Վարդգես Համազասպյանը, հանձնաժողովի նախագահության, նույնպես ջերմորեն ողջունեց և շնորհավորեց Հայոց Հայրապետին հետևյալ հուզիչ ուղերձով.

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս,
Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Հայրապետին

Ձերդ Սրբություն.

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահությունը ջերմորեն ողջունում է և ի սրտե շնորհավորում Ձեզ այս հանդիսավոր օրվա առթիվ:

Ձեր բազմաբեղուն և արգասավոր գործունեությունն այս քսան տարիների ընթացքում, Ձեր բոլոր ջանքերը, անսպառ եռանդը, բազմակողմանի ու խոր իմացությունը ի սպաս են դրվել հայրենանվեր նպատակների, ազգօգուտ գործերի:

Հատկապես մեծ է այն ավանդը, որ Ձերդ Սրբությունը ներդրել է աշխարհասփյուռ հայությանը մայր հայրենիքի շուրջը համախմբելու, նրան վերածնված հայրենիքի նվաճումներով ու հեռանկարներով ոգեշնչելու գործում:

Մենք Ձեզ ճանաչում ենք որպես աշխարհի խաղաղության, ժողովուրդ-

ների բարեկամության ու համակեցության ջատագովի, մարդասիրական այդ մեծ գաղափարների ջերմ ու հավատավոր պաշտպանի: Սովետական կառավարությունն ըստ արժանվույն գնահատելով խաղաղության գործի մեջ Ձեր ներդրած ազնիվ ջանքերը, Ձեզ արժանացրել է կառավարական բարձր պարգևի՝ «Պատվո նշան» շքանշանի:

Գոհունակության խորին զգացումով պիտի նշենք նաև Ձեր այն ջանքերը, որ Դուք ներդրել եք մեր պատմական հուշարձանները պահպանելու ու վերականգնելու, հայ ժողովրդի հոգևոր մշակույթի ցրված բեկորներն ի հայտ բերելու, հայրենադարձելու և հայրենի ժողովրդի սեփականությունը դարձնելու գործում:

Դուք անսպառ եռանդով սատարել եք սփյուռքի մշակութային կյանքին, հովանավորել ուսումնական հաստատությունների գործունեությունը, Ձեր խոսքով ու գործով ձգտել եք սփյուռքահայության հոգում միշտ վառ պահել հայրենասիրության ազնիվ կրակը:

Մեր կոմիտեի ստեղծման հենց առաջին օրվանից Դուք հանդիսացել եք նրա վարչության անփոփոխ անդամը և Ձեր նպաստը բերել նրա գործունեությանը:

Ձերդ Սրբություն, կրկին անգամ շնորհավորելով Ձեզ, մաղթում ենք քաջառողջություն, անսպառ կորով և նորանոր հաջողություններ Ձեր հայրենանվեր գործունեությանը:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակի առիթով ստացվել էին բազում շնորհավորական հեռագրեր և գրություններ, որոնցից երկուսը հանդիսության ժամանակ հրապարակեց տ. Շահե արքեպիսկոպոս Անեմյանը, այդ թվում՝ Սովետական Միության Մինիստրների սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ **Վ. Ա. Կուրոյեդովի** շնորհավորական հեռագիրը, որը կրում էր 27 սեպտեմբեր 1976 թվականը (Սույն հեռագիրը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 11):

Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ տիար **Ալեքս Մանուկյանը** նաև իր 26 օգոստոս 1976 թվակիր սրտառուչ հետևյալ նամակով շնորհավորում էր Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակը.

ՏԻԱՐ ԱԼԵՔՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց

Ս. Էջմիածին, Հայաստան

Վեհափառ Տեր,

Ահա հանդիսավոր ու հոգեխոով առիթ մը ևս կստեղծվի համայն հայ ժողովուրդին համար, և աշխարհի բոլոր ծագերեն խումբ-խումբ հայեր կփութան սուրբ Էջմիածին՝ մասնակցելու համար Նորին Սուրբ Օծությանդ գահակալության քսանամյակի տոնախմբության:

Վերջին երկու տասնամյակներուն Հայաստանյայց եկեղեցվո պատմու-

թյունը պայծառացավ Ձեր անձին լույսով. Ձեզնով սուրբ Գրիգոր Լուսավորչի դարավոր Աթոռն ունեցավ արժանավոր գահակալ մը, իսկ սուրբ Էջմիածնի մայրավանքն ապրեցավ վերելքի, շինարարության ու վերահաստատվող փառքի նոր շրջան մը:

Ձեր ներշնչյալ և վարչագետ անձին մեջ հայրենի ժողովուրդը հաստատեց սուրբ Էջմիածնի հեղինակության բարձրացումը և անհուն սիրով ու խոր հարգանքով կապվեցավ Ձեզի: Մեզի համար երջանկություն եղած է միշտ հաստատել, թե համատարած հարգանքի և համակրանքի խորհրդանիշ մը կհանդիսանա Վեհափառությանդ անունը մայր երկրի ժողովուրդին համար:

Ձեր գահակալության տարիներուն ոգի և շունչ ստացան մեր հինավուրց վանքերն ու եկեղեցիները. Ձեր հոգածու միտքն ու շինարար ճիգերն ավերակներեն վեր բարձրացուցին մեր ճարտարապետական գեղեցկությանց վսեմ կառույցներեն շատերը և կենդանությամբ ու հպարտությամբ վերականգնեցին զանոնք իրենց պատմական փառքին մեջ:

Մեզի՝ սփյուռքահայերուս համար կենարար իրողություն մը հանդիսացավ Վեհափառությանդ գահակալությունը, որովհետև Դուք գիտցաք հասնիլ յուրաքանչյուր սփյուռքահայու և օծել անոր հոգին Էջմիածնի լույսով. Ձեր աստվածատուր շնորհներով բաշխվեցաք բոլորին՝ անձամբ այցելելով, տարբեր գաղութներ կամ Ձեր պատգամն ու շունչը հասցնելով մինչև հեռավոր անկյուններն աշխարհի:

Այսօր, հայությունն ամենեն ավելի տարածված է ի սփյուռս աշխարհի, սակայն, նույն ատեն, ավելի ուժգին կապված է Մայր Աթոռ ս. Էջմիածնին, որովհետև կենդանի հաղորդակցության մեջ է անոր հետ, առավելաբար Ձեր շինարար և առաքինազարդ անձին ընդմեջեն:

Սուրբ Էջմիածինը մեր հավատքի կուվանը հանդիսացած է բոլոր դարերուն ընթացքին, և այսօր անոր շեն ու պայծառ վերականգնումը մեր սրտերը կլեցնե բերկրանքի և հպարտության անսպառ աղբյուրներով: Պատմության բախտավոր մեկ դիպվածով Մայր Աթոռի վերելքի այս հանգրվանին գահակալելու կոչվեցավ Ձերդ Վեհափառությունը, որ առավելագույն շքեղանքով թռիչք մը տվավ այդ վերելքին:

Մենք կասկած չունինք, որ մեր եկեղեցվո պատմությունը Ձեր իշխանության տարիները պիտի նվիրագործե Ձեր անունով և պիտի կնքե զանոնք Ձեր շնորհալի անձին դրոշմով. Ձեր իշխանության տարիները պիտի անցնին պատմության իբրև Վազգեն Առաջին Շինարար Հայրապետի ժամանակաշրջան:

Ձեր գահակալության հանդիսավոր առիթով ամբողջ աշխարհի հայության սիրտերը կցնծան Ձեզի հետ. ամեն հայ մասնակից կդառնա Մայր Աթոռի նվիրական կամարներուն տակ կայանալիք հոգեպարար հանդիսությանց:

Այս առնչությամբ հավանաբար ամեն հավատավոր հայու հոգվույն իղձերը խտացուցած կըլլանք մեր ողջույնի այս սրտագին գիրին մեջ, եթե Ձեզի մաղթենք երկար, արևշատ ու երջանիկ տարիներ: Քսան տարի Ձեր շնորհառատ անձով խորհրդանշվեցավ մեր սուրբ եկեղեցվո պայծառությունը. ու քանի վառ ու կենդանի մնա Ձերդ Վեհափառությունը, կենդանի ու շեն պիտի ըլլա մեր եկեղեցին:

Հայու մեր անխառն ապրումներու խորերեն սրտագինս կշնորհավորենք Նորին Վեհափառությունդ, ցանկալով Ձեզ երկար ատեն տեսնել սուրբ Գրիգոր Լուսավորչի պայծառ գահուն վրա:

Որդիական խորունկ ակնածանքով՝

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Նախագահ

Խաղաղության պաշտպանության Հայաստանի հանրապետական կոմիտեն նույնպես հեռագրով շնորհավորել էր խաղաղության ջերմ պաշտպան Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին.

Հայաստանի Խաղաղության հանրապետական կոմիտեն ջերմագին շնորհավորանքներ է հղում Ձեր արգասավոր գահակալության 20-ամյակի առթիվ:

Ձեր բազմաբեղուն գահակալության ընթացքում Դուք հանդես եք եկել որպես խաղաղության պաշտպանության ջերմ ջատագով: Ձեր հայրենաշունչ խոսքը լայն արձագանք է գտել բարի կամքի տեր մարդկանց շրջաններում, արժանացել միահամուռ հավանության: Մենք բարձր ենք գնահատում Ձեր մասնակցությունը խաղաղության պաշտպանության բոլոր ձեռնարկումներին, ինչպես նաև խաղաղության ֆոնդին ի նպաստ Ձեր բերած օժանդակությունը:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, նորանոր հաջողություններ Ձեր հայրենանվեր գործում՝ հանուն կայուն խաղաղության հաստատման հինավուրց ու նորոգ մոլորակի վրա:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Երևան, 27 սեպտեմբերի 1976 թ.

Աշխարհահռչակ երաժիշտ և կոմպոզիտոր **Արամ Խաչատրյանը,** շնորհավորելով Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակը, իր 27 սեպտեմբեր 1976 թվակիր հեռագրում գրում էր.

«Թանկագին Վեհափառ,

Ձեր գահակալության 20-ամյակի առիթով ընդունեցեք իմ սրտագին շնորհավորանքը և բարի մաղթանքները:

Ցանկանում եմ Ձեզ հետագա հաջողություններ Ձեր գործունեության ասպարեզում՝ ինչպես բոլոր հայերի համախմբման, այնպես էլ ժողովուրդների միջև խաղաղության և բարեկամության համար մղվող Ձեր ազնիվ աշխատանքում:

Խորին հարգանքներով՝

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ»:

Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակին նվիրված հանդիսավոր նիստի ավարտին **տ. Շահե արքեպիսկոպոսը** հրավիրեց հոբելյար **Հայոց Հայրապետին**՝ Իր հոբելյանական խոսքն ասելու այս առթիվ:

Ողջ դահլիճը հոտնկայս մի անգամ ևս ցնծագին ծափահարություններով ողջունեց Հայոց Հայրապետին:

Նորին Սուրբ Օծությունը, խորապես հուզված համազգային այս հանդիսավոր արտահայտություններից, ողջունեց ներկայությունը բոլոր հյուրերի և հրավիրյալների **բովանդակալից ու տպավորիչ մի ճառով** (Վեհափառ Հայրապետի ճառը տես «Էջմիածին» ամսագրի սույն համարում, էջ 3):

Ժամը 14-ին ավարտվեց Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունը խանդավառ ու սրտագին մթնոլորտում:



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 27-ին, երկուշաբթի օրը, ժամը 15-ին, Կենտրոնական հոբելյանական հանձնաժողովը սրբալույս մեռոնի օրհնության և Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակի առիթով Երևանի «Արմենիա» հյուրանոցում կազմակերպեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա եղան 270 հոգի:

Հրավիրյալների թվում էին Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց սրբազան պատրիարքները, թեմական առաջնորդները, թեմերի ներկայացուցիչները, Մայր Աթոռի բարերարներ, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Երևանի գիտության, մշակութային հիմնարկությունների ղեկավարներ, հայ մտավորականության ներկայացուցիչներ, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական և իրավագիտական հանձնաժողովների անդամներ, Մայր Աթոռի պաշտոնեությունը, հոգևոր ճեմարանի դասախոսներ և բազում այլ հյուրեր:

Պաշտոնական սույն ճաշկերույթին մասնակցում էին նաև հանդիսություններին հրավիրված քույր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչները:

Ընդունելությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը**, տեղակալ **Անդրանիկ Հասրաթյանը** և խորհրդի բոլոր անդամները:

Սեղանն օրհնեց Հայոց Հայրապետը: Այնուհետև հայրենի բարիքներով ծանրաբեռն սեղանների շուրջ ստեղծվեց հայրենական խանդավառություն և ոգևորություն:

Հոբելյանական սույն ճաշկերույթի սեղանը ղեկավարեցին **տ. Կոմիտաս** և **տ. Շահե արքեպիսկոպոսները,** որոնք ներկաներից շատերին խոսք տվեցին՝ այս առթիվ շնորհավորելու Հայոց Հայրապետին և արտահայտելու իրենց որդիական երախտագետ զգացումները հայ ժողովրդի կյանքում Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած հոգևոր, եկեղեցական, հայրենանվեր ու խաղաղասիրական առաքելության համար:

Առաջինը ելույթ ունեցավ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. **Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը** հետևյալ ուղերձով.

Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ Հայրապետ Ամենայն Հայոց,

Գոհության և ուրախության զգացումներ կլեցնեն սրտերը Ձեր աշխարհացրիվ զավակներուն, այս վեհաշուք հանդիսադրության առիթը մեզի ընծայված ըլլալուն համար:

Եկած ենք մոտեն ու հեռվեն, ցամաքներ և օվկիանոսներ կտրելով: Եկած ենք իբրև զավակները այն ժողովուրդին, որ ամբողջ հազարամյակներ խիզախորեն պաշտպանեց հայ եկեղեցին և հայ հայրենիքը: Եկած ենք իբրև քանակ ու որակ, իբրև սիրտ ու հոգի՝ երկրագունդի տարածքին վրա ապրող հայության անունով մասնակցելու այս փայլուն հանդեսին, իբրև վկայություն հայրենի պետության և հազարազանգ սուրբ Էջմիածնի աննահանջ պայծառության:

Եկած ենք մեր պատվական Վեհին հայտնելու երախտագիտություն՝ Իր զմայլագեղ անձովն ու քսանամյա բազմաշխատ Իր տուրքովը արդյունավորած իրագործումներուն համար:

Եվ այս սիրառատ պահուն, ինչպես միշտ, Վեհիդ իսկ բնորոշումով, «մեզի հետ են դարերը որ անցան, մեզի հետ են լուսապսակ հայրերը մեր, մեզի հետ է բովանդակ հոգին համայն հայության»:

Եկած ենք այստեղ իբրև շարունակողները երեսուն դարերու հայոց պատմության, իբրև հավատարիմ ավանդապահները անընկճելի ցեղին, իբրև բաբախուն հոգիները տեսլապաշտ ազգին:

Եկած ենք հայության Մայր Աթոռը, որուն վրա բազմած են 130 երանելի հայրապետներ, որոնք իրենց անձեն ու հոգիեն, իրենց միտքեն ու հավատքեն, իմանալի ու զգալի շողեր են բաշխած ու ճառագայթած «վասն Քրիստոսի և վասն հայրենեաց»:

Ներկայիս ավելի ևս հստակությամբ կըմբռնենք իմաստը Հայաստան աշխարհի ամբողջ տարածքը լեցնող հոյակապ տաճարներուն, հնամենի վանքերուն, «Քարէ սիմֆոնիաներուն», մագաղաթյա սխրապատումներուն և հայ ստեղծագործ հանճարին արգասիքը հանդիսացող փառավոր վկայություններուն, որոնք մեր ժողովուրդին խիզախ մաքառումն ու տոկունությունը ապահովեցին իբրև անխորտակելի պատվանդաններ՝ մնալու, տևելու, և հասնելու պերճափայլ պետականության, հինգ հարյուր տարվան հպատակության բոլոր տաժանքներեն, հալածանքներեն և կոտորածներեն անցնելեն վերջ:

Ու սա օրերուն, հայկական պետության ընծայած կարելիություններով, լուսապայծառ քաղաքամայր Երևանին գրեթե դռկից, հազարամյակներե ի վեր ավետարանական առաքելություն կատարած սուրբ Էջմիածնի գետիններուն վրա կտոնախմբենք ամենայն հայոց Հայրապետական Աթոռի 130-րդ Գահակալին քսանամյակը:

Ասիկա բարեդեպ առիթ մըն է անկասկած և բաղձալի պատեհություն մը նաև անձնապես ու հավաքաբար հայտնելու մեր քաջակորով Հովվապետին մեր խորազգաց սերը, հարգանքի և հավատարմության մեր զգացումը:

Ուրախ ենք այս հանդիսության մասնակցողներս: Կցնծա այս պահուն

հայ ժողովուրդը, վասնզի անա հայրենի հողին վրա փառավորապես կնշվի անձն ու գործը մեծ ու շինարար հայրապետի մը:

Հայրապետ մը իրավ, որուն գերակշիռ անձնավորության, հոգևոր հեղինակության, բարոյական ուժին հմայքովը կապրի, կխոյանա վեր, հանուր բարեպաշտ հայությունը:

Հայրապետ մը, որուն սերը (ծովի պես) խորունկ է հանդեպ մայր հայրենիքին, հայ եկեղեցիին, հայ մշակույթին ու դպրության, հայ հոգիին ու ոգեկանության:

Որ մաքուր Իր հոգին, կամեցող Իր սիրտը լայն բացավ նկատմամբ անոնց, որոնք չուզեցին կամ չկրցան անսալ հայու ներքին ձայնին, և երեվույթները շահարկելե մղված՝ առին սին ու պատիր քայլեր՝ վնասելով հայ եկեղեցվո առաքելության գործին:

Հայրապետ մը, որ անդադրում մտածեց, ծրագրեց, շինեց ու բարեզարդեց: Անհավասիկ հրճվանքով կդիտենք հայոց հավատքի միջնաբերդը, որ կճառագայթե իր հոգևոր ճեմարանով, իր պարբերաթերթով, իր միաբանական կյանքով, և դեռ բազմատեսակ վերակառուցումներով:

Հայրապետ մը, որ շնորհաբեր Իր այցերով խանդավառեց ու ոգևորեց հավատացյալ Իր հոտը, ի Հայաստան և ի սփյուռս տարացրիվ, ոչ միայն Իր բարձր անհատականությամբը, այլև Իր քաղցրաշունչ խոսքերովը, Իր բովանդակալից պատգամներովը:

Հայրապետ մը, որ ուզեց և կարողացավ կամուրջ մը ձգել Հայց. եկեղեցվո և բոլոր քրիստոսապաշտ եկեղեցիներու միջև: Որ իրապես օժանդակ հանդիսացավ եկեղեցիներու էկումենական շարժումին: Որ բանաձևեց ուղին՝ գործոն կերպով նպաստելու աշխարհի մեջ արդարության և խաղաղության պահպանման ու ամրապնդման կենսական գործին: Որ ավետարանական եղբայրության և համաքրիստոնեական միության համար եղած կոչերուն միացուց ազնիվ ու մաքուր, թարմ ու առույգ ձայնը Իր, լեզու գտնելու ժամանակակից գիտության, մշակույթի և ընկերային ապրող ու զարգացող գաղափարներու և իրականություններու հետ, խնայելու քրիստոնեության՝ վտանգը մեկուսացվելուն կամ մեկուսանալուն:

Հայրապետ մը, որ կամեցավ գնահատել, վարձատրել ամենեն շատ՝ նվիրյալ ծառայողները ազգին, մշակները հայ գիրին ու գիտության, կառուցողները տաճարներու, և գործիչները մեր հասարակության: Որ պատմական գահին ու Իր պատվական անձին և տարած աշխատանքներուն պատճառավ շահեցավ վստահություններ ամենուրեք, ստացավ սրտաբուխ հատկացումներ, վայելեց գործակցությունը պատրաստակամ հոգիներուն՝ որոնք կներկայացնեին հայության բոլոր խավերը, բոլոր երեսակները:

Այս բազմաթիվ և դեռ չմատնանշված իրագործումներուն համար շնորհակալիք արձանագրելու փափաքով եկած ենք համբույր դնելու Ամենայն Հայոց Սրբազնագույն կաթողիկոսի մեռոնաօծ Աջուն: Խոսք տալու, ուխտ ընելու, մշտատև աշխատելու հայ եկեղեցիի և հայ մշակույթի ծաղկումին համար, հայ հոգիները՝ իրարու հետ միացված-ամրացած, ոսկի օղակներու պես, կապելու մեր պապերուն հայրենիքին ու հավատքի պատնեշ սուրբ Էջմիածնին:

Հայց. եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմը, Միացյալ Նահանգաց և Կանադայի Իր զավակներուն սրտաբուխ նվերը կմատուցանե Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Սրբազնագույն կաթողիկոսին Ամենայն Հայոց, յոթանասունհինգ հազար դոլլարի գումար մը տրամադրե-

լով Վեհափառ Հայրապետին, Մայր Հայաստանի մեջ գեղակերտելու համար հայ հավատքի տուն տաճարներեն մին:

Եվ կաղոթերգենք. «Տե՛ր, անսասան պահիր դու միշտ, քո իսկ հիմնած Մայր Աթոռ»:

Նման ոգեշունչ և գեղեցիկ ելույթներ ունեցան Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ **տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյանն** ու Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ **տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանը:**

Թեմերի պատգամավորներից ոմանք նույնպես իրենց սրտառուչ ելույթներով շնորհավորեցին Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակը՝ որդիական հավատարմություն, սեր ու պաշտամունք հայտնելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի հանդեպ: Այս ոգով ելույթներ ունեցան **Գևորգ Թահտան** (Լոնդոն), **Վահան Ալեքսանյանը** (Եգիպտոս), **Բաֆֆի Իսրայելյանը** (Բուենոս-Այրես), **Կարո Մարտինը** (Հնդկաստան) և ուրիշներ:

Իրաքի թեմի ազգային կենտրոնական վարչության անունից վարչության ատենադպիր **դոկտ. Հասրաթ Միքայելյանն** ընթերցեց հետևյալ շնորհավորական գիրը.

Վեհափա՛ռ Տեր,

Այս հանդիսավոր օրվա առթիվ, Հայաստանյայց եկեղեցվո սրբազան հայրերու և ազգային-հասարակական կյանքի մեջ դիրք ու վաստակ ունեցող հարգարժան անձերու կողմե եղած այնքան գեղեցիկ և իմաստալից արտահայտություններե հետո, թերևս ավելորդ ըլլային այս քանի մը անպաճույճ խոսքերը, եթե ես և ազգային կեդրոնական վարչության գործակից ընկերս՝ պրն. Արամ Սեթյան, չունենայինք հաճելի պարտականությունը, անպայմանորեն փոխանցելու Ձերդ Վեհափառության, Իրաքի հայ ազգային կեդրոնական վարչության, ազգային-հասարակական մարմիններու և համայն իրաքահայության որդիական հարգանքները, և մաղթելու երկար և երջանիկ կյանք, ի փառս Հայաստանյայց եկեղեցվո:

Վեհափա՛ռ Տեր, եթե հրաշքով մը կարելի ըլլար հարազատ կերպով այստեղ պատկերացնելու Իրաքի ավելի քան չորս հարյուր տարվա պատմություն ունեցող հին հայության, և եղեռնեն հրաշքով ճողոպրած մնացորդացի զգացումները, վստահ եմ, որ ներկաները պիտի գտնվեին հուզիչ տեսարանի մը առջև, որովհետև Մայր Աթոռն ու ս. Էջմիածինը ոչ թե եղած են ու կնկատվին սոսկ կրոնական կեդրոն մը միայն, այլ ունեցած են բոլորովին այլ նշանակություն մը,—վկա՝ մեր պատմությունը:

Վեհափա՛ռ Տեր, թույլ տվեք մաղթանքի այս քանի մը խոսքը փակել 1965-ին, Ձեր գահակալության տասնամյակի առթիվ, ցարդ ինձի անծանոթ ազգայինի մը այնքան խոր և իմաստալից մոտավորապես հետևյալ խոսքերով. «Օրհնյալ ըլլա այն արգանդը, որ հայության պարգևեց Վազգեն Վեհափառի նման կաթողիկոս մը»:

Մնամք որդիական ակնածանոք մատչելով ի համբույր Ձերդ Վեհափառության սուրբ Աջույն՝

ԱՐԱՄ ՍԵԹՅԱՆ
նախագահ
ԴՈԿՏ. ՀԱՍՐԱԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ատենադպիր

19 սեպտեմբերի 1976 թ.

Չափազանց հուզիչ և ջերմ հնչեցին հայրենի մտավորականության անունից խոսք առնող սիրված բանաստեղծներ **Սիլվա Կապուտիկյանի** և **Գեվորգ Էմինի** ելույթները: Նրանք իրենց խոսքի մեջ վեր հանեցին Հայոց Հայրապետի՝ հայ մշակույթի և հայ գրականության հանդեպ ունեցած մեծ սերն ու գուրգուրանքը, ինչպես նաև հայրենասեր Հայրապետի խաղաղասիրական ու հայրենանվեր գործունեությունը՝ համբարձումն ափյուռք-հայրենիք եղբայրական հարաբերությունների և ի բարօրություն վերածնված Հայոց աշխարհի:

Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անունից հանդես եկավ նաև հանձնաժողովի նախագահ, ճարտարապետ **դոկտ. Վարազդատ Հարությունյանը** շնորհավորանքի հետևյալ խոսքով.

«Վեհափա՛ռ Հայրապետ,

Ինձ պատիվ է շնորհված այս հանդիսավոր օրը Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անունից ջերմորեն շնորհավորել Ձերդ Սրբությանը, Ձեր գահակալության քսանամյակի առթիվ:

Անցած երկու տասնամյակների ընթացքում Դուք Ձեր բազմաբեղուն գործունեությունը, որպես Հայաստանյայց առաքելական եկեղեցու Հայրապետ, նշանավորեցիք նաև բացառիկ արդյունավետ վերաշինական ու շինարարական ձեռնարկումներով, որոնցով Ձեր անունն ըստ արժանվույն ոսկե տառերով պիտի արձանագրվի շինարար հայ կաթողիկոսների անունների շարքում:

Մեծ խորհուրդ կա նրանում, որ այդ գործունեությունը տեղի ունեցավ հայ ժողովրդի պատմական աննախընթաց վերելքի ու վերածնության շրջանում, սովետական կարգերի օրոք:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ անցյալում հայոց ոչ մի կաթողիկոս հնարավորություն չի ունեցել իրականացնելու շինարարական այնպիսի մեծածավալ, բազմաբովանդակ ծրագրեր, ինչպես մեր լուսավոր օրերում այդ հաջողվեց Ձերդ Սրբությանը:

Ստանալով հայրենի բարեխնամ կառավարության ամենօրյա աջակցությունը, հավատացյալ հայության նյութական օգնությունը, Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսն Իր գահակալության բոլոր տարիներին անդադրում կերպով, հայրենասիրաբար ու նրբանկատ իմացությամբ գլխավորեց մեր հին եկեղեցիների և վանքերի վերանորոգման ու բարեզարդման, նոր շենքերի կառուցման աշխատանքները:

Մեր հանձնաժողովը, որին երկար տարիներ գլխավորում էր հանգուցյալ բազմահմուտ ճարտարապետ Միքայել Մազմանյանը, սատար եղավ շինարար կաթողիկոսի նախաձեռնումներին, գիտական ու մասնագիտական հոգատարությամբ իրականացրեց դրանք: Մեծ ավանդ մուծեցին այդ հայրենանվեր գործում հանձնաժողովի անդամներ՝ անժամանակ կյանքից հեռացած շնորհաշատ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը, Մայր Աթոռի ճարտարապետ Արծրուն Գալիկյանը, ճարտարապետ Բաղդասար Արզումանյանը և տաղանդավոր շատ արվեստագետներ ու փորձառու վարպետներ:

Վեհափա՛ռ Տեր, Ձեր գահակալության քսանամյակին նվիրված այս հանդիսավոր առիթով իմ արվեստակից ընկերները հանձնարարել են հավաստիացնել Ձեզ, որ առաջիկայում նույն նվիրվածությամբ պատրաստ ենք մեր անձը տրամադրել Ձեր շինարարական ապագա ծրագրերի իրականաց-

մանը՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի հաստատումն հայ ժողովրդի ճարտարապետական բարձրարժեք կոթողների:

Արևշատություն և առողջություն, երկար տարիների բեղմնավոր կյանք ենք մաղթում Ձեզ»:

Այս առթիվ պատգամավորներից և հյուրերից ոմանք Մայր Աթոռին սրտաբուխ նոր նվիրատվություններ կատարեցին, որպեսզի Նորին Սրբությունը հետագա տարիներին ևս կարողանա շարունակել Իր, կրթական, շինարարական ձեռնարկումները՝ ի պայծառություն ս. Էջմիածնի և Հայաստանյայց եկեղեցու:

Ճաշկերույթի ավարտին, խանդավառ արտահայտությունների ներքո, խոսք առավ **Հայոց Հայրապետը**, հայտնեց Իր շնորհակալությունները բոլոր հյուրերի ներկայության՝ ելույթ ունեցողների որդիական անկեղծ և ջերմ շնորհավորանքների համար:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանով զարդարեց կրծքերը մեծանձնության կնքահայրեր **Գևորգ Թահտայի** (Լոնդոն), **Հովակիմ Մուրադյանի** (ԱՄՆ):

Մեծանձնության երրորդ կնքահայրն էր Մայր Աթոռի բարերար Գևորգ Պագրճյանի երիտասարդ որդին՝ **Ռաֆֆի Պագրճյանը**, որն այս առթիվ արժանացավ Հայոց Հայրապետի օրհնությանը:

Հոբելյանական սույն ճաշկերույթն ավարտվեց ժամը 18-ին՝ խմբովին երգված Տերունական աղոթքով:

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետին հրաժեշտ տվեց Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա կաթողիկոսը՝ իր շքախմբով, և մեկնեց իր Աթոռ:



ԱՅՑ ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Սեպտեմբերի 28-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բոլոր հոգևոր պետերը, պատգամավորներն ու հյուրերն այցելեցին Ծիծեռնակաբերդի Հայ Նահատակաց հուշարձան:

Այս առթիվ հուշարձանին գեղեցիկ ծաղկեպսակներ զետեղեցին **Վեհափառ Հայրապետը, Տ. Պիմեն Պատրիարքը** և **Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը:**

Նահատակաց հուշարձանի հավերժական կրակի շուրջ բոլորված, հայ և քույր եկեղեցիների հոգևոր պետերը, հայ հոգևորականությունը, բոլոր պատգամավորներն ու հյուրերը միասնաբար աղոթեցին հայ նահատակաց հոգիների խաղաղության և հանգստի համար:

Այստեղ ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը:**

ԱՅՑ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, քույր եկեղեցիների հոգևոր պետերն ու ներկայացուցիչներն այցելեցին Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարան, որի շքամուտքի առաջ Հայոց Հայրապետին և Մայր Աթոռի հարգարժան հյուրերին դիմավորեց Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս **Լևոն Խաչիկյանն** ու առաջնորդեց ընդունելության դահլիճ, որտեղ տեղի ունեցավ ջերմ ու սիրալիր զրույց:

Այստեղ զրույցի ընթացքում հյուրերը ծանոթացան հայ մշակույթի հոգևոր գանձերի հնագույն նմուշներին, որոնց թվում՝ 1268 թվականին Հռոմկլայում հայ մանրանկարչության մեծագույն վարպետ **Թորոս Ռոսլինի** կողմից նկարազարդված Ավետարանը, որը Մատենադարանին էր նվիրել Երուսաղեմի հայոց **տ. Եղիշե սրբազան պատրիարքը**՝ Հայոց Հայրապետի՝ Երուսաղեմ կատարած այցելության առիթով, 1975 թվականի հունիսին:

Այստեղ հյուրերը դիտեցին նաև Վեհափառ Հայրապետի կողմից անցյալ տարի Մատենադարանին նվիրված Է դարի երկաթագիր մի Ավետարան, որը կոչվում է **Տիրամոր Ավետարան՝** ի հիշատակ հանգուցյալ **տիրամայր Սիրանույշ Պալճյանի:**

Այնուհետև հյուրերն այցելեցին Մատենադարանի ցուցահանդեսի սրահ, որտեղ դիտեցին հայ մանրանկարչության և ձեռագրական արվեստի ցուցադրված ընտիր նմուշները:

Ապա, ոսկե մատյանում իրենց տպավորություններն արձանագրելուց հետո, թանկագին հյուրերը հրաժեշտ տվեցին Մատենադարանին:

Այնուհետև քույր եկեղեցիների բարձրաստիճան մի խումբ հոգևորականներ այցելության մեկնեցին ս. Գեղարդ պատմական վանք, որտեղ սիրով ընդունվեցին վանքի վանահայր **տ. Վահան եպիսկոպոս Տերյանի** կողմից, որը պատմական կարևոր տեղեկություններ տվեց հյուրերին հայ մշակույթի վառ օջախներից մեկը հանդիսացող այս մենաստանի՝ մեր եկեղեցու պատմության և մատենագրության մեջ նրա կատարած դերի, ինչպես նաև վանական կառույցների ճարտարապետական առանձնահատկությունների մասին:

Հյուրերը դեպի Երևան իրենց վերադարձի ճանապարհի վրա այցելեցին նաև վերջերս վերականգնված Գառնիի հեթանոսական տաճար, որտեղ նույնպես նրանց բացատրություններ տրվեցին Հայաստանում հելլենիստական շրջանի մշակույթի այս եզակի հուշարձանի մասին:

ԱՅՑ ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, Տ. Պիմեն Պատրիարքը և Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը պաշտոնական այցելություն տվեցին Երևանում ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհուրդը, որտեղ ջերմորեն ընդունվեցին խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանի կողմից:

Երեք Հովվապետների և խորհրդի մեծարգո նախագահի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց՝ արտագին մթնոլորտում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, ժամը 15-ին, «Արմենիա» հյուրանոցի վարդագույն դահլիճում ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը, հանուն Հայաստանի կառավարության և եկեղեցական խորհրդի, ճաշկերույթ տվեց՝ ի պատիվ Հայոց Հայրապետի, քույր եկեղեցիների հոգևոր պետերի, Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց պատրիարքների և հայ ու օտար բարձրաստիճան հոգևորականության:

Ընդունելությունն անցավ ջերմ ու իսանդավառ մթնոլորտում, որի ընթացքում փոխանակվեցին բարիգալստյան և ողջույնի արտագին խոսքեր:

ՀՐԱԺԵՇՏԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ «ՀԱՅԿԱՇԷՆ» ՀԱՅՐԱՊԵՏԱՆՈՑՈՒՄ

Երեկոյան ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը Բյուրականի «Հայկաշէն» հայրապետանոցում տվեց հրաժեշտի ընթրիք քույր եկեղեցիների հոգևոր պետերի և պատվիրակությունների պատվին:

Ընթրիքին մասնակցեցին նաև տ. Եղիշե, տ. Ծնորհք սրբազան պատրիարքները և բարձրաստիճան հայ հոգևորականներ:

Մայր Աթոռի բարիքներով ծանրաբեռն այս սիրո սեղանի շուրջ ստեղծվեց էկումենիկ ոգով քրիստոնեական եղբայրության իրավ մթնոլորտ, որտեղ կրկին անգամ փոխանակվեցին հուշանվերներ և ողջերթի ջերմ խոսքեր:

Սեպտեմբերի 29-ին, չորեքշաբթի օրը, քույր եկեղեցիների հոգևոր պետերը՝ **Տ. Պիմեն Պատրիարքը, Տ. Դավիթ Ե Պատրիարք-կաթողիկոսը, կարդինալ Ժան Վիլլեբրանդոնը, Ջերալդ Ալեքսանդր Էլիսոն եպիսկոպոսը, Գերմանոս միտրոպոլիտը,** Ֆրանչիսկյան միաբանության կուստոդ հայր **Մաուրիլիո Սակկին,** իրենց շքախմբերով և հետևորդներով, հրաժեշտ տվեցին Մայր Աթոռ ս. Էջմիածնին, Հայոց Հայրապետին, հայ հոգևորականությանը և մեկնեցին շնորհակալ տպավորություններով:

Մայր Աթոռի թանկագին հյուրերը ճանապարհվեցին Հայոց Հայրապետի գլխավորությամբ, պատշաճ հարգանքով և մեծարանքով:



ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԻ ԲԱՑՈՒՄ ՎԵՀԱՐԱՆԻ ԲԱԿՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց թեմական առաջնորդների, հայ հոգևորականության, թեմերի պատգամավորների և բազում ուխտավորների խմբական այցելությունը:

Վեհարանը ճշմարտապես վերածվել էր ուխտավայրի. գալիս էին բոլորը՝ հոգևորական թե աշխարհական, ծեր թե երիտասարդ, մտավորական թե պարզ աշխատավոր՝ աջահամբույրով ստանալու Հայոց Հայրապետի օրհնությունները և լսելու Նրա ոգեշունչ պատգամները: Այս երևույթը կրկնվեց մի ամբողջ շաբաթ:

Սեպտեմբերի 30-ին, ժամը 13-ին, Հայոց Հայրապետի նախագահությամբ և ի ներկայության ողջ հայ հոգևորականության, պատգամավորների, ուխտավորների և հյուրերի, աղոթքով ու օրհնությամբ կատարվեց Վեհարանի բակում կանգնեցված Նորին Սրբության գահակալության քսանամյակին նվիրված **հոբելյանական խաչքարի** հանդիսավոր բացումը: Այս առթիվ հանդիսության բացման խանդավառ խոսքով հանդես եկավ լուսարարապետ **տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:**

Խաչքարային արվեստին հատուկ հայկական գեղեցիկ զարդանախշերով քանդակված սույն խաչքարի հեղինակն է քանդակագործ **Արտաշես Հովսեփյանը,** իսկ քանդակագործական աշխատանքները կատարել է **Հրաչյա Ստեփանյանը:** Հոբելյանական խաչքարի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը՝ հայկական գեղեցիկ երկսթագիր տառերով.

Կանգնեցաւ խաչքարս ի նշանաւորումն քսան ամաց վաստակոցն Տ. Տ. Վազգէն Ա. կաթողիկոսին Ամենայն Հայոց: Ս. Էջմիածին, ՌՆԻԵ:

Հոբելյանական խաչքարի բացումից հետո բոլոր հյուրերն առաջնորդվեցին Վեհարանի երկրորդ հարկի դահլիճ՝ դիտելու գեղարվեստական



ՀՈՌԵԼՅԱՆԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԸ

բարձր ճաշակով հորինված **հայոց Մեսրոպյան այբուբենի ոսկեգիր քանդակազարդ տառերը,** որոնք **Հայոց Հայրապետի** առաջադրանքով ու պատվերով պատրաստվել էին Նրա հոբելյանի առթիվ՝ որպես նվեր Մայր Աթոռին:

Սույն քանդակազարդ տառերի գծագրության հեղինակը եղել է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամ ճարտարապետ **Բաղդասար Արզումանյանը,** իսկ ոսկերչական աշխատանքները կատարել է ոսկերիչ **Ժիրայր Զուլոյանը:**

Բոլոր ներկաները հիացմունքով և երախտագիտական զգացմունքներով դիտեցին հայ ոսկերչական արվեստի այս ինքնատիպ ստեղծագործությունը:





ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին, հինգշաբթի օրը, ժամը 17-ին, **Վեհափառ Հայրապետի** նախագահությամբ Վեհարանում գումարվեց եպիսկոպոսաց խորհրդակցական ժողով, որին մասնակցեցին **տ. Եղիշե, տ. Շնորհք** սրբազան պատրիարքները, **տ. Սերովբե, տ. Ասողիկ, տ. Բաբգեն, տ. Թորգոմ, տ. Կոմիտաս, տ. Շահե, տ. Վաչե** արքեպիսկոպոսները, **տ. Հուսիկ, տ. Վահան, տ. Տիրայր, տ. Հակոբ, տ. Գարեգին, տ. Գյուտ, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ, տ. Արիս, տ. Ներսես** եպիսկոպոսները:

Ժողովն օրհնությամբ բացեց Վեհափառ Հայրապետը և ողջունեց բոլոր ներկաներին:

Այնուհետև ընթերցվեց Վեհափառ Հայրապետի՝ եկեղեցական բարեկարգության վերաբերյալ մի շարք հարցերի մասին տ. Եղիշե սրբազան պատրիարքին ուղղած 25 հոկտեմբեր 1975 թվակիր նամակը, որտեղ նաև հիշեցում էր կատարվում 1969 թվականի աշնանը Մայր Աթոռում գումարված եպիսկոպոսաց ժողովի կողմից ընդունված որոշման համաձայն մի շարք եպիսկոպոսների վրա դրված ուսումնասիրության գծով կատարվելիք բարեկարգական աշխատանքների վերաբերյալ:

Վեհափառ Հայրապետի թելադրության համաձայն տ. Եղիշե պատրիարքը գրել է այն բոլոր եպիսկոպոսներին, ովքեր պարտավորություններ էին ստանձնել ուսումնասիրություններ կատարելու և դրանք ներկայացնելու Մայր Աթոռին:

Հատենի ժողովը Վեհափառ Հայրապետը հայտարարեց, որ մինչև ստանձնված այդ աշխատանքները չկատարվեն, նպատակահարմար չի լինի հրավիրել եպիսկոպոսաց նոր ժողով: Այս հարցը Վեհափառ Հայրապետն ամենայն կարևորությամբ հանձնեց ներկաների ուշադրությանը:

Եպիսկոպոսաց խորհրդակցական սույն ժողովի օրակարգում դրված էին հետևյալ հարցերը.

1. Եպիսկոպոսաց առաջիկա ժողովի գումարում.
2. Հայ եկեղեցու կանոնագրության կազմության հարցը.
3. Սրբացման կանոնի ուսումնասիրության հարցը.
4. Ս. Զատիկը անշարժ մի թվականի տոնելու հարցը.
5. Արքության պատվի և վարդապետական աստիճանների տվչության հարցը.
6. Քույր եկեղեցիների հետ էկումենիկ հարաբերությունների զարգացման հարցը:
7. Ընթացիկ հարցեր:

Հետ խորհրդակցության եպիսկոպոսաց ժողովը հանգեց հետևյալ եզրակացությունների.

1. Եպիսկոպոսաց առաջիկա ժողովը գումարել Երուսաղեմի հայոց վանքում Երուսաղեմի հայոց տ. Եղիշե պատրիարքի հրավերով 1977 թվականի հոկտեմբերի երկրորդ կեսին՝ մինչ այդ հանգամանորեն նախապատրաստելով ժողովում քննության առնվելիք հարցերը:

2. Անհրաժեշտ համարվեց մինչև առաջիկա ժողովի գումարումը կազմել հայ եկեղեցու և նրա նվիրապետության վարչա-կազմակերպչական կանոնագրությունը:

3. Քննության առնվեց նաև հայ եկեղեցու կանոնագրքի վերաքննության և մեր օրերին կիրառելի կանոնների գրքի մի նախագիծ պատրաստելու անհրաժեշտությունը: Որոշվեց այդ կարևոր գործը հանձնարարել Մայր Աթոռին:

Սույն կանոնագիրքը կազմվելու է Մայր Աթոռում:

4. Սրբացման կանոնի ուսումնասիրության համար որոշվեց վերակազմել նախկին հանձնախումբը՝ հետևյալ կազմով.

ա) Տ. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյան.
բ) Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյան.
գ) Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյան.
դ) Վազգեն Հակոբյան:

5. Ժողովը քննության առավ նույնպես ս. Զատիկն ապրիլ ամսի երկրորդ շաբաթ օրվան հաջորդող կիրակին անխափան կերպով և միասնաբար տոնախմբելու վերաբերյալ Հռոմի Պապի առաջարկը:

Ժողովը որոշեց՝ շարունակել այս հարցի շուրջ ուսումնասիրությունները և պարտականություն դրեց Կ. Պոլսի հայոց տ. Շնորհք սպատրիարքի վրա՝ ներկայացնելու վերջնական մի ուսումնասիրություն առաջիկա եպիսկոպոսաց ժողովին:

6. Ժողովը քննարկեց վարդապետական, ծայրագույն վարդապետական ու եպիսկոպոսական աստիճանների և արքության պատվի տվչության հարցը: Այս հարցի շուրջ նախապես պատրաստած իր ուսումնասիրության նախագիծը կարդաց տ. Սերովբե արքեպիսկոպոսը: Ներկաները միաձայնությամբ առաջադրեցին, որ այս հարցը հառաջիկա եպիսկոպոսաց ժողովի օրակարգի վրա դրվի, և տ. Սերովբե արքեպիսկոպոսի վրա պարտականություն դնել, որ իր պատրաստած նախագիծն իր վերջնական ձևի մեջ ներկայացնի ժողովի քննարկմանը:

7. Եպիսկոպոսաց ժողովը կրկին արձանագրեց իր ցանկությունը, որ հայ եկեղեցին շարունակի մասնակցել էկումենիկ շարժմանը և միջեկեղեցական ժողովներին, միայն Վեհափառ Հայրապետի գիտությամբ ու Նրա համաձայնությամբ:

8. Եպիսկոպոսաց սույն ժողովում քննության առնվեցին նաև ծննդաբերության կասեցման, դիակիզման, կրոնական կրթության և դաստիարակության, սուրբ պատարագի արարողության կրճատման, եկեղեցականների և ուսուցիչների պատրաստման ու այլ հարցեր: Այս հարցերի ուսումնասիրության համար պարտականություններ դրվեցին առանձին եպիսկոպոսների վրա, որոնք և պարտավորվեցին իրենց ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփել և դրանք Վեհափառ Հայրապետին ուղարկել մինչև 1977 թվականի հունիս ամսվա վերջը:

Այսպես՝

ա) Տ. Եղիշե պատրիարքի հսկողությամբ կրոնական կրթության ու դաստիարակության, ինչպես նաև հոգևորական և աշխարհական կրթական մշակներ պատրաստելու հարցի ուսումնասիրությունը պիտի կատարվի Երուսաղեմում:

բ) Տ. Շահե արքեպ. Ահեմյանին հանձնարարվեց ծննդաբերության կասեցման հարցի ուսումնասիրությունը:

գ) Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանին՝ դիակիզման հարցի ուսումնասիրությունը:

դ) Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանին, տ. Բաբգեն արքեպ. Ապատյանին և տ. Գնել եպս. Ծերեճյանին՝ ս. պատարագի վերատեսության հարցի ուսումնասիրությունը:

ե) Տ. Շահե արքեպ. Ահեմյանին՝ ամուսնալուծման և վերամուսնության հարցի ուսումնասիրությունը:

Եպիսկոպոսաց խորհրդակցական ժողովը փակվեց ժամը 20-ին՝ խմբովին երգված Տերունական աղոթքով և հայրապետական «Պահպանիչ»-ով:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ

ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԱՎԱԿԱՏԻՔՆ ՈՒ ՕԾՈՒՄԸ

Հոկտեմբերի 3-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, մեծ հանդիսությամբ կատարվեց լոնդոնաբնակ **Գևորգ** և **Հովհաննես Քյուրքճյան եղբայրների** նվիրատվությամբ վերակառուցված Երևանի ս. Սարգիս եկեղեցու նավակատիքն ու օծումը՝ ձեռամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի:**

Հանդիսությանը ներկա էին Վեհափառ Հայրապետը, տ. Եղիշե և տ. Շնորհք պատրիարքները, թեմական բոլոր առաջնորդներն ու եպիսկոպոսները, թեմերի բոլոր պատգամավորները, ուխտավորներն ու հյուրերը և հավատացյալների մի հոծ բազմություն:

Հանդիսությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ **Սարգիս Գասպարյանը:**

Արարողությունն սկսվեց եկեղեցու նոր դռան սեմի և վերին շեմքի (բարաւոր) օծումով: Այնուհետև օծվեցին «աջ և երկրորդ սիւնն սրբոյ եկեղեցւոյս», ապա «հիւսիսային սիւնն սրբոյ եկեղեցւոյս», «հարաւային սիւնն սրբոյ եկեղեցւոյս», «ճակատն սրբոյ բեմիս», «հարաւային կամարն սրբոյ խորանիս», այնուհետև «խորանն սրբոյ եկեղեցւոյս» և հուսկ ուրեմն՝ «հիւսիսային կամարն սրբոյ խորանիս»:

Եկեղեցու օծումից հետո սկսվեց հանդիսավոր սուրբ պատարագը, որ մատուցեց **տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը:**

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց **Վեհափառ Հայրապետը.**

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ

(3 հոկտեմբերի 1976 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ»:

«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

«Որովհետև սրանով լույս ծագեց մեզ համար Հայաստան աշխարհի վրա»:

Սիրելի հավատացյալներ,

Մենք բոլորս Աստուծո ողորմությամբ հավաքված ենք այստեղ, այս ս. եկեղեցու վերակառուցումից հետո նրա օծման առիթով. «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Մեր ժողովուրդը՝ հայ հավատացյալ ժողովուրդը, բազում դարերից ի վեր հավատում է, թե իմանալի լույսը, ոգու և հոգու լույսը ծագեց Հայաստանի վրա այն օրվանից, երբ նա ընդունեց քրիստոնեական հավատքը, և կառուցվեցին հայ աղոթքի տները, առաջինը՝ ս. Էջմիածնում, և հետո բազում-բազում նման եկեղեցիներ, վանքեր Հայաստանի ամբողջ տարածքի վրա:

Այսօր էլ մեր հավատացյալ ժողովուրդը և՛ Հայաստանում, և՛ ի սիյուռս աշխարհի այս հավատքով է ապրում, նախնյաց այս նվիրական համոզումով և տեսիլքով: Եվ դարերի մեր պատմությունը, մեր ժողովրդի պատմությունը վավերական մի ապացույց է այն ճշմարտության, թե իսկական լույսը հայ ժողովրդի մեջ ճառագայթեց ու ծաղկեց շնորհիվ քրիստոնեական հավատքի:

Ու ահա մի նոր ապացույց մեր այդ հավատքի. վերածնված մեր հայրենիքի քաղաքամայր Երևանի կուրծքի վրա բարձրացավ այս գեղեցիկ նոր եկեղեցին՝ Երևանի ս. Սարգիս վերակառուցված եկեղեցին: Մեր երազանքն էր այս տաճարի վերակառուցումը և բարեզարդումը:

Մեր գահակալության առաջին տարիներից ի վեր Մեր մտածումի առարկան եղել է նաև այս եկեղեցին:

Ավելի քան տասը տարիներ առաջ սկսվեցին աշխատանքները՝ նախագծովը տաղանդավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի, որ, ավա՜ղ, մեր մեջ չէ այսօր: Բայց նրա գործը շարունակեց, իբրև նախագծող և իբրև իրագործող, ճարտարապետ Արծրուն Գալիկյանը՝ Մայր Աթոռիս գլխավոր ճարտարապետը: Ահա այս երկու ճարտարապետների՝ Ռաֆայել Իսրայելյանի և Արծրուն Գալիկյանի նախագծով, աշխատանքով և տեսիլքով է, որ ծնունդ առավ այս բարձրադիր գմբեթով եկեղեցին:

Երևանի ս. Սարգիս եկեղեցին հին պատմություն ունի, սիրելի հավատացյալներ: Հիմնադրության ճշգրիտ թվականը հայտնի չէ թեև, սակայն հավանաբար Է կամ Ը դարերի շրջանում պետք է տանել այդ թվականը: Դարերի ընթացքում մի քանի անգամ ավերվել էր այն բարբարոսների արշավանքների հետևանքով և շուրջ 300 տարի առաջ վերակառուցվել էր համեստ այն արտաքինով, որ ծանոթ էր ձեզ:

Ուրեմն շուրջ տասը տարիներ առաջ սկսվեցին վերակառուցման աշխատանքները, տ. Վահան եպիսկոպոսի առաջնորդական փոխանորդության շրջանում: Երկար և ծանր աշխատանք կատարվեց տարիներ շարունակ, որպեսզի իրականանա եկեղեցու ամբողջական քարապատումը: Կառուցման ընթացքում նոր մտածումներ առաջ եկան, որպեսզի եկեղեցին ավելի բարձր դիրք ստանա, և նրա գմբեթը պանա դեպի երկինք, ազատված՝ կողքի շեն-



ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՆԴԱԿԱԶԱՐԴ ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔԸ

քերի ծանրությունից: Այս առաջադրանքի իրականացումը կպարտինք հատկապես ճարտարապետ Արծրուն Գալիկյանի համառ լավատեսության: Այսպես է, որ մարմին առավ այս գեղեցիկ, հայկական ոճով ս. Սարգիս եկեղեցին, նաև խորհուրդներով Մայր Աթոռի կողքին գործող ճարտարապետների գիտական հանձնաժողովի: Կառուցող ինժեներները եղան՝ սկզբնական շրջանում ճարտարապետ Վաչագան Խաչատրյանը, և ապա ինժեներ Միքայել Հովհաննիսյանը:

Վերջին տարիների ընթացքում, առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսն է, որ տևապես հետևեց ու հսկեց աշխատանքներին՝ իր կողքին ունենալով և՛ թեմական խորհուրդը, և՛ ս. Սարգիս եկեղեցու վարչությունը՝ գլխավորությամբ նրա ատենապետ պրն. Մուշեղ Սերոբյանի: Բոլորը միասին, մասնագետներ, հոգևորականներ և աշխարհիկ ներկայացուցիչները մեր ժողովրդի, ձեռք-ձեռքի տված, Մեր օրհնության ներքև, կարողացան կյանքի կոչել իրենց վստահված այս նվիրական գործը:

Ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման ամբողջ ընթացքում Մենք վայելեցինք նաև հայրենի կառավարության և Երևանի քաղաքային իշխանությունների հույժ բարյացակամ վերաբերմունքը և նույնիսկ հաճախ անմիջական օժանդակությունը:

Կխորհինք, թե Երևանի հավատացյալները հոգեկան մխիթարությամբ է, որ այսօր գտնվում են այստեղ՝ փառք տալով Տիրոջը, որ սեհա քաղաքամայր Երևանն օժտվեց մի նոր զարդով, հայկական ճարտարապետության մի նոր կոթողով, աղոթքի մի սքանչելի նոր արբավայրով:

Սիրելի հավատացյալներ, Մենք, իբրև Հայրապետ, այսօր ուրախ ենք, և հրճվում է Մեր հոգին՝ տեսնելով իրականացումը նաև Մեր այս ծրագրի: Աղոթում ենք առ Աստված, որ հավետ անսասան մնա այս փառահեղ Մայր եկեղեցին, և միշտ իր դռները բաց պահի մեր հավատացյալների առջև՝ բաշխելու համար բոլորին աստվածային օրհնությունը, ս. Հոգու շնորհները և Քրիստոսի սերն ու խաղաղությունը:

Սիրելի հավատացյալներ, այս ս. տաճարը վերակառուցվեց նյութական միջոցներով լոնդոնաբնակ երկու հայորդիների՝ մեր եկեղեցու հարազատ զավակների, երկու երիտասարդ հայերի՝ Գևորգ և Հովհաննես Քյուրքճյանների, բարի զավակները հավատացյալ մի ընտանիքի՝ Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանների: Սարգիս Քյուրքճյանը մի անձնավորություն է, որ ծանոթ է մեր ամբողջ դաղթաշխարհին և սիրելին է մանավանդ Մայր Աթոռ ս. Էջմիածնի տակավին հանգուցյալ, երջանկահիշատակ Գևորգ Զ կաթողիկոսի օրերից: Նա ահավասիկ ավելի քան 30 տարիներից ի վեր Լոնդոնում հանդիսանում է բարեկամը մեր վերածնված մայր երկրի և բարերարը Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Երկար պիտի լիներ թվել նրա բոլոր բարերարությունները՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, բայց այսօր Մենք խղճի պարտք ենք համարում երախտագիտությամբ հիշել իր և իր որդիների մեծ նվիրատվությունը՝ ավելի քան հարյուր հազար դոլլար, որի շնորհիվ հնարավոր եղավ հոգալ ծախսերն այս մեծածախս գործին: Տեսնում ենք, սիրելիներ, թե ինչպես սփյուռքի տարածքի վրա մեր ժողովուրդն ունի հավատավոր զավակներ, որոնք հավատարիմ են մեր լույս հավատքին, մեր նախնյաց ավանդություններին, և իրենց կյանքի հիշատակն ուզում են կապել մի կոթողի հետ՝ բարձրացած հայրենի հողի վրա:

Ահավասիկ այսպիսիներ հանդիսացան տիկին և պրն. Սարգիս Քյուրքճյանների զավակները:

Հանուն Երևանի հայ հավատացյալների և հանուն այս եկեղեցու հոգևոր և աշխարհական պաշտոնյաների մի անգամ ևս Մեր երախտագիտությունն ենք հայտնում նրանց և Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ նրանց պահի, պահպանի քաջառողջ, երկար և արևշատ, խաղաղ տարիներ՝ ընտանեկան երջանկությամբ:

Սիրելի ժողովուրդ, այսօր, այս ուրախությամբ և հոգեկան այս մխիթարությամբ ս. Էջմիածնից բերում ենք նաև ձեզ բոլորիդ Աստուծո օրհնությունը և աղոթում ենք բոլորիդ քաջառողջության և արևշատության համար:

Թող Աստված անշարժ և միշտ լույսի մեջ շողշողուն պահի այս Մայր եկեղեցին և ձեզ բոլորիդ՝ իր օրհնության ներքև, այժմ և հավիտյան. ամեն:

Ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման առիթով տաճարի ներսում, գլխավոր մուտքի կամարի աղեղի վրա, մարմարե տախտակ է զետեղված՝ հետևյալ արձանագրությամբ.

«Ի Հայրապետութեան Տ. Տ. Վազգենի Ա կաթողիկոսի Ամենայն Հայոց և ի փոխանորդութեան տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի ի հիմանէ վերակառուցաւ և բարեզարդեցաւ սուրբ Սարգիս եկեղեցիս արդեամբ Լոնտոնաբնակ Գէորգի և Յովհաննիսի՝ որդւոցն Սարգսի և Աստղիկի Քիւրքճեան յամի Տեառն 1976 յամսեանն հոկտեմբերի

ի վայելումն հաւատացելոց քաղաքամայր Երևանի:

Ճարտարապետք Ռաֆայէլ Իսրայէլեան և Արծրուն Գալիկեան»:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ ս. Սարգիս եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան մասնավոր արարողություն Քյուրքճյան ընտանիքի հին և նոր ննջեցյալների հոգիների խաղաղության համար:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԵՄԻ

Հոկտեմբերի 8-ին, ժամը 15-ին, Երևանի ս. Սարգիս եկեղեցու առաջնորդական փոխանորդ **տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը,** թեմական խորհուրդը և ս. Սարգիս եկեղեցու վարչությունը «Անի» հյուրանոցի ռեստորանում ճաշկերույթ տվեցին՝ ի պատիվ Հայոց Հայրապետի, Երուսաղեմի և Կ. Պոլսի սրբազան պատրիարքների, թեմական առաջնորդների, թեմերի պատգամավորների, Մայր Աթոռի բարերարների և հյուրերի՝ մասնակցությամբ 180 հոգու:

Ճաշկերույթին ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Ա. Հասրաթյանը:

Խոսք առնելով տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը վեր հանեց սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակին նվիրված հանդիսությունների հոգևոր ու եկեղեցական, ազգային ու հայրենասիրական նշանակությունը:

Այնուհետև առաջնորդական փոխանորդ սրբազանը ծանրացավ ս. Սարգիս եկեղեցու վերականգնման կապակցությամբ կատարված աշխատանքների վրա, ոգեկոչեց հիշատակը հանգուցյալ ճարտարապետ **Ռաֆայել Իսրայելյանի** և ապա իր, թեմական խորհրդի ու եկեղեցական գործադիր իշ-

խանության անունից շնորհակալություններ հայտնեց ճարտարապետ **Արծրուն Գալիկյանին**, ինժեներ **Միքայել Հովհաննիսյանին** և այն բոլոր շինարար վարպետներին, բանվորներին, որոնք իրենց նվիրյալ աշխատանքներով սյատվով ի գլուխ հանեցին ս. Սարգիս եկեղեցու հիմնական վերակառուցումը:

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը շնորհակալության և երախտագիտության խոսք ուղղեց նաև Մայր Աթոռի բարերար տեր և տիկին Սարգիս-Աստղիկ Քյուրքճյաններին, որոնց լոնդոնաբնակ որդիների՝ Գևորգ և Հովհաննես Քյուրքճյանների սրդյամբ և նվիրատվությամբ գլուխ բերվեց ս. Սարգիս եկեղեցու վերակառուցումը:

Ապա Հայոց Հայրապետին ուղղյալ շնորհակալության և որդիական երախտագիտության հետևյալ ջերմ խոսքն ասաց, հանուն Քյուրքճյան ընտանիքի անդամների, ազգային բարերար պրն. Սարգիս Քյուրքճյանը.

ՏԻՆՐ ՍԱՐԳԻՍ ՔՅՈՒՐՔՃՅԱՆԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Վեհափառ Տեր,
Ամենապատիվ սրբազան հայրեր,
Հարգելի պարոն Սարգիս Գասպարյան,
Գերաշնորհ և հոգեշնորհ հայրեր,
Հարգելի պատգամավորներ և հյուրեր,
Սիրելի ներկաներ,

Այսօր պատմական և անմոռանալի օր մըն է Քյուրքճյան ընտանիքի անդամներուս համար, ինձի համար, տիկնոջս և երկու զավակներուս համար:

Շատ ցանկալի էր, որ երկու զավակներս ալ այս հանդիսավոր պահուն այստեղ ըլլային՝ իրենց շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնելու Ամենայն Հայոց մեր շատ սիրելի Վեհափառ Հայրապետին, այն բացառիկ պատիվին համար, որ այսօր սրբալույս մեռոնի օրհնության և Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակի հանդիսությունները կեզրափակվին մեր պանծալի մայրաքաղաքի՝ Երևանի առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցվո վերանորոգության ավարտումեն հետո անոր օծման արարողությամբ:

Խանդավառված Հայոց Հայրապետի շինարարական, վանքերու և եկեղեցիներու վերանորոգման ծրագիրներեն, որոնք իրականացան տարիներու ընթացքին, մեր ընտանիքին ալ սրտագին բաղձանքը եղավ Նորին Սուրբ Օծության շինարարական այդ ձեռնարկներուն բերել իր համեստ մասնակցությունը:

Եվ ահա Վեհափառ Հայրապետի թելադրությամբ և ցանկությամբ մենք սիրով հանձն առինք հոգալ Երևանի առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցվո վերանորոգության ծախսերը: Այդ ծախսերը սիրով հանձն առին մեր երկու զավակները՝ Գևորգը և Հովհաննեսը, ի հարգանս իրենց ծնողաց:

Ուրախ եմ, որ զավակներուս այդ ցանկությունը կատարված է շատ փառավոր և շքեղ կերպով: Այսօր մեր սիրելի ու պաշտելի քաղաքամայր Երևանի ճարտարապետական հոյակապ կերպարի հետ համահնչուն կբարձրանա ս. Սարգիս եկեղեցին՝ զարդարելով Երևանը հայ եկեղեցական ճարտարապետության հարազատ ոգին և հայեցի դրոշմը կրող այս վերանորոգված տաճարով, ինչ որ անհրաժեշտ էր մեր մայրաքաղաքին համար:

Մենք ուրախ ենք և չափազանց գոհ, որ Քյուրքճյան ընտանիքին կողմե

այս առթիվ կատարված 100.000 դոլլարի նվիրատվությունը, Հայոց Հայրապետի անմիջական հսկողության տակ, կոպեկ առ կոպեկ ծառայած է իր սուրբ նպատակին:

Վեհափա՛ռ Տեր, թույլ տվեք պատմական և մեզի համար անմոռանալի այս պահուն տիկնոջս և երկու զավակներուս շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնել Ձեզի՝ տարիներու մեր երազանքը իրականացած տեսնելու համար:

Այս առթիվ մեր շնորհակալության և երախտագիտության մասնավոր խոսքը կուղղենք Ձեզի, որ ընդառաջեցիք մեր ցանկության և թելադրեցիք, որ ի հիմանե վերանորոգվի ս. Սարգիս եկեղեցին:

Շնորհակալություն խոսք ունինք հայտնելու նաև մեր հայրենի բարեխնամ կառավարության՝ ի դեմս ՀՍՍՀ Մինիստրներու սովետին առընթեր հայ եկեղեցվո գործերու խորհուրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանին, որ քաջալերեց այդ ձեռնարկը և պայմաններ ստեղծեց, որպեսզի հաջողությամբ ավարտի ս. Սարգիս եկեղեցվո վերանորոգումը:

Սրտագին շնորհակալություն խոսք ունիմ նաև մեր ճարտարապետներուն, հանգուցյալ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանին, որուն բարի հոգին հիմա երկնքի մեջ կհրճվի՝ տեսնելով իր նախագիծով կատարված այս վերանորոգությունը: Շնորհակալություն նաև ճարտարապետ Արծրուն Գալիկյանին և ինժեներ Միքայել Հովհաննիսյանին, բոլոր վարպետներուն՝ Արտաշես Հովսեփյանին, Նիկոլայ Խաչատրյանին և ուրիշներուն, որոնք իրենց ուժն ու վարպետությունը չխնայեցին՝ այս ձեռնարկին հաջողության համար:

Մասնավոր շնորհակալության խոսք ունիմ նաև Արարատյան հայրապետական թեմի փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսին, թեմական խորհուրդի անդամներուն և անոր ծրաջան նախագահին, որոնք ամեն ինչ ըրին՝ ս. Սարգիս եկեղեցվո նորոգությունը փառքով և պատվով կատարելու համար:

Շնորհակալություն նաև այստեղ ներկա գտնվող սրբազան պատրիարքներուն, եպիսկոպոսներուն և պատգամավորներուն:

Մեր եկեղեցական աղոթքներեն մեկուն մեջ կկարդանք. «Երանի եկեղեցի շինողաց»:

Այսօր այդ երանությունը ունինք մենք՝ Քյուրքճյան ընտանիքի անդամներս, շնորհիվ մեր սիրելի և շինարար Հայոց Հայրապետին:

Այս պահուս, Վեհափառ, մեզի կմնա խնդրել Ձեր հայրական օրհնությունները և բարեմաղթել Ձեզ, որ երկար տարիներ բազմած մնաք ս. Լուսավորիչի այս դարավոր Աթոռին վրա ու շարունակեք Ձեր եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեությունը՝ ի փառս մեր եկեղեցիին և հայ ժողովուրդին:

Թող կեցցե Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Թող երկար ապրի անոր արժանավոր Գահակալը:

Ու թող միշտ խաղաղության, բարօրության մեջ ամրանա ու հզորանա մեր մայր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը:

Վեհափա՛ռ Տեր, վերջին ցանկություն մըն ալ ունիմ այս պահուս: Կխնդրեմ Ձեր մասնավոր հայրական օրհնությունները երկու զավակներուս՝ Գևորգ և Հովհաննես Քյուրքճյաններուն՝ անոնց և անոնց զավակներուն կյանքի արևշատության և երջանկության համար:

Ճաշկերույթի ավարտին տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը հրավիրեց Հայոց Հայրապետին՝ Իր վերջին օրհնությունը և պատգամը տալու բոլոր ներկաներին:

Հուզիչ էր պահը: Երազի նման անցան սրբալույս մեռոնի օրհնության և Հայոց Հայրապետի գահակալության քսանամյակին նվիրված հիշարժան և անմոռանալի օրերը, անցան այդ օրերն արագ, բայց բովանդակալից, հոգեշեն և հուզումնառատ:

Ուրախության և հպարտության արցունքներ էին փայլում շատերի աչքերում: Հուզված էր Հայոց Հայրապետը, հուզված էին բոլորը:

Սրտագին ծափողջույնների մեջ խոսք առնելով հոբելյար Հայոց Հայրապետը, Իր պատգամի մեջ մի անգամ ևս անդրադարձավ սրբալույս մեռոնի՝ մեր ժողովրդի կյանքում ունեցած հոգևոր, ազգային և հայրենասիրական նշանակության մասին՝ որպես մեր ժողովրդի հոգևոր միության կենդանի ու սրբազան խորհրդանշան, որպես ոգեկան ամուր շաղախ, որով դրոշմվում են հայ եկեղեցու զավակները ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի՝ դառնալու համար անքակտելի, անբաժանելի մի ամբողջություն որպես մշակույթ, որպես ժողովուրդ և որպես եկեղեցի:

Հայոց Հայրապետը թելադրեց, որ հանդիսություններին ներկա թե՛ հոգեվորական և թե՛ աշխարհական պատգամավորները, վերադառնալով իրենց թեմերն ու համայնքները, տանեն իրենց հետ Մայր Աթոռ ս. Էջմիածնի դարավոր օրհնությունները, հայրական Իր ողջույնները և փոխանցեն հայ ժողովրդի տարասփյուռ զավակներին, որպեսզի այդ օրհնության ներքո միշտ վառ ու կենդանի մնա հայ ժողովրդի անբաժանելիության, հայ եկեղեցու միության և մեկության փրկարար գիտակցությունը վերածնված Հայոց աշխարհի ժայռակերտ հավատքի և զգացումի մեջ:

Հայոց Հայրապետն Իր պատգամի մեջ կրկին անգամ անդրադարձավ շուրջ երկու տարուց ի վեր Լիբանանում տեղի ունեցող տխուր իրադարձություններին և ողբերգական կացությանը, որի պայմաններում ապրում են երկրի քրիստոնյա և մահմեդական համայնքները, այդ թվում նաև՝ հայ ժողովրդի դժբախտ զավակները:

Լիբանանին և նրա աստվածասեր բոլոր ժողովուրդներին երկնային խաղաղություն ցանկանալուց հետո Հայոց Հայրապետը մի անգամ ևս բոլոր պատգամավորների ուշադրությունը հրավիրեց լիբանանաբնակ մեր կարոտյալ եղբայրներին նյութապես և բարոյապես օգնելու անհրաժեշտության վրա՝ այդ առթիվ շեշտելով. **«Մենք կամենում ենք վերստին Մեր հայրապետական կոչն ուղղել սփյուռքի մեր բոլոր եկեղեցական համայնքներին»:**

Իր խոսքի մեջ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև ս. Սարգիս եկեղեցու վերակառուցման գործին իրենց նյութական մասնակցությունը բերած Քյուրքնյան երկու եղբայրների առատաձեռն նվիրատվությանը և այս առթիվ, նրանց բարերարությունն արժանացնելով Իր հայրապետական բարձր գնահատությանը, նրանց շնորհեց ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշաններ: Վեհափառ Հայրապետը, հանդիսավորապես այդ շքանշանները հանձնելով երկու եղբայրների ծնողներին, թելադրեց Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ տ. Ներսես եպիսկոպոս Պոզապալյանին, որ մասնավոր մի հանդիսությամբ Իր անունից հանձնի դրանք Մայր Աթոռի բարերարներին:

Հայոց Հայրապետի այս հայտարարությունը ներկաների կողմից ընդունվեց ջերմ ծափահարություններով:

Այս առթիվ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով զարդարել նաև կուրծքը Մայր Աթոռի հարազատ զավակ, հասարակական ծանոթ գործիչ և մտավորական պրոֆ. Բարունակ Թովմասյանի, որը շուրջ 45 տարիներ եկեղեցանվեր ու կրթական վաստակ ունի Լիբանանի մեր ազգային-եկեղեցական կյանքի մեջ: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև պրոֆ. Բարունակ Թովմասյանի ազգասիրական ծառայությանը լիբանանահայ կարոտյալ ընտանիքների օգնության հանձնաժողովում՝ որպես նրա արտացավ ու նվիրյալ անդամի:

Վերջում թե՛ պրն. Սարգիս Քյուրքճյանը և թե՛ պրոֆ. Բարունակ Թովմասյանը շնորհակալության և երախտագիտության խոսք ասացին հայրապետական այս բարձր գնահատանքի առիթով:

Հրաժեշտի սույն ճաշկերույթն ավարտվեց խմբովին երգված Տերունական աղոթքով:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԸ ՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՏԱԼԻՍ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ

Հոկտեմբերի 4—5 օրերին հոգևորական և աշխարհական բոլոր պատգամավորներն ու հյուրերը հրաժեշտ տվեցին Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռին և մեկնեցին անմոռաց տպավորություններով:

Հոկտեմբերի 5-ին, երեքշաբթի օրը, ժամը 13-ին, Մոսկվայի վրայով դեպի իրենց Աթոռներն ու թեմերը մեկնեցին Երուսաղեմի հայոց պատրիարք **տ. Եղիշե արքեպիսկոպոսը,** Կ. Պոլսի հայոց պատրիարք **տ. Շնորհք արքեպիսկոպոսը**՝ ուղեկցությամբ **տ. Սերովբե, տ. Բաբգեն, տ. Թորգոմ, տ. Շահե, տ. Վաչե** արքեպիսկոպոսների, **տ. Գարեգին** և **տ. Գյուտ** եպիսկոպոսների:

Այլ պատգամավորներ և հյուրեր մեկնեցին հաջորդող մեկ-երկու օրերին:

Սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5 օրերը սրբալույս մեռոնի օրհնությանը և Հայոց Հայրապետի քսանամյա գահակալությանը նվիրված հանդիսությունները, ուխտագնացություններն ու այցելություններն անցան հոգեշահ, հաճելի, հետաքրքրական ու բովանդակալից, եկեղեցասիրական ու հայրենատրոփ խոր ու անկեղծ ապրումներով և վերածվեցին մեր հավատի դարավոր կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, նրա արժանավոր Գահակալի, մեր վերածնված մայր հայրենիքի շուրջ բոլոր պատգամավորների, հյուրերի, ուխտավորների ու բովանդակ հայ ժողովրդի համախմբվածության, սիրո, հավատարմության համազգային մի սրբազան տոնի:

Բոլոր պատգամավորներն ու հյուրերը կարոտակեզ շրթներով ու ծնրադիր համբուրեցին մեր սուրբ վանքերի խնկաբույր քարերը, ազգային անսահման հպարտությամբ և երջանկությամբ զմայլվեցին մեր հայրենիքի շքեղ վերելքով ու հաղթական երթով՝ ի տես հայրենաբնակ մեր ժողովրդի օրավուր զարգացող և խոստումնալից առօրյայի, և լցվեցին անխախտ հավատով դեպի նրա առավել պայծառ ապագան:

Անցնող օրերի ընթացքում պատգամավորներն ու հյուրերը ծանոթացան նաև Մայր Աթոռի միաբանական կյանքին: Բոլորն էլ միահամուռ հաստատեցին Վեհափառ Հայրապետի թե՛ հոգևորական և թե՛ աշխարհական գործակիցների եռանդուն աշխատասիրությունը, նրանց հավատարմությունն ու

նվիրվածությունը Մայր Աթոռ ս. Էջմիածնին՝ ի պայծառություն մեր սուրբ եկեղեցու:

Պատգամավորներն ու հյուրերն այցելեցին Մայր Աթոռի գրասենյակները՝ դիվանատուն, Միջեկեղեցական հարաբերությունների բաժին, խմբագրատուն, հոգևոր ճեմարան, վանական սեղանատուն, ֆինանսական-տնտեսական բաժիններ, շինարարական տեղամասեր, Մայր Աթոռի արհեստանոցներ, Մայր Աթոռի տպարան, և իրենց սրտագին գոհունակությունը հայտնեցին տիրող կարգ ու կանոնի, մաքրության, աշխատանքների կազմակերպվածության և կանոնավորության համար:

Այս սրբազան օրերին բովանդակ հայ ժողովրդի սրտագին մաղթանքն է, որ երկա՞ր ու երկա՞ր տարիներ մեր շինարար ու աստվածարյալ Հայոց Հայրապետի ձեռքում միշտ պայծառ ու ծաղկած մնա «գաւազան իշխանութեան մերոյ Հայրապետիս, զի օրհնեսցուք զքեզ, Տէր, այժմ և յաւիտեան»:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Մայր Աթոռ ս. Էջմիածին





1976 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Ա. Երուսաղեմի հայոց պատրիարքություն

1. Ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարք
2. Տ. Շահե արքեպ. Աճեմյան
3. Տ. Կյուրեղ ծ. վրդ. Գաբիկյան
4. Կարպիս Հինդլյան

Բ. Կ. Պոլսի հայոց պատրիարքություն

1. Ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարք
2. Տ. Խաժակ վրդ. Պարսամյան
3. Տ. Վիգեն վրդ. Այքազյան
4. Տ. Հարություն քհն. Հալաճյան
5. Ռուբեն Քառանֆիլ
6. Արամ Եսայան

Գ. Արարատյան հայրապետական թեմ

1. Տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյան
2. Մուշեղ Սերոբյան
3. Գևորգ Համալյան
4. Սերովբե Շիրվանյան
5. Գուրգեն Մուրադյան
6. Զավեն Աղասյան

Դ. Շիրակի թեմ

1. Տ. Նարեկ եպս. Շաքարյան
2. Տ. Նորայր ավագ քհն. Սարգսյան
3. Տ. Վազգեն ավագ քհն. Գարագյոզյան
4. Կոստան Մայիլյան
5. Մնացական Սարգսյան
6. Պերճուհի Էօճուրյան

Ե. Վրաստանի թեմ

1. Տ. Գևորգ եպս. Սերայդարյան
2. Վարանցով Հարությունյան
3. Տիկին Ռուզաննա Մելքումյան

Զ. Ադրբեջանի թեմ

1. Տ. Հուսիկ եպս. Սանթուրյան
2. Տ. Վարդան աբդ. Դիլանյան
3. Հրանդ Պետրոսյան
4. Միքայել Մանվելյան

Է. Ս. Գեղարդ վանքի վանահայրություն

1. Տ. Վահան եպս. Տերյան
2. Տ. Թորգոմ վրդ. Մուշեղյան

Ը. ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմ (ներառյալ Կանադա)

1. Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյան
2. Տ. Արիս եպս. Շիրվանյան
3. Տ. Զավեն ծ. վրդ. Արզումանյան
4. Տ. Եղիշե ծ. վրդ. Կիզիրյան
5. Տ. Փառեն ծ. վրդ. Ավետիքյան
6. Տեր և տիկին Արթին Գավուք

Թ. ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմ

1. Տ. Վաչե արքեպ. Հովսեփյան
2. Տեր և տիկին Շահե քհն. Ալթունյան

Ժ. Հարավային Ամերիկայի հայոց թեմ

Արգենտինա

1. Տ. Բաբգեն արքեպ. Ասլատյան
2. Տ. Հարություն ծ. վրդ. Մուշյան
3. Տիգրան Մյուրեքյան
4. Տեր և տիկին Ռաֆֆի Իսրայելյան
5. Տեր և տիկին Նշան Զամիչյան
6. Տեր և տիկին Հովսեփ Յուսուֆյան
7. Տեր և տիկին Խորխե Մարկոսյան
8. Տեր և տիկին Հարություն Քեշիշյան
9. Լևոն Վարդապետյան

Վենեսուելա

1. Տեր և տիկին Ստեփան Ծաղիկյան

Բրազիլիա

1. Գառնիկ Պազարյան

ԺԱ. Արևմտյան Եվրոպայի հայոց թեմ

Փարիզ

1. Տ. Սերովբե արքեպ. Մանուկյան
2. Տ. Գյուտ եպս. Նազգաշյան
3. Նուրհան Ֆրենկյան
4. Բաբգեն Տեր-Սարգիսյան
5. Արմին Բարսեղյան
6. Օննիկ Բայրամյան
7. Ստեփան Տամլամյան
8. Տեր և տիկին Գևորգ-Ռոզա Պագրրճյան

Լիոն

1. Ավետիք Պենեքյան
2. Տեր և տիկին Ծիպրայիլ Պահատուրյան
3. Մեսրոպ Պայանտրյան

Վալանս

1. Լևոն Տեր-Սարգիսյան

Մարսել

1. Տ. Հակոբ եպս. Վարդանյան
2. Տեր և տիկին Արծրուն Զրբաշյան
3. Տեր և տիկին դոկտ. Կարպիս Խազինեճյան
4. Հակոբ Փափազյան

Միլան

1. Տ. Ժիրայր վրդ. Թաշճյան
2. Զավեն Մնտիկյան
3. Տեր և տիկին Մանուկ Էքմեքչյան

Վիեննա

1. Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյան

Անգլիա

1. Տ. Ներսես եպս. Պոզապալյան
2. Գևորգ Թահտա
3. Տեր և տիկին Սարգիս-Աստղիկ Քյուրքճյան
4. Սիմոն Ալեքսանյան
5. Արթին Գալայճյան
6. Տիկին Նազելի Շահբենտյան

ԺԲ. Ռումինիա

1. Տ. Տիրայր եպս. Մարտիկյան

ԺԳ. Բուլղարիա

1. Տ. Մեսրոպ քհն. Բենլիյան
2. Օննիկ Ալանյան
3. Օննիկ Քյուրտյան

ԺԴ. Հունաստան

1. Տեր և տիկին Պարսամ Քեռսեյան
2. Տեր և տիկին Ստեփան Ֆեսճյան
3. Տեր և տիկին Սարգիս Խաչատրյան
4. Տիկին Զաբել Գալբաքյան

ԺԵ. Եգիպտոսի հայոց թեմ

1. Տ. Ներսեհ ծ. վրդ. Բապուճյան
2. Վահան Զեքչենյան
3. Տեր և տիկին Վահան Ալեքսանյան

ԺԶ. Դամասկոսի հայոց թեմ

1. Տ. Ոսկան ծ. վրդ. Գալբակյան

ԺԷ. Իրաքի հայոց թեմ

1. Տ. Ասողիկ արքեպ. Ղազարյան
2. Արամ Սեթյան
3. Դոկտ. Հասրաթ Միքայելյան

ԺԸ. Հնդկաստանի հայոց թեմ (Կալկաթա)

1. Տ. Հակոբ քհն. Գյոկչյան
2. Ադամս Ներսես Մկրտիչ
3. Կարո Մարտին

ԺԹ. Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմ

1. Տ. Գարեգին եպս. Գազանճյան
2. Տեր և տիկին Կոստան Տեր-Ստեփանյան



ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Սրբալույս մեռոնի օրհնության և Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակին նվիրված հանդիսությունները Մայր Աթոռում եզրափակվեցին եպիսկոպոսական ձեռնադրությամբ:

Վեհափառ Հայրապետը հոկտեմբերի 17-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում և եպիսկոպոս ձեռնադրում Երուսաղեմի սրբոց Հակոբյանց միաբանության անդամներ տ. Կյուրեղ ծ. վրդ. Գաբիկյանին և տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանին:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվում է նոր-

Մի պահ ձեռնադրությունից

ընծաների «ընտրութիւն և ուխտադրութիւն՝ ըստ սահմանի Հայց. եկեղեցւոյ»:

Իշման ս. սեղանի առաջ նորընծաներն ուխտում են անխոտոր և անսայթաք ընթանալ հայ եկեղեցու ուղղափառ վարդապետության ճանապարհով ու հավատարիմ լինել **սրբոյ Էջմիածնի մինչև ցվախճան կենաց իւրեանց, կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց սրբոյ կաթուղիկէ Մայր Աթոռոյս, ծառայել երկիւղիւ Տեառն, յօգուտ և ի փառս անուան սրբոյ Էջմիածնի:**

շնորհում եպիսկոպոսական յոթ աստիճաններ: Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Ապա ս. պատարագը շարունակվում է Ավագ խորանի վրա, մինչև Ճաշոց գրքի ընթերցումը, որից հետո շարունակվում է ձեռնադրության կարգը:

Մայր տաճարի կամարների տակ հնչում է «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու զպէտս սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զԿիւրեղ և զԴա-

Մի պահ ձեռնադրությունից

Ապա, եպիսկոպոսացման երդումնագրի ընթերցումից հետո, նորընծաները ստորագրում են այն: Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանն ու Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը վկայում են ուխտադրությունը:

Կիրակի օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Մայր տաճարի ս. Ստեփանոսի սեղանի առաջ, Իրեն առընթերակա ունենալով տ. Նարեկ և տ. Գևորգ եպիսկոպոսներին ու բազմած Հայրապետական Աթոռի վրա, սկսում է ձեռնադրության կարգը և աղոթքով ու օրհնությամբ, ըստ Ձեռնադրության Մաշտոցի հրահանգի,

ւիթ վարդապետունս ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն» շարականը, մինչ նորընծաները ծնրադիր ու դեմքերը դարձրած դեպի հավատացյալները, հրաժարվում են աշխարհից:

Սույն կոչման շարականը կրկնվում է երեք անգամ: Ապա Վեհափառ Հայրապետը կատարում է օծման կարգը: Համապատասխան աղոթքներով ներընծաներին տրվում են եպիսկոպոսական գավազան և մատանի՝ ի նշան եկեղեցու իշխանավորի շնորհված հեղինակության:

Վեհափառ Հայրապետը համբուրում է նորապսակ սրբազանների ճակատները և, ներշնչված օրվա խորհրդով, Իր հայրական

պատգամներն ու հորդորներն է տալիս նրանց, շնորհավորում օրվա շնորհաբաշխությունը՝ շեշտելով եպիսկոպոսական իշխանության հոգևոր նշանակությունը եկեղեցու նվիրապետության մեջ ըստ առաքելական կանոնների և հայրապետահաստատ հրահանգների:

Ժամը 15-ին, ի պատիվ հայ եկեղեցու նորապսակ երկու իշխանավորների, տրվում է ճաշկերույթ, Վեհարանի սեղանատանը:

Վեհափառ Հայրապետը մի անգամ ևս շնորհավորում է նորապսակ տ. Կյուրեղ և տ. Դավիթ եպիսկոպոսներին՝ տալով նրանց եպիսկոպոսական պանակե, որպես եպիսկոպոսական իշխանության արտաքին նշան, և ցանկանում նրանց տեսնել հայ եկեղեցու ու Մայր Աթոռի նվիրյալ և լավագույն ծառայողների շարքում:

Այնուհետև Հայոց Հայրապետին ուղղած շնորհակալական և երախտագիտական որդիական ջերմ խոսք են ասում նորապսակ սրբազանները՝ վերանորոգելով իրենց ուխտը՝ աննահանջ սիրով և անմնացորդ նվիրումով ծառայելու Մայր Աթոռին, ս. Հակոբյանց վանքին, հայ եկեղեցուն ու հայ ժողովրդին, Հայոց Հայրապետի և տ. Եղիշե սրբազան պատրիարքի օրինակով, Նրանց անմիջական ղեկավարության և օրհնության ներքո:

Ընդունելությունն ավարտվում է Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:





ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԿՅՈՒՐԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԲԻԿՅԱՆ

Ավազանի անունով Գեղամ: Ծնվել է 1921 թվականին Երուսաղեմում, սեբաստացի ծանոթ մտավորական-բանասեր Կարապետ-Ազնիվ Գաբիկյանների ընտանիքի հարկի տակ:

Իր նախնական կրթությունը ստացել է Երուսաղեմի հայոց սրբոց Թարգմանչաց վարժարանում, որի ընթացքն ավարտել է 1936 թվականին: Այնուհետև հետևել է Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի եռամյա դասընթացներին:

1950 թվականին սարկավագ է ձեռնադրվել, 1951-ին՝ կուսակրոն քահանա՝ վերանվանվելով տ. Կյուրեղ աբեղա: 1954-ին ստացել է վարդապետական աստիճան:

1952 թվականին նշանակվել է սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսուչ և ուսուցիչ, պաշտոն, որը վարում է մինչև այսօր մեծ արդյունավորությամբ ու բարեխղճությամբ:

Թարգմանչաց վարժարանը նրա տեսչության օրով և նրա անդուլ ջանքերի շնորհիվ դարձավ տիպար ու օրինակելի, ինքնաբավ հայկական երկրորդական վարժարան:

Բացի կրթական գործից, տ. Կյուրեղ վարդապետը կատարել է շնորհակալ ու պատասխանատու աշխատանքներ սրբոց Հակոբյանց վանքում՝ որպես լուսահան, վերահսկիչ սուրբ Տեղյաց և սուրբ Հարության տաճարի վերանորոգությանց, ս. Աթոռի նվիրակ Հարավային և Հյուսիսային Ամերիկաներում, Տնօրեն ժողովի և սուրբ Աթոռի գանձատան հանձնաժողովի անդամ:

1967 թվականին Մայր Աթոռում ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան՝ Վեհափառ Հայրապետի շնորհաբաշխությամբ:

1976 թվականի սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 5-ը, որպես Երուսաղեմի հայոց պատրիարքության պատգամավոր, մասնակցել է ս. Էջմիածնում սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակին նվիրված հանդիսություններին:



Հոկտեմբերի 17-ին, կիրակի օրը, ձեռնադրվել է եպիսկոպոս՝ ձեռամբ Հայոց Հայրապետի:



ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԴԱՎԻԹ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՀԱԿՅԱՆ

Ավազանի անունով Գրիգոր: Ծնվել է 1935 թվականին Երուսաղեմում, սեբաստացի հավատավոր ընտանիքի հարկի տակ:

Նախնական կրթությունը ստացել է տեղի հայոց ս. Թարգմանչաց վարժարանում: 1943—1951 թվականներին սովորել է Երուսաղեմի Terra Santa վարժարանում և այնտեղ էլ ստացել իր միջնակարգ կրթությունը:



1951 թվականին ընդունվել է Երուսաղեմի հայոց սրբոց Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարան, որի դասարանական բաժինն ավարտել է 1954-ին:

Նույն թվականին սարկավագ է ձեռնադրվել՝ տ. Եղիշե արքեպ. Տերտերյանի կողմից: Իր ուսումը շարունակել է ընծայարանում 1954—1957 թվականներին և կուսակրոն քահանա է ձեռնադրվել 1957 թվականին՝ ձեռամբ տ. Տիրան արքեպ. Ներսոյանի՝ վերանվանվելով տ. Դավիթ աբեղա:

1957—1960 թվականներին նշանակվել է տեսուչ Կյուլպենկյան մատենադարանի և վանքի տպարանի, միաժամանակ ուսուցչական պաշտոն վարելով Ժառանգավորաց և Թարգմանչաց վարժարաններում:

Եղել է անդամ Տնօրեն ժողովի: 1960 թվականին նշանակվել է հոգևոր հովիվ Ամմանի և շրջակայքի հայոց և տեսուչ տեղի Հեթումյան վարժարանի:

1960 թվականին վարդապետական աստիճան է ստացել տ. Եղիշե պատրիարքից: 1961—1962 թվականներին եղել է հոգևոր հովիվ Բաղդադի հայոց և մեկ տարի էլ վարել՝ Կալկաթայի հայոց այցելու հովվի պաշտոն:

1963—1973 թվականներին պաշտոնավարել է Լիոն քաղաքում՝ որպես քաղաքի և շրջակայքի հովիվ: 1965 թվականին Մայր Աթոռում ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան ձեռամբ Վեհափառ Հայրապետի:

1973—1976 թվականներին պաշտոնավարել է որպես հոգևոր հովիվ Ծվեյցարիայի հայոց:

1976-ի հուլիսից նշանակվել է Լիոնի և շրջակայքի հայոց հոգևոր հովիվ և հայրապետական պատվիրակի փոխանորդ:

1976 թվականի հոկտեմբերի 17-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Մայր Աթոռում՝ Հայոց Հայրապետի շնորհաբաշխությամբ:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հայ եկեղեցու նորապսակ իշխանավորներին՝ տ. Կյուրեղ և տ. Դավիթ եպիսկոպոսներին՝ մաղթելով, որ նրանք հետայսու ևս անմնացորդ նվիրումով ծառայեն Հայոց Հայրապետի օրհնության ներքո՝ ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ս. Հակոբյանց առաքելական Աթոռի, Հայաստանյայց եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի՝ արդարացնելով իրենց վրա դրված Ամենայն Հայոց Հայրապետի և ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի հույսերը:



«ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՐԴԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 28-ից 30-ը Մոսկվայում տեղի ունեցավ «Կրոնական գործիչները հանուն կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների» հաստատման թեմայով համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքների երկրորդ փուլի ճատաշրջանը:

Հայաստանյայց առաքելական եկեղեցու կողմից այդ աշխատանքներին մասնակցեց ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի փոխ-տեսուչ տ. Անանիա վարդապետ Արաբաջյանը:

Կոնֆերանսի նախապատրաստական կոմիտեի նիստերին իրենց մասնակցությունը բերեցին աշխարհի տարբեր ծայրերից եկած շուրջ 50 պատվիրակներ:

Կոմիտեն, որի նախագահն է ռուս պրավոսլավ եկեղեցու ներկայացուցիչ, նրա արտաքին հարաբերությունների բաժնի վարիչ Յուվենալի միտրոպոլիտը, հատուկ խմբերի բաժանեց այն հրատապ խնդիրները, որոնք պետք է դառնան գալիք կոնֆերանսի գլխավոր հարցերը: Այդ խմբերն են.

ա) Խաղաղության գործի համար միջկրոնական համագործակցության հիմքերը.

բ) Միջազգային լարվածության թուլացում.

գ) հակամարտությունների և անհասկացողությունների բնագավառներ.

դ) ՄԱԿ-ի և նրա հաստատությունների դերը խաղաղության հաստատման գործում.

ե) Զինաթափման խնդիրներ.

զ) Կրոնական մոտեցում մարդկային անձնավորությանը.

է) Մարդու իրավունքները.

ը) Ժողովուրդների տեղաբաշխման, գաղթի և շրջապատող միջավայրի խնդիրներ:

Ժողովի մասնակիցներն ուրախությամբ ընդունեցին այն լուրը, որ որոշ եկեղեցիների հոգևոր պետեր, ելնելով խաղաղության պահպանման և ամրապնդման ցանկությունից, իրենց վրա են վերցրել առաջիկա կոնֆերանսի կազմակերպման և անցկացման պատասխանատվությունը՝ որպես անդամներ նրա պատվավոր նախագահության:

Պատվավոր նախագահության անդամ է նաև Ամենայն Հայոց Հայրապետը:

Կոմիտեն որոշեց 1977 թվականի մարտի 15-ից 17-ը Մոսկվայում անցկացնել նախապատրաստական կոմիտեի հաջորդ՝ վերջին նստաշրջանը: Իսկ Խաղաղության համաշխարհային կոնֆերանսը կգումարվի դարձյալ Մոսկվայում, նույն թվականի հունիսի 6-ից 10-ը:

Նիստերի ավարտից հետո «Ուկրաինա» հյուրանոցի մեծ դահլիճում տեղի ունեցավ հարցազրույց կոմիտեի նիստերի մասնակից պատվիրակների և միութենական ու օտարերկրյա թղթակիցների միջև:

Հարցազրույցից հետո Մոսկվայի և համայն Ռուսիո Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի կողմից ժողովի մասնակիցների պատվին տրվեց ճաշկերույթ:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՄԵՌՈՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎՍ
(Թովմաս Ագուլեցու անտիպ տաղերից)

1969 թվականին, Էջմիածնի Մայր Աթոռում տեղի ունեցած մեռոնօրհնեքի առթիվ, մենք հրատարակել էինք ԺԸ դարի առաջին կեսի տաղերգու Թովմաս Ագուլեցու մի երկարաշունչ բանաստեղծությունը՝ «Բան ոտնաչափ վասն սրբալոյս մեռոնի», հանելով Երևանի պետական Մատենադարանի № 25 ձեռագրից[1]: Հեղինակի այս գործը ուներ և իր հիշատակարանը, որի համաձայն շարադրված էր 1729 թվականին, հետևաբար՝ Կարապետ Ուլնեցու կաթողիկոսության օրով կատարված մեռոնօրհնեքի առթիվ:

Մեր այդ հրատարակությունից հետո Նորայր եպս. Պողարյանի ցուցակի միջոցով իրազեկ էինք դարձել, որ Երուսաղեմի № 536 ձեռագիրը պարունակում է Թովմաս Ագուլեցու գրչին պատկանող մի շարք անտիպ ուրիշ գործեր, որոնց թվում մեռոնին նվիրված մի այլ գովերգություն՝ «Տաղ ի վերայ սրբալոյս մեռոնին»[2]: Ուստի, հետամուտ լինելով հավաքելու Թովմաս Ագուլեցու բոլոր տաղերը, վերջերս դիմել էինք Ծահեարքեպ. Աճեմյանին, որը Երուսաղեմից սիրահոժար կերպով մեզ ուղարկեց № 536 ձեռագրի այդ նյութերի լուսապատճենները, և դրանով այսօր հնարավորություն ունենք հրատարակության հանձնելու հեղինակի այս նորահայտ մեռոներգությունը ևս՝ Էջմիածնում տեղի ունեցող նոր մեռոնօրհնեքի (1976 թ. սեպտ. 26) առթիվ:

Ձեռագրում ոչ մի տվյալ չկա այն մասին, թե հեղինակը ո՞ր թվականին է գրել իր այս տաղը:

Բնագիրը հրատարակում ենք նույնությամբ, ինչպես որ է ձեռագրում: Որպես գրչական վրեպ՝ ուղղել ենք միայն մեկ բառ. **զուդ**-ը դարձրել ենք **զուտ** (տուն 11, տող 3). իսկ երկու բառ վերականգնել ենք՝ բաց թողնված տառի լրացմամբ. **կամեալկա[զ]մեալ** (տուն 1, տող 1) և **ճանիճա[յ]նի** (տուն 7, տող 3): Մեկ բառ համարում ենք անճանոթ. **ծայլեցեալ** (տուն 8, տող 3): Անճանոթի կերպարանք ունի նաև **քոց** բառը, որ գտնվում է հետևյալ նախադասության մեջ.

Քոց կամակի յօրինակի ընթացեալ (տուն 6, տող 3):

Բայց գտնում ենք, որ **քոց**-ը անճանոթ բառ չէ, այլ պարզապես **քո** ստացական դերանվան հոգնակի տրականն է՝ «քոնեռին» (քո [հավատացյալ]ներին), արևմտյան հայերենով՝ «քուկիններուդ»: Դա հասկանալի է դառնում հաջորդող բառերի լուսաբանմամբ: **Կամակ** նշանակում է «ախորժելի իր», «հիվանդի սրտի ուզած ուտելի-

[1] **Հ. Ս. Անասյան**, Թովմաս Ագուլեցին և նրա մեռոներգությունը, «Էջմիածին» (ամս.), 1969, № Թ և № Ժ—ԺԱ:

[2] **Նորայր եպս. Պողարյան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 553—554:

քը»[3]. **օրինակ** նշանակում է «նմանություն»[4] և ըստ այսմ՝ **յօրինակի** նշանակում է «ըստ նմանության», «որպես». իսկ **ընթացեալ**՝ «տարվելով-բաշխվելով»: Ուրեմն՝ նախադասության թարգմանությունը կլինի այսպես. «Որպես կամակ՝ տարվելով-բաշխվելով քո [հավատացյալ]ներին...»:

Հեղինակը մի քանի տեղ բացառական հոլովի **ի** նախդիրը կրճատել է՝ հարմարվելու համար տաղաչափության պահանջներին. **չարեաց, վերին շնորհաց, հրեշտակաց** և **քէն փխ. ի չարեաց, ի վերին շնորհաց, ի հրեշտակաց** և **ի քէն** (տուն 2, տող 3. տուն 8, տող 1 և 2. տուն 10, տող 4):

ՏԱՂ Ի ՎԵՐԱՑ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԵՌՈՆԻՆ Ի ՆՈՅՆ ԹՈՎՄԱՍ ՏԱՌԱՊԵԱԼ ՔԱՀԱՆԱՅԷ (Ձեռ. № 536)

1. Թագ լուսեղէն կա[զ]մեալ հրեղէն հրաշացեալ,
Ծընունդ տղայոց պատճառ շնորհաց սուրբ մեռոն.
Իւղ նիւթեղէն բան յանեղէն աքանչացեալ,
Հիմընն Հայոց հեղեալ յերկնից սուրբ մեռոն:

2. Որակդ է իւղ ծառ բազմաճիւղ բարձրացեալ,
Դեղ ներգործող մեղաց սրբիրող քաղցրացեալ,
Դիւաց վանող չարեաց փրկող զօրացեալ,
Մարդկանց ծընող շնորհաց բաշխող սուրբ մեռոն:

3. Վիրաց դու դեղ զարմանագեղ գանձ բացեալ,
Ձէնդ զօրեղ մանկանց նորեղ սանձ կացեալ,
Իբր ըզկանթեղ մեզ լուսազեղ կազմեցեալ,
Պայծառ բիւրեղ շնորհօք համեղ սուրբ մեռոն:

4. Մայր ամենից քրիստոնէից ծանուցեալ,
Թիկունք վեհից թագ արքայից կացուցեալ,
Ծաղկանց մեծից շնորհօք յերկնից մաճուցեալ,
Տեառն բոլորից դու կամակից սուրբ մեռոն:

5. Այս աննըման զըմուռ շուշան գերացեալ,
Խունկ պաղատան հրիկ պատուական զօրացեալ,
Կինամոնն այն ընդ հալուէին եռացեալ,
Իւղ սրբրազան կենաց մարդկան սուրբ մեռոն:

6. Սէր յոգնակի կեանք բազմակի քեւ լըցեալ,
Անմահ այգի դրախտ յայտնակի դու բացեալ,
Քոց կամակի յօրինակի ընթացեալ,
Առնումք հանդէս յաղթանակի սուրբ մեռոն:

7. Իւծման կերպիւ անման ոճիւ լիացեալ,
Հոգւոյն շնորհիւ կենաց բանիւ միացեալ,
Վերնոց ձա[յ]նիւ երգարանիւ հիացեալ,
Դու իւղ ազնիւ Տեառըն պատիւ սուրբ մեռոն:

8. Բախման կենաց վերին շնորհաց փայլեցեալ,
Եւ հրեշտակաց հրեղէն զօրաց մայլեցեալ,
Անհուն բարեաց հրաշագործաց ծայլեցեալ,
Վանիչ դիւաց հալիչ մեղաց սուրբ մեռոն:

9. Իբր ըզձագունք մատաղ մանկունք ծընեցեալ,
Անգին ակունք հօրն որդեկունք գըրեցեալ,
Արք հրմտագունք սուրբք իմաստունք քեւ լըցեալ,
Ամենեցուն բոլոր թիկունք սուրբ մեռոն:

10. Ցաւոց հընար յոյժ օգտակար յայտնեցեալ,
Որք են տըկար քեւ առնուն կար զօրացեալ,
Որք գան յօժար խորհրդաբար օծեցեալ,
Առնուն քէն ճար լինին արդար սուրբ մեռոն:

11. Էին աննիւթ հոգւոյն հրանիւթ դու կեցեալ,
Ըզմիտք մեր բուր լեսանի քոյդ սըրեցեալ,
Ընդ ծաղկանց նիւթ շնորհք սուրբ եւ զուտ ճըմլեցեալ,
Առ Թովմայս փուտ շարժեալ ի գութ սուրբ մեռոն:

[3] Հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 1039: **Սահակ վրդ. Ամատունի**, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912. էջ 326: **Հր. Աճառյան**, Հայերէն գաւառական բառարան (Էմինյան ազգագրական ժողովածու, հտ. Թ), Թիֆլիս, 1913, էջ 542:

[4] «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Բ, Վենետիկ, 1837, էջ 1034:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Անգլիայի հայրապետական պատվիրակ ու Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ տ. Ներսես եպս. Պոզապալյանը և քարոզում «Ապաւինեցաք ի խաչ քո» շարականի բնաբանով, վեր հանելով խաչի խորհրդի կարևորությունը մեղավորի փրկագործության ճանապարհի վրա:

*
* *

Հոկտեմբերի 9-ին, շաբաթ.—Սրբոց Թարգմանչաց վարդապետացն մերոց՝ Մեսրոպայ, Եղիշէի, Մովսիսի Քերթողին, Դաւթի Անյաղթ փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներսիսի Կլայեցւոյն.

Այսօր Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող տ. Կյուրեղ ծ. վրդ. Գաբիկյանը և քարոզում «Մի երկնչիր հօտ փոքրիկ» (Ղուկ. ԺԲ 32) բնաբանով:

Ս. պատարագին ներկա են լինում Մայր Աթոռի միաբանությունն ու սարկավագաց դասը՝ լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսի գլխավորությամբ:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ հայ մշակույթի հին և նոր վաստակավորների հիշատակին:

*
* *

Հոկտեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց միացյալ թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանն ու քարոզում «Ժողովուրդի մը գիտակցությունը իր նշանագրերուն մեջ կկայանա» Ֆրանց Վերֆելի խոսքի բնաբանով:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգիստ՝ ի հիշատակ 1915 թ. Հաճնի հերոսամարտի զոհվածների:

Այսօր լրանում է նաև վեհամայր Սիրանույշ Պալճյանի մահվան երկրորդ տարելիցը: Այս առթիվ ևս կատարվում է հոգեհանգստյան պաշտոն:

*
* *

Նույն օրը, ս. պատարագից հետո, կատարվեց բացումը Վեհարանի այգում Վեհամոր հիշատակին կանգնեցված աղբյուր-հուշարձանի, որն ունի հետևյալ արձանագրությունը. «Ի ՅԻՇԱՏԱԿ ՎԵՀԱՄԱՅՐ ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱԼՃԵԱՆԻ 1884—1974, ՊԷՏՐՈՒԹԻ ԿՐՕՆԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ԿՈՂՄԻՑ»:

*
* *

Հոկտեմբերի 18-ին, երկուշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին են այցելում Եթովպացի մի խումբ զբոսաշրջիկներ և աջահամբույրով ստանում Նորին Սրբության օրհնանքը:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների սրահում Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի մասին բանախոսում է տ. Կյուրեղ եպս. Գաբիկյանը և մոգական լապտերով ցուցադրում Երուսաղեմի հայոց պատմական սրբավայրերի նկարները, ինչպես նաև հայոց վանքում պահվող ձեռագրերի և եկեղեցական արվեստի ընտիր նմուշներ:

*
* *

Հոկտեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20.30-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, տ. Դավիթ եպս. Սահակյանը բանախոսում է «Եկեղեցին այսօրվա աշխարհին մեջ» թեմայի շուրջ: Վերջում սրբազան հայրը խոսում է նաև Հայաստանյայց եկեղեցու մասին՝ ծանրանալով միաժամանակ Ֆրանսիայում և Շվեյցարիայում գտնվող հայ եկեղեցիների գործունեության վրա:

*
* *

Հոկտեմբերի 21-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Մայր Աթոռին առընթեր Իրավագիտական հանձնաժողովի հերթական նիստը:

*
* *

Հոկտեմբերի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

*
* *

Հոկտեմբերի 31-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաքաջյանը և քարոզում «Եւ ծանիցուք... եւ եկեսցէ մեզ իբրեւ զանձրեւ կանուխ և զանագան յերկրի» (Ովսէէ Զ 3) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 2-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Սույն ժողովին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, ներկա է լինում նաև Արևմտյան Գերմանիայի հոգևոր հովիվ և Մայր Աթոռի երիտասարդ միաբան տ. Գարեգին աբղ. Ներսիսյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում:

Արևմտյան Գերմանիան մտնում է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակության հոգևոր իրավասության ներքո:

Տ. Գարեգին աբեղան հատենի ժողովի հանգամանորեն զեկուցում է Արևմտյան Գերմանիայի ինը քաղաքների, այդ թվում՝ մանավանդ Քյոլնի, Մյունխենի, Բեռլինի, Համբուրգի, Ան-Մայնի Ֆրանկֆուրտի հայ համայնքների գործունեության մասին: Այսօր Արևմտյան Գերմանիայի ինը քաղաքներում ապրում է շուրջ յոթ հազար հայություն:

Գերագույն հոգևոր խորհուրդն իր գոհունակությունն է արձանագրում տ. Գարեգին աբղ. Ներսիսյանի այս առթիվ տված զեկուցման համար:

*
* *

Նոյեմբերի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Գարեգին աբղ. Ներսիսյանը և քարոզում «Հաւատք քո կեցուսցին զքեզ» (Մարկոս Ժ 52) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 14-ին, կիրակի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց և 1975 թվականի հոգևոր ճեմարանի շրջանավարտ Հակոբ սրկ. Գըլընճյանին կուսակրոն քահանա ձեռնադրեց լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, տեղի ունեցավ նորընծայի կոչման արարողությունը և ուղղափառ դավանության հրապարակային քննությունը:

Կիրակի օրը, ս. պատարագի ընթացքում, կատարվեց նորընծայի ձեռնադրության և կոչման, իսկ երեկոյան՝ վեղարի տվչության կարգը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը և Գերագույն հոգևոր խորհրդի անդամներին:

Այդ օրը լրանում էր նաև տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի և տ. Մամբրե վրդ. Մարգարյանի քահանայական ձեռնադրության 20-ամյակը: Այս ուրախ առիթով Վեհափառ Հայրապետը ջերմորեն շնորհավորում է Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսի և փոխ-լուսարարապետ տ. Մամբրե վարդապետի քահանայական ձեռնադրության տարեդարձը և նրանց մաղթում քաջառողջություն ու, Իր բարձր ուշադրությանն արժանացնելով նրանց աթոռանվեր գործունեությունը, տ. Հուսիկ եպիսկոպոսին նվիրում է եպիսկոպոսական մի թանկագին մատանի, իսկ տ. Մամբրե վարդապետին՝ ոսկյա մի ժամացույց:

Տ. Հուսիկ եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին ուղղյալ որդիական շնորհակալական և երախտագիտական ջերմ խոսք է ասում՝ իր և տ. Մամբրե վարդապետի կողմից:

Մի պահ ձեռնադրությունից

Վեհափառ Հայրապետը շնորհավորում է նաև նորապսակ տ. Հակոբ կուսակրոն քահանայի ձեռնադրությունը և մաղթում, որ նա Տիրոջ Այգում լինի արժանավոր սպասավոր, «մշակ առանց ամօթոյ»:

Տ. Հակոբ քհն. Գըլընճյանը ևս հանդես է գալիս իր հոգևոր Հոր և Պետին ուղղյալ որդիական երախտագիտական ու շնորհակալական ջերմ խոսքով:

*
* *

Նոյեմբերի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 20-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որտեղ Նյու-Յորքից Մայր Աթոռ ժամանած բարեշնորհ Վազգեն սրկ. Ասատրյանը, որը հետևում է հոգևոր ճեմարանում հայագիտական և հայրենագիտական առարկաների ուսուցմանը, դասախոսություն է կարդում «Միստիկականությունը եկեղեցու կյանքում» թեմայով:

Դասախոսությանը ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նոյեմբերի 19-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Նոյեմբերի 21-ին, կիրակի.—Ընծայումն ս. Աստուածածնի. Բարեկենդան յիսնակի պահոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և քարոզում «Երանի ամենեցուն, ոյք երկնչին ի Տեառնէ եւ գնան ի ճանապարհս նորա» (Սաղմ. ՃԻԵ) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա է լինում նաև Վեհափառ Հայրապետը:



Տ. ՀԱԿՈԲ ԱԲԵՂԱ ԳԼԼԸՆՃՅԱՆ

Ավազանի անունով նույնպես Հակոբ: Ծնվել է 1955 թվականին Քեսապ (Սիրիա) քաղաքում: Սովորել է տեղի Ուսումնասիրաց միացյալ վարժարանում: 1968—1972 թվականներին սովորել է Անթիլիասի դրպրեվանքում: 1973 թվականին ընդունվել է Էջմիածնի հոգևոր ճեմարան, որի լսարանական բաժինն ավարտել է 1975 թվականին՝ փայլուն հաջողությամբ: Ավարտաճառի թեման է եղել՝ «Եկեղեցական կանոններն ու պաշտամունքը», որը պաշտպանել է 1976 թվականի մայիսին «գերազանց» գնահատականով:

1974 թվականի դեկտեմբերին սարկավագ է ձեռնադրվել տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի ձեռամբ և դարձել Մայր Աթոռ ս. Էջմիածնի միաբան:

1975 թվականից սկսած աշխատում է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

1976 թվականի նոյեմբերի 14-ին, կիրակի օրը, Հակոբ սրկ. Գլլընճյանը կուսակրոն քահանա ձեռնադրվեց Մայր տաճարում՝ ձեռամբ լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծա տ. Հակոբ աբղ. Գլլընճյանին և նրան մաղթում հաջողություն՝ իր ընտրած և սիրած հոգևոր ասպարեզի ծառայության մեջ՝ ի մխիթարություն Վեհափառ Հայրապետի:





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի խոսքը Վեհարանում՝ Իր գահակալության քսանամյակին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ 3
ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Սարգիս Գասպարյանի ողջույնի խոսքը 9
ՍՍՀՄ Մինիստրների սովետին առընթեր կրոնների գործերի խորհրդի նախագահ պրն. Վլադիմիր Կուրոյեդովի շնորհավորական հեռագիրը 11
Գերագույն հոգևոր խորհրդի զեկուցագիրը Վեհափառ Հայրապետի քսանամյա գործունեության մասին 12
Հաղորդագրություն 27
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ԾԱՀԲԱԶՅԱՆ
Հանդիսություններ Մայր Աթոռում՝ սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության քսանամյակի առիթով . . . 31
Օրհնություն սրբալույս մեռոնի 38
Հոբելյանական հանդիսավոր նիստ 47
Պաշտոնական ընդունելություն 75
Այց Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան 81
Հոբելյանական խաչքարի բացում Վեհարանի բակում 84
Եպիսկոպոսաց խորհրդակցական ժողովի գումարում Մայր Աթոռում . . 86
Երևանի ս. Սարգիս վերակառուցված առաջնորդանիստ եկեղեցու նավակատիքն ու օծումը 89
1976 թվականին սրբալույս մեռոնի օրհնության և Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի հանդիսություններին մասնակցող պատգամավորների ցուցակ 98
Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր տաճարում 100
Գերաշնորհ տ. Կյուրեղ եպիսկոպոս Գաբիկյան 103
Գերաշնորհ տ. Դավիթ եպիսկոպոս Սահակյան 104
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ—«Կրոնական գործիչները հանուն կայուն խաղաղության, զինաթափման և ժողովուրդների միջև արդար հարաբերությունների» հաստատման թեմայով համաշխարհային կոնֆերանսի նախապատրաստական կոմիտեի աշխատանքները Մոսկվայում 105
Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ—Մի նորահայտ մեռոներգություն ևս 106
ՄԱՑՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 108
Տ. Հակոբ աբեղա Գալլանճյան 111

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 19.10.76 թ., ստորագրված է տպագրության 7.12.1976 թ.:
Տպագրական 7 մամուլ + 10 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 816:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1976 թ.

ՀԱՅԿ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ